



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (72)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

2 (72), 2017

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

*Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)*

Ալեքսանդր Կորնիլով

*Նիժնի Նովգորոդի Ն.Բ. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)*

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բարկեն Վարդանյան

*«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան (համակարգող)*

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

ՀՀ վարչապետ, տ.գ.դ.

Հրանտ Զակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

*IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան,
ս.գ.թ.*

Մեյրան Օհանյան

Պահեստի գեներալ-գնդապետ

Մերգել Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 2 (72), 2017թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	Ռոման Կարապետյան Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ ընդլայնվող համագործակցությունը 5
<i>Գլխավոր խմբագրի</i> <i>տեղակալ</i> Վահագն Ազյան	Էրիկ Դավթյան Էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգությունը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության համատեքստում 18
<i>Պատասխանատու</i> <i>խմբագիր</i> Խոնարհիկ Քարառլյանյան	Հայկարամ Նահապետյան Հայ-թուրքական «պատմական երկխոսության» հնարքը. ի՞նչ նպատակ է հետապնդում Անկարան 33
<i>Պատասխանատու</i> <i>քարտուղար</i> Լուսինե Բաղրամյան	Թաթուլ Մանասերյան Պատերազմի տնտեսագիտություն. պետության առաջնահերթությունները 55
Արեստակես Միմավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Վահրամ Հովյան	Միեր Մահակյան Ռուսաստանը վերադառնում է համաշխարհային մեծ քաղաքականություն 66
	Կարինե Հակոբյան Բնստիտուցիոնալ փոխակերպումները հետարդիականության դարաշրջանում 83
	Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Կուրդինյան Օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացումը և ձեռքբերումը մասնավոր հատվածից 95
	Ղերենիկ Մելիքեան Ատրպատականի հայոց առաջնորդ Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեանի գործունեությունը 1914-1918թթ. 112
	Հուշագիր հեղինակին 123

ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ ԵՌԱԿՈՂՄ ԸՆԴԼԱՅՆՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռոման Կարապետյան՝

Բանալի բառեր՝ Կասպյան-սևծովյան տարածաշրջան, Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան, տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներ, ՀՀ անվտանգություն:

Հարևան երկրների հետ փոխհարաբերությունների կարգավորման և զարգացման հարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգի առաջնահերթություններից է: Երկրի արտաքին քաղաքական գերակայությունների շարքին են դասվում նաև Անդրկովկասի տարածաշրջանում խաղաղության հաստատման, համագործակցության մթնոլորտի և կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովման հիմնահարցերը: Այս մարտահրավերների իրագործման ճանապարհին խոչընդոտները բազմաթիվ են: ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանում առաջ եկած հիմնական մարտահրավերները կապված էին ակտիվ փուլ մտած տարածքային հակամարտությունների հետ: Արցախյան, Աբխազիայի, Հարավային Օսիայի հիմնախնդիրների և դրանց շուրջ դիրքորոշումների բազմազանության հետևանքով դժվարություններ են առաջանում ինչպես տարածաշրջանում փոխվստահության մթնոլորտի ձևավորման, այնպես էլ ուժի տարածաշրջանային և միջազգային կենտրոնների հետ փոխհարաբերությունների զարգացման առումներով: Մյուս կողմից էլ, արտաքին քաղաքական և տնտեսական գործընկերների ընտրության հարցում տարածաշրջանի երկրները ցուցաբերում են տարբերակվող մոտեցումներ: Հայաստանի պարագայում արցախյան հիմնախնդրի առկայությունը ստիպում է առաջնային հարթության վրա դնել երկրի անվտանգության հարցը. Հայաստանի Հանրապետությունը հետխորհրդային տարածքի երկրների,

¹ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, «Լորվանք» ԳԿՀ խորհրդակալ:

մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցության շրջանակներում է տեսնում երկրի անվտանգության համար բավարար պայմանների ապահովումը: Անվտանգության հարցը հիմնային նշանակություն ունի նաև հարևան Վրաստանի համար, սակայն Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններում Ռուսաստանի Դաշնության անմիջական մասնակցությունը ստիպեց վերջինիս անվտանգության երաշխիքներ փնտրել Արևմուտքում՝ ի դեմս եվրոպական երկրների և ՆԱՏՕ-ի [1, 28-32]:

Հարավային Կովկասում առկա խնդիրների, հատկապես Հայաստանի և Վրաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների ու նրանց միջև փոխհարաբերությունների վերաբերյալ լավագույն ձևակերպումներից մեկը տալիս է Հարավային Կովկասի, հետխորհրդային տարածքի ու Մերձավոր Արևելքի հարցերով ամերիկացի հետազոտող, «Լինքս» հետազոտական-վերլուծական կենտրոնի տնօրեն Դենիս Սամուրը. «Հարավային Կովկասում առաջացավ մեծ ճեղք, և Հայաստանն ու Վրաստանը մնացին դրա տարբեր կողմերում: Հայաստանը շրջափակման պայմաններում լավ է գիտակցում Վրաստանի տարանցիկ նշանակությունը, իսկ Վրաստանն էլ, իր տարածքում ունենալով մեծաթիվ հայ համայնք, չի կարող ապահովել ներքին խաղաղություն, եթե լինեն լարված հարաբերություններ Հայաստանի հետ: Եվ այս միտումն ակնհայտ երևում է ոչ միայն երկկողմ փոխհարաբերություններում, այլ նաև տարածաշրջանային համագործակցության ծրագրերում երկու երկրների մասնակցության գործընթացում» [2, 37]: Խոսքերի հեղինակն ակնհայտ ակնարկում է, որ, թեպետ Հայաստանն ու Վրաստանն ունեն արտաքին քաղաքական կողմնորոշումներում սկզբունքային տարբերություններ, նրանց զսպում և հակակշռում են միմյանցից տնտեսական ու քաղաքական կախվածության որոշ տարրեր:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո Թուրքիան առաջիններից մեկը փորձեց լրացնել այն քաղաքական բացը, որն առաջացել էր Հարավային Կովկասում: Թուրքիան, որ նույնիսկ ԽՍՀՄ գոյության տարիներին չէր հրաժարվում Ադրբեջանի հետ ուղիղ կապ հաստատելու գաղափարից, չէր կարող չօգտվել ընձեռված հնարավորությունից: Տարածաշրջանում ամրապնդվելու համար մղվող պայքարին հիմնականում մասնակցում էին Թուրքիան և Ռուսաստանը: Իսկ Իրանը, ունենալով մեծ հետաքրքրու-

թյուններ տարածաշրջանում, արևմտյան պատժամիջոցների առկայության պայմաններում քիչ հնարավորություններ ունենալով դրանք իրագործելու: Այստեղ տեղին է հիշել նախկին ԽՍՀՄ երկրների հետ ԱՄՆ ռազմավարության մշակող Սթրոուբ Թելբորթի՝ Անդրկովկասի երկրների մասին 1998թ. Կոնգրեսում ունեցած ելույթի հետևյալ հատվածը. «Մենք շարունակում ենք տարածաշրջանի երկրներին հետ պահել Իրանի հետ սերտ կապեր զարգացնելուց: Ավելին, մենք թույլ չենք տա տարածաշրջանի որևէ երկրի այնտեղ քաղաքական կամ տնտեսական հեգեմոն դիրքեր զբաղեցնել: Մենք կշարունակենք աշխատել Կովկասի բոլոր երկրների հետ, որպեսզի կանխենք Իրանի ազդեցության աճը տարածաշրջանում» [3]:

Արևմտյան երկրները, հատկապես ԱՄՆ-ը, օգնում էին Թուրքիային Անդրկովկասը Ռուսաստանից «կտրելու» հարցում: Դրա առաջին խոշոր արդյունքը գրանցվեց արդեն 1997թ., երբ Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի և Մոլդովայի մասնակցությամբ ձևավորվեց ՎՈւԱՄ-ը, որը պետք է ժամանակի ընթացքում հակակշռեր ռուսական ազդեցությամբ հետխորհրդային տարածքում ձևավորված կառույցներին: Կառույցի ձևավորմամբ նոր փուլ թևակոխեց նաև վրաց-ադրբեջանական համագործակցությունը:

Ադրբեջանը Թուրքիայի համար կարևորվում է նաև Միջին Ասիայի թուրքալեզու երկրների հետ կապվելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ, ադրբեջանական նավթն ու գազն իր երկրի տարածքով դեպի Եվրոպա արտահանելով՝ Թուրքիան ձեռք է բերում տնտեսական և քաղաքական հզոր գործիք: Թուրքական բարեկամ երկրի հետ Իրանի վրայով կապ հաստատել հնարավոր չէր օբյեկտիվ պատճառներով. Իրանն ու Թուրքիան գտնվում են չհայտարարված պայքարի մեջ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ մահմեդական աշխարհում հեգեմոնիայի համար: Արցախյան պատերազմով, իսկ հետո արցախյան հիմնախնդրով պայմանավորված՝ առաջացել էր դիվանագիտական վակուում հայ-թուրքական հարաբերություններում, ուստի հետզհետե բացառվում էր նաև Հայաստանի տարբերակը: Թեև 1990-ականներին Թուրքիան առաջարկում էր Հայաստանին հենց իր տարածքով զարգացնել Արևելք-Արևմուտք էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության ծրագրերը, իսկ դրա գինը պետք է լիներ Արցախը:

Այս պայմաններում Թուրքիայի արտաքին քաղաքականության

մեջ առաջին պլան մղվեց Անկարա-Թբիլիսի-Բաքու եռակողմ ձևաչափով համագործակցության զարգացումը: Այս համագործակցության կայացման գործընթացն սկզբից նեթ դրվեց տնտեսական հիմքերի վրա: Տնտեսական ուղղությունն ընդգրկում էր երկու հիմնական մեխանիզմ՝ էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության ծրագրեր: 1993թ. հուլիսին Անկարայում թուրք-վրացական տրանսպորտային հանձնաժողովի քննարկման ժամանակ առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց Կարա-Թբիլիսի երկաթգծի կառուցման գաղափարը [4]: 2005թ. մայիսի 25-ին Բաքվում երեք երկրների նախագահները ստորագրեցին Կարա-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցման մտադրության վերաբերյալ հուշագիր [5]: Իրականում այս երկաթգիծն անցնում է ոչ թե Թբիլիսիով, այլ Ախալքալաքով, իսկ անվան ընտրությունը կատարվել է դրա տարածաշրջանային նշանակությունը շեշտադրելու համար: Հայաստանն առաջարկում էր վերանորոգել և շահագործել Կարա-Գյումրի երկաթգիծը, իսկ այնտեղից արդեն գործում է Գյումրի-Թբիլիսի երկաթուղին: Այս հարցով Թուրքիայի հետ երկխոսության գործում պաշտոնական Երևանը միշտ ակնկալել է Թբիլիսիի աջակցությունը, հատկապես եթե հաշվի առնենք, որ Կարա-Գյումրի երկաթգիծը սկզբնական շրջանում ներգրավված էր ՏՐԱՍԵԿԱ (*TRACECA-Transport Corridor to Europe-Caucasus-Asia*) ծրագրի հիմնական երկաթուղիում [6]: Հաշվի առնելով այն, որ Կարա-Գյումրի երկաթգիծն այն եզակի գործոններից էր, որը կարող էր ստիպել Թուրքիային դիտարկել Հայաստանի հետ հարաբերությունների կանոնակարգման հնարավորությունը, Բաքու-Թբիլիսի-Կարա երկաթգծի բացումը կարող է խորացնել հայ-թուրքական առձակատումը: Պաշտոնական Երևանն զգուշանում է նաև, որ թուրք-վրացադրբեջանական համագործակցության զարգացումն արվում է Հայաստանի շահերի հաշվին: ՏՐԱՍԵԿԱ ծրագիրն ունի նաև հսկայական քաղաքական նշանակություն, ուստի ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ Վրաստանը մտադիր չէ հանուն Հայաստանի շահերի կորցնել քաղաքական և տնտեսական լծակներ ձեռք բերելու իր հնարավորությունը: 1998թ. ամրագրվեց ՏՐԱՍԵԿԱ ծրագրի իրավական կարգավիճակը, երբ տարածաշրջանի 12 երկրներ ստորագրեցին «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման վերաբերյալ հիմնական բազմակողմ համաձայնագիրը» [7]:

Անդրկովկասի երկրների միջև համագործակցության հեռանկարների առումով Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեն լավատես էր, նա նաև բարձր էր գնահատում Վրաստանի դերը Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների բարելավման գործընթացում: Այս առումով հատկանշական է 1999թ. նոյեմբերի 25-ին Վրաստանի կառավարության նիստում վերջինիս ելույթը. «Վրաստանին եզակի դեր է տրված Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները կարգավորելու գործում: Մենք պետք է տարածաշրջանում Հայաստանի մասնակցությամբ այնպիսի ծրագրեր մշակենք, որոնք կընդգրկեն ոչ միայն քաղաքական ու դիվանագիտական, այլև տնտեսական ձևաչափեր: Պետք է ձգտենք այնպես անել, որ Հայաստանն իրեն օտարացած չզգա տարածաշրջանային ծրագրերից» [8]: Ինչպես արդեն վերը շեշտեցինք, տարածաշրջանային երկրների հետ հարաբերություններում հավասարակշռությունը պահելու հարցում պաշտոնական Թբիլիսին, արարողակարգային բնույթի հայտարարություններից բացի, ոչինչ չի արել: Մյուս կողմից՝ չենք կարծում, թե կարելի է մեղադրել Վրաստանի քաղաքական ղեկավարներին սեփական երկրի տնտեսական շահերը հարևան երկրի շահերից վեր դասելու համար:

Թեև եռակողմ համագործակցության հիմքերը դրվել էին Վրաստանում Է.Շևարդնաձեի նախագահության շրջանում, տարածաշրջանում էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության առաջին եռակողմ ծրագրերն իրականություն դարձան Վրաստանի նախագահ Մ.Սաակաշվիլու նախագահության տարիներին: «Վարդերի հեղափոխությունից» կարճ ժամանակահատված անց Վրաստանը զգալիորեն ավելացրեց այդ ծրագրերի իրագործմանն ուղղված ջանքերը: Մինչդեռ Մ.Սաակաշվիլին միշտ չէ, որ աչքի է ընկել հակառուսական կեցվածքով և բացահայտ առավելություն տվել տարածաշրջանի թյուրքական երկրների հետ համագործակցությանը: Այդ է վկայում նախընտրական շրջանում 2003թ. դեկտեմբերի 4-ին «ԻՏԱՌ-ՏԱՍՍ» լրատվական գործակալությանը նրա տված հարցազրույցը: Նա ասում է, որ իր առաջին այցը կատարելու է Մոսկվա՝ վճռականություն հայտնելով զարգացնելու ՌԴ-ի հետ փոխհամագործակցությունը բոլոր ուղղություններով՝ սկսած անվտանգությունից մինչև տնտեսական համագործակցության ընդլայնումը: Նա ընդգծում է նաև, որ Վրաստանի անվտանգության ապահով-

ման երաշխիքները գտնվում են Մոսկվայում և ԱՊՀ տնտեսական կառույցներին ինտեգրվելու մեջ, իսկ ՎՈւԱՄ հետագա զարգացման հեռանկարներ չի տեսնում [9]:

Թուրքիան Վրաստանի և Ադրբեջանի հետ տնտեսական բավական ամուր հիմքեր ապահովելուց հետո ձեռնամուխ եղավ նաև ռազմաքաղաքական համագործակցության ծրագրերի մշակմանը: Առաջին ձևաչափը նախատեսում էր համագործակցություն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգությունը պաշտպանելու նպատակով: Այս գաղափարն առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց 1999թ. վերջից և քննարկվեց 2000թ. Տրապիզոնում արտաքին գործերի նախարարների եռակողմ բանակցությունների ժամանակ [10]: Պաշտոնական Թբիլիսին հայտարարում էր, որ այդ նախաձեռնությունն իրենք դիտարկում են իրենց արտաքին քաղաքականության սկզբունքային դիրքորոշման՝ ՆԱՏՕ-ի և Եվրոպական միության երկրների հետ բազմակողմ հարաբերությունների և համագործակցության զարգացման ուղեգծի մեջ: Իսկ պաշտոնական Երևանի այն մտահոգությանը, թե արդյոք այդ համագործակցությունը չի նպաստի տարածաշրջանում նոր բաժանարար գծերի առաջացմանը, Թբիլիսին պատասխանում է, որ դա ուղղված է ողջ տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովմանը [11]: Թուրք-վրացական ռազմական համագործակցության առաջին արդյունքն այն եղավ, որ 2001թ. հունվարի 28-ին Վրաստանի Մառնեուլ քաղաքում բացվեց Թուրքիայի օժանդակությամբ վերազինված ռազմաօդային բազան:

Ռազմական համագործակցությունը նոր փուլ մտավ 2006թ. Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի բացումից հետո: 2007թ. փետրվարի 27-ին Թբիլիսիում Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի արտգործնախարարները ստորագրեցին Թբիլիսյան հռչակագիրը: Վրաստանի մայրաքաղաքում հավաքվելու առիթը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարության մեկնարկի պայմանագիրն էր: Սակայն կնքված փաստաթուղթը վերաբերում էր տարածաշրջանում երեք երկրների ռազմավարական համագործակցության քաղաքական դիրքորոշմանը:

2008թ. վրաց-հարավօսական պատերազմից անմիջապես հետո Թուրքիան առաջ քաշեց Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմի ստեղծման գաղափարը: Նախատեսվում էր դրա մեջ ներառել Հարավային Կովկասի երեք երկրները, Թուրքիան և Ռու-

սաստանք: Նպատակը՝ ստեղծել երկխոսության հարթակ տարածաշրջանային կոնֆլիկտների կարգավորման համար: Թեև առաջարկ ստացած երկրներից և ոչ մեկը չառարկեց, սակայն այս պլանը շուտով ստեղծվեց: Հիմնական բացն այն էր, որ մասնակցության որևէ ձևաչափ չէր նախատեսվում տարածաշրջանի դե-ֆակտո գոյություն ունեցող երկրների համար, մինչդեռ նրանց մասնակցությունը կբարձրացներ նախատեսվող ձևաչափի արդյունավետությունը:

2012թ. հունիսի 8-ին Տրապիզոնում երեք երկրների արտգործնախարարները ստորագրեցին Տրապիզոնի հռչակագիրը, որով նախատեսվում է.

- միջազգային կազմակերպություններում միասնական և միմյանց աջակցելու քաղաքականություն,
- համագործակցություն Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրների կարգավորման հարցում՝ հիմք ընդունելով Ադրբեջանի և Վրաստանի միջազգայնորեն ընդունված սահմանները,
- խթանել համագործակցության հետագա զարգացումը բոլոր ոլորտներում, հատկապես տնտեսական,
- շարունակել համատեղ աշխատանքը ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շուրջ, որի արդի փուլը ներառում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը,
- հաստատել Բաքվի միջազգային ծովային առևտրի նոր նավահանգստի կառուցման նախագիծը, որը կդառնա հաջորդ կարևոր կապող օղակը արևելք-արևմուտք տրանսպորտային միջանցքում [12]:

Սա եռակողմ առաջին պաշտոնական նման փաստաթուղթն է, որը համարժեք է ռազմավարական փաստաթղթի: Տրապիզոնի հռչակագրով, փաստորեն, եռակողմ տնտեսական համագործակցությունը դրվեց նոր հարթության վրա՝ ամրապնդվելով քաղաքական համագործակցության բավական բարձր մակարդակի փաստաթղթով:

2012թ. հունիսի 26-ին Թուրքիայի և Ադրբեջանի էներգետիկայի նախարարները ստորագրեցին Տրանսանատոլիական (*TANAP - Trans-Anatolian Pipeline*) նոր գազատարի կառուցման համաձայնագիրը: Նախատեսվում է այս գազատարով Կասպից ծովի գազը Թուրքիայի տարածքով հասցնել Եվրոպա: Սակայն, կապված Միջին Ասիայի երկրների

գազային ռեսուրսների արտահանման շուրջ Ռուսաստանի հետ ունեցած պայմանավորվածությունների հետ, այս գազատարի արդյունավետության մասով դեռևս բազմաթիվ հարցեր կան:

Եռակողմ ձևաչափով ռազմական համագործակցությունն առավել ակտիվ փուլ մտավ 2014թ. օգոստոսին պաշտպանության նախարարների մակարդակով Նախիջևանում կայացած հանդիպումից հետո: 2015թ. մայիսի 4-ին Անկարայում երեք երկրների զինված ուժերի ղեկավարների հանդիպման ընթացքում քննարկվել է երկաթուղային գծերի և էներգակիրների մատակարարման ենթակառուցվածքների անվտանգության հարցը: Ստորագրված արձանագրությամբ որոշվել է ստեղծել երեք երկրների զինված ուժերի միացյալ խումբ: 2015թ. վերջին ռուս-թուրքական հարաբերությունների սրման ֆոնին, ղեկտեմբերի 17-ին Ստամբուլում կայացավ երեք երկրների պաշտպանության նախարարների հերթական հանդիպումը, որտեղ հիմնական շեշտը դրված էր պաշտպանական անվտանգության և զինված ուժերի արդիականացման հարցերի վրա: Եթե նախկինում Թուրքիան խուսափում էր բարձրաձայն խոսել Աբխազիայի և Հարավային Օսիայի պատկանելության հարցում իր դիրքորոշման մասին, ապա ներկայում դա անում է հատուկ շեշտադրումով: 2016թ. փետրվարի 19-ին Թբիլիսիում արտգործնախարարների եռակողմ հանդիպման ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Մ.Չավուշօղլուն հայտարարեց, որ Աբխազիան և Հարավային Օսիան Վրաստանի, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանի տարածք են [13]:

Մի քանի անգամ հետաձգվելուց հետո, 2016թ. ավարտին նախատեսվում էր նաև կատարել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի բացումը, սակայն մինչ օրս երկաթգծի որոշ հատվածների աշխատանքներն անավարտ են, և դրա բացումը նախատեսվում է 2017թ. գարնանը: Ծրագրվում է դրանով տարեկան 5 մլն տոննա բեռ և 1 մլն մարդ տեղափոխել: Իսկ հետագայում այս ծավալները պետք է եռապատկվեն: Միայն վրացական հատվածի շինարարության վրա նախօրոք նախատեսվածից չորս անգամ ավելի մեծ գումար է ծախսվել, որը կազմում է \$775 մլն: Վրացական հատվածի ծախսերը կատարվել են Ադրբեջանի տրամադրած վարկային միջոցների հաշվին: Սա ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ Վրաստանն ուղղակի մխրձվում է ադրբեջանական ու թուրքական տնտեսական կախվածության ճահճի մեջ, ինչը ժամանակի

ընթացքում ավելի քիչ հնարավորություններ է տալիս վերջինիս դուրս գալ թյուրքական տնտեսական ազդեցությունից [14]:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ ընդլայնվող համագործակցությունը ժամանակի ընթացքում ավելի պարզորոշ երանգներով է ցույց տալիս Հայաստանի դեմ ուղղվածությունը, ինչպես նաև տարածաշրջանում ռուսական ազդեցության թուլացմանն ուղղված միտումը: Կարծում ենք, որ այն կարող է վտանգել տարածաշրջանում առկա փխրուն կայունությունը: 2012թ. ընտրություններից հետո Վրաստանի կառավարության նոր ղեկավար Բ.Իվանիշվիլին իր առաջին պաշտոնական այցը կատարեց Բաքու, ինչը խոսում է երկրի արտաքին քաղաքականության ընտրված ուղենիշների պահպանման մասին: Վրաստանի ամենախոշոր առևտրային գործընկերը Թուրքիան է, և Վրաստանում օտարերկրյա ամենամեծ ներդրումները թուրքական կապիտալով են: Սա խոսում է այն մասին, որ մոտ ապագայում էլ Վրաստանի համագործակցությունը հարևան թյուրքական երկրների հետ շարունակելու է ընդունել նոր ծավալներ:

Կարծում ենք, որ սա բավական լուրջ մարտահրավեր է Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական ու քաղաքական անվտանգությանը: Պաշտոնական Թբիլիսին բազմիցս հայտարարել է, որ այս համագործակցությունն ուղղված չէ Հայաստանի դեմ: Սակայն կարծում ենք, որ Վրաստանն անուղղակիորեն ներքաշվում է Հայաստանի մեկուսացման մեջ: Եռակողմ պաշտոնական հանդիպումների ընթացքում Ադրբեջանի ղեկավարները մեկ անգամ չէ, որ հայտարարել են Հայաստանի ագրեսոր լինելու և այդ ագրեսիան չեզոքացնելու անհրաժեշտության մասին: Որքան էլ Թբիլիսին փորձի չեզոքություն պահպանել հայ-ադրբեջանական հարաբերություններում, Արցախի Հանրապետությունում կամ ՀՀ-Ադրբեջան շփման գծում ռազմական սրացման պայմաններում Վրաստանը կարող է կողմնորոշվել ոչ թե դեպի քրիստոնյա Հայաստանը, այլ դեպի տնտեսական ավելի խոշոր գործընկերները, և անուղղակիորեն նպաստել Հայաստանի տնտեսական շրջափակմանը:

Այս համագործակցության ազդեցության թուլացման և այլընտրանքների ճանապարհին մեր առաջին քայլերը տեսնում ենք երկու հիմնական ուղղություններով. Նախ՝ անհրաժեշտ է ամրապնդել տնտեսաքաղաքական կապերը եվրոպական երկրների հետ, իսկ տարածա-

շրջանային մակարդակով դրան հակազդել Ռուսաստան-Հայաստան-Իրան ձևաչափով համագործակցությունով, մանավանդ որ Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցների վերացումից հետո նոր հնարավորություններ են բացվել: Կարծում ենք, Իրանի հետ համագործակցության մեջ անհրաժեշտ է հնարավորինս ներգրավել նաև Վրաստանը՝ դրանով իսկ որոշ չափով նրան «կտրելով» թյուրքական երկրներից: Մանավանդ որ այս ուղղությամբ արդեն որոշակի նախադրյալներ կան՝ ի դեմս Իրան-ՀՀ-Վրաստան եռակողմ և Իրան-ՀՀ-Վրաստան-Ռուսաստան քառակողմ տնտեսական համագործակցության ծրագրերի: Իսկ Վրաստանի հետ բազմակողմ համագործակցության զարգացման համար կարևոր գրավական կարող են դառնալ ռուս-վրացական հարաբերությունների կարգավորումն ու աբխազական երկաթուղու վերագործարկումը:

Կարծում ենք, որ այս հարցում Վրաստանում կա դրական զարգացման որոշակի միտում: Նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններում վրացական խորհրդարան անցած երրորդ քաղաքական ուժը Վրաստանի հայրենասերների դաշինքն է, որը ոչ պաշտոնապես անվանում են նաև ռուսամետ քաղաքական ուժ: Թեև այս որակումը միանշանակ չէ, քանի որ դեռևս նախընտրական քարոզարշավի ժամանակ այս ուժի ներկայացուցիչները, որոնք հենվում են հիմնականում հակաթուրքական թեզերի վրա (նրանք մեղադրում են Թուրքիային 1918թ. Վրաստանի տարածքների շուրջ 33%-ի զավթման մեջ, ինչպես նաև վստահ են, որ Թուրքիան ցանկանում է զավթել վրացական Աբխազիան և Աջարիան ևս), մեկ անգամ չէ, որ Ռուսաստանն օկուպանտ են որակել: Մյուս կողմից՝ վրացական խորհրդարան չանցան հիմնական արևմտամետ «Ազատ դեմոկրատներ» և Հանրապետական կուսակցությունները, որոնք 2012 թվականից ղեկավարում էին երկրի պաշտպանական և արտաքին քաղաքական գերատեսչությունները:

Վրացական խորհրդարանական ընտրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ Վրաստանում աստիճանաբար ավելի մեծ ծավալներ են ընդունում հակաթուրքական տրամադրությունները, ինչը բխում է վերջինիս կողմից երկրում իրականացվող տնտեսական էքսպանսիայից: Մյուս կողմից՝ Վրաստանում ավելանում է այն քաղաքական գործիչների թիվը, ովքեր պատրաստ են երկխոսության սեղանի շուրջ նստել Ռուսաստանի հետ: Ավելին, փոխվել է նաև ռուսների

նկատմամբ վրացական հասարակական կարծիքը: Ներկայում Կրաստանում չկա այն բացահայտ հակառուսական տրամադրությունը, ինչն առաջացել էր 2008 թվականից հետո: Կարծում ենք, որ այս երկու փաստերը բխում են Հայաստանի շահերից, ավելի է մեծանում ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման հնարավորությունը, ուստի և Հայաստան-Վրաստան-Ռուսաստան առանցքով համագործակցության զարգացման հեռանկարը: Միննույն ժամանակ, հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ տարանցման հարցում բանակցություններում դրական արդյունքները ուղիղ համեմատական են ռուս-վրացական երկխոսության կայացմանը: Մյուս կողմից՝ այս հարցում անհրաժեշտ է մի փոքր մեծացնել ճնշումը Թբիլիսիի վրա, մանավանդ որ նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանում մեծացել են հարավային և հյուսիսային ուղղություններով երկխոսության զարգացման տրամադրությունները:

Փետրվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Armenian-Georgian Relations: Challenges and Opportunities for the Bilateral Cooperation, PSAA-CSS, Yerevan, 2014.
2. ՀՀ ԱԳՆ պատմա-դիվանագիտական բաժնի նյութեր (ՊԴԲ), ցուցակ 6, գործ 135:
3. *Томас де Ваал*, «Грузия и ее дальние соседи», Государственность и безопасность: Грузия после «революции роз», Лондон, 2005.
4. *Massima Gaudiano*, Can Energy Security Cooperation Help Turkey, Georgia and Azerbaijan to Strengthen Western Oriented Links?, NATO Defense College Academic Research Branch Research Note, N. 5, June 2007.
5. *Мустафа Айдын*, «Турецкая политика в отношении Кавказа в 2007г.», Кавказ 2007: Ежегодник Института Кавказа, Ереван, 2009.
6. ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, ցուցակ 7, գործ 236:
7. *Alexandros Peterson*, Integration in Energy and Transport Amongst Azerbaijan, Georgia and Turkey, The London School of Economics and Political Science, 2012.
8. ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, ցուցակ 5, գործ 290:
9. ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, ցուցակ 9, գործ 165:
10. *Scott A. Jones*, Crossroads and Conflict Security and Foreign Policy in the Caucasus and Central Asia, London, 2000.
11. ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, ցուցակ 6, գործ 135:
12. Trabzon Declaration, Trabzon, 8 June 2012,- <http://www.mfa.gov.ge>
13. Թբիլիսիում կայացել է Ադրբեջանի, Թուրքիայի, Վրաստանի ԱԳ նախարարների հանդիպումը, <http://www.civilnet.am/news/2016/02/19/turkey-azerbaijan-georgia-fm-trilateral-tbilisi/287357>
14. Բարու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարությունը նախատեսվում է ավարտել զարնանը, <http://www.panarmenian.net/arm/news/230704/>

ԹՈՒՐԹԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ ԵՌԱԿՈՂՄ ԸՆԴԱՅՆՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռոման Կարապետյան

Ամփոփագիր

Խորհրդային Միության փլուզումից հետո Անդրկովկասում ակտիվացան տարածքային հակամարտությունները, որոնք ոչ միայն խաթարեցին անվտանգության մթնոլորտը տարածաշրջանում, այլև կանխորոշեցին տարածաշրջանի երկրների միջև փոխհարաբերությունների հետագա ընթացքը: Անդրկովկասի երկրներն ունենին նաև միմյանցից տարբերվող դիրքորոշումներ արտաքին քաղաքական գործընկերների ընտրության հարցում:

Տարածաշրջանում ամրապնդվելու առաջին հաստատուն փորձերն արեց Թուրքիան, որը գրեթե յոթանասուն տարի սպասել էր այս հնարավորությանը: Առաջին քայլերն ուղղված էին տնտեսական բնույթի կապերի ձևավորմանը, որոնք հետագայում ամուր հիմքեր կտային քաղաքական ու ռազմական համագործակցության համար: 1990-ական թվականներին մշակվեցին, իսկ 21-րդ դարի մեկնարկին իրագործվեցին էներգետիկ, տրանսպորտային բնույթի մի շարք ծրագրեր: Ներկայում էլ այդ ծրագրերը գործնական ընթացքի մեջ են և ունեն շարունակականության միտումներ:

Ելնելով Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման հրամայականից՝ հարց է առաջանում. որքանո՞վ են այդ ծրագրերը սպառնում Հայաստանի զարգացմանը, արդյո՞ք դրանք ուղղված չեն Հայաստանի դեմ, և ի՞նչ գործնական քայլեր են ձեռնարկվում դրանց բացասական հետևանքները չեզոքացնելու կամ հակընդդեմ ծրագրեր մշակելու ուղղությամբ:

РАСШИРЯЮЩЕЕСЯ ТРЕХСТОРОННЕЕ СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ ТУРЦИЕЙ, ГРУЗИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ

Роман Карапетян

Резюме

После распада Советского Союза территориальные конфликты Южного Кавказа вошли в этап активации. Они не только разрушали среду безопасности, но и определили дальнейший ход отношений между странами региона. Закавказские страны также имеют различные точки зрения в выборе партнерских государств.

Турция, которая ждала этой возможности почти семьдесят лет, предприняла первые усилия по укреплению своей роли в регионе. Были сделаны первые шаги по развитию экономических отношений, которые впоследствии дали бы прочную основу для политического и военного сотрудничества. В течение 1990-х годов были разработаны, а в начале 21-го века осуществлены сразу несколько энергетических и транспортных проектов. Тенденции развития отношений между двумя закавказскими странами и Турцией продолжают развиваться.

Возникает вопрос: являются ли эти программы угрозой для развития Армении, не направлены ли они против РА и какие практические шаги предпринимаются, чтобы нейтрализовать их?

THE TRILATERAL COOPERATION BETWEEN TURKEY, GEORGIA AND AZERBAIJAN

Roman Karapetyan

Resume

After the collapse of the Soviet Union the territorial conflicts in the South Caucasus were triggered, which not only damaged the security environment in the region, but also determined the future course of relations between the countries of the region. Regional countries also have differing views in selection of foreign partners.

Turkey, which seems to have been waiting for this opportunity for almost seventy years, started efforts to strengthen his positions in the region. The first steps were done towards the development of economic relations, which later would provide solid bases for political and military cooperation. A number energy and transport projects of were developed the 1990s that were implemented in early 21st century. Currently the cooperation between these three countries continues.

Under this circumstances, the imperative of ensuring Armenia's security raises some questions: do these programs threaten Armenia's development, are they are sharply directed against Armenia and what practical steps are being taken to neutralize them or to develop programs to counter their negative effects?

ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Էրիկ Դավթյան՝

Բանալի բառեր՝ Հարավային Կովկաս, Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան, խողովակաշարերի անվտանգություն, եռակողմ համագործակցություն:

1990-ական թթ. Կասպից ծովի էներգակիրների արտահանման ուղիների ընտրության հարցում մի շարք պետությունների և նավթագազային ընկերությունների միջև քննարկումների և նշմարվող որոշակի պայմանավորվածությունների արդյունքում Հարավային Կովկասում ծագեց կառուցվելիք խողովակաշարերի անվտանգության ապահովման խնդիրը: Հաշվի առնելով նախագծերի միջազգային նշանակությունը՝ անվտանգության բարձր մակարդակի երաշխավորումը կարևոր խնդիր էր ոչ միայն Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի, այլև ադրբեջանական նավթի և գազի արդյունահանման և փոխադրման գործընթացում ներգրավված միջազգային ընկերությունների, ինչպես նաև այդ էներգակիրները ներկրող պետությունների համար:

Այս հարցի քննարկումն ավելի առարկայական դարձավ 1990-ական թթ. վերջերին և 2000-ական թթ. սկզբներին, ադրբեջանական նավթի ու գազի արտահանման հարցում տեղի ունեցած մի շարք կարևոր զարգացումներից հետո: 1999թ. ամբողջությամբ գործարկվեց Բաքու-Սուփսա նավթամուղը, որը թեև չէր դիտարկվում որպես նավթի արտահանման հիմնական ուղի, այնուամենայնիվ, հանդիսանում էր նոր և այլընտրանքային ուղի, որի անվտանգության երաշխավորումը կարևոր էր թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի համար: Նույն թվականի նոյեմբերի 18-ին Ստամբուլում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ստո-

¹ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ:

րագրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով նավթի փոխադրման միջկառավարական համաձայնագիրը: 1999թ. Շահ Դենիզում հայտնաբերվեցին գազի մեծ պաշարներ, ինչը, իր հերթին, հեռանկարներ ստեղծեց հետագայում Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման համար: 2001թ. մարտի 12-ին Անկարայում Ադրբեջանի և Թուրքիայի նախագահներ Շեյդար Ալինն ու Ահմետ Նեջդետ Սեզերը ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի՝ Թուրքիան պետք է տարեկան 6.6 մլրդ մ³ գազ գներ Ադրբեջանից¹:

Բացի այդ՝ նշված ժամանակահատվածում նավթի ու գազի արտահանման գործընթացում ներգրավված մի շարք ընկերությունների հետ Թուրքիան (2000թ. հոկտեմբերի 19-ին), Վրաստանը (2000թ. ապրիլի 28-ին) և Ադրբեջանը (2000թ. հոկտեմբերի 17-ին) ստորագրեցին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի հետ կապված հարաբերությունները կարգավորող համաձայնագրեր, որոնցով մի շարք պարտավորություններ ստանձնեցին էներգակիրների՝ իրենց տարածքով փոխադրման հարցում: Մասնավորապես, երեք պետություններն էլ պարտավորվեցին ապահովել վերոնշյալ նավթամուղի անվտանգությունը, անհրաժեշտության դեպքում՝ ուժի կիրառմամբ, մինչդեռ վերջինիս ձախողման դեպքում՝ փոխհատուցել պայմանագրի կողմ հանդիսացող ընկերություններին հասցված վնասը [1, pp. 32-33, 35-36; 2, pp. 27, 30-31; 3, pp. 34-35, 38]: Վրաստանը (2002թ. մարտի 14-ին) և Ադրբեջանը (2002թ. փետրվարի 21-ին) նմանատիպ համաձայնագրեր ստորագրեցին նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շուրջ, որոնք նույնպիսի պարտավորություններ էին նախատեսում վերոնշյալ գաղամուղի անվտանգության ապահովման հարցում [4, pp. 43, 47-48; 5, pp. 35, 38-39]:

Առհասարակ, Հարավային Կովկասով կասպյան էներգակիրների արտահանման շուրջ ծավալված բանակցությունները, մի շարք փաստաթղթերի ստորագրումը և խողովակաշարերի շինարարության մեկնարկը Վրաստանում և Ադրբեջանում աստիճանաբար առաջացրին կառուցվելիք էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանության

¹ Պայմանագրի տեքստը տե՛ս Agreement between the Republic of Turkey and the Azerbaijan Republic Concerning the Delivery of Azerbaijan Natural Gas to the Republic of Turkey, done on March 12, 2001 in Ankara, http://www.bp.com/content/dam/bp-country/en_az/pdf/legalagreements/SHA_eng_intergov_Azerbaijan_Turkey_Intergovernmental_Agreement.pdf (հասանելի է առ 25.11.2016թ.):

նպատակով պետական հատուկ մարմինների ստեղծման անհրաժեշտությունը: 1998թ. մայիսի 13-ին Վրաստանի Պետական պահպանության հատուկ ծառայության կազմում ստեղծվեց Վրաստանի խողովակաշարի և այլ օբյեկտների պահպանության վարչություն, որը 2006թ. հունվարի 1-ին դուրս բերվեց նշյալ ծառայության կազմից և ընդգրկվեց ներքին գործերի նախարարության կազմի մեջ՝ որպես ռազմավարական խողովակաշարերի պահպանության բաժին, որի նպատակների մեջ ամրագրվեց նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի պահպանության ու անվտանգության երաշխավորումը [6]: 2002թ. ապրիլի 15-ին Հեյդար Ալիևի հրամանագրով ստեղծվեց Արտահանվող նավթի ու գազի խողովակաշարերի անվտանգության հանձնաժողով¹, իսկ 2003թ. մայիսի 31-ին մեկ այլ հրամանագրով Հատուկ պետական պահպանության ծառայության կազմում ձևավորվեց Արտահանվող նավթի և գազի խողովակաշարերի անվտանգության վարչությունը²: Ընդ որում՝ Ադրբեջանի պարագայում հավասարապես կարևոր է նաև խողովակաշարերի, և՛ Սանգաչալի տերմինալի, և՛ էներգակիրների արտահանման համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքների պաշտպանությունը³:

Հարկ է նկատել, որ այս ժամանակաշրջանում խողովակաշարերի անվտանգության ոլորտում համագործակցության հաստատման փորձեր ձեռնարկեցվին ՎՈւԱՄ-ի շրջանակներում: 1999թ. հունվարի 21-22-ին Բաքվում Ուկրաինայի, Վրաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ քննարկվեց ՎՈւԱՄ-ի խաղաղապահ գումարտակի ստեղծման նախագիծը, որի հնարավոր խնդիրների թվում դիտարկվում էր նաև խողովակաշարերի անվտանգության

¹ «İxrac neft və qaz boru kəmərlərinin təhlükəsizliyinin təmin edilməsi haqqında» Azərbaycan Respublikası Prezidentinin Fərmanı, Bakı şəhəri, 15 aprel 2002-ci il, № 685, http://www.e-qanun.az/alpdata/framework/data/1/f_1498.htm (հասանելի է առ 26.11.2016թ.):

² İxrac Neft və Qaz Boru Kəmərlərinin Təhlükəsizliyi İdarəsi, <https://www.dmx.gov.az/page/8.html> (հասանելի է առ 11.12.2016թ.):

³ «Վիկիլիքսի» կողմից հրապարակված 2008թ. փաստաթղթերից մեկի համաձայն՝ Ադրբեջանի հատուկ պետական պահպանության ծառայությունը խողովակաշարերի պաշտպանությունն իրականացնում է Ադրբեջանի տարբեր շրջաններում տեղակայված 9 կայանների միջոցով: Բացի վերոնշյալ ծառայությունից՝ Ադրբեջանի էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում ներգրավված են նաև պաշտպանության նախարարությունը, պետական սահմանապահ ծառայությունը, Azerbaijan Faces Challenge of Protecting Critical Energy Infrastructure, https://wikileaks.org/plusd/cables/08BAKU625_a.html (հասանելի է առ 25.12.2016թ.):

ապահովումը [7, pp. 12-13]: Այս քննարկումների համատեքստում պետք է դիտարկել 1999թ. ապրիլին Վրաստանում Բաքու-Սուփսա նավթամուղի գործարկման հանդիսավոր արարողության շրջանակներում Էդուարդ Շևարդնաձեի, Հեյդար Ալիևի և Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի ներկայությամբ տեղի ունեցած վրաց-ադրբեջանա-ուկրաինական գորավարժությունը, որի նպատակը ահաբեկչական հարձակման ժամանակ նավթամուղի պաշտպանության ապահովումն էր¹: Ուշագրավ է, որ 1998թ. Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը առաջարկում էր այդ գործընթացում ներգրավել Թուրքիային՝ անցկացնելով Թուրքիա-ՎՈւԱՄ համատեղ գորավարժություններ [8]:

Թեպետ վերոնշյալ պայմանագրերը խողովակաշարերի անվտանգության ապահովման նպատակով Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև որոշակի համագործակցության դրույթներ չէին նախատեսում, խողովակաշարերի պաշտպանության պարտավորությունը բարենպաստ նախադրյալներ ստեղծեց հետագայում համագործակցության շուրջ եռակողմ քննարկումներ ծավալելու և առաջին քայլերը ձեռնարկելու ուղղությամբ: 2003թ. հուլիսի 23-ին Բաքվում Ադրբեջանի փոխվարչապետ Աբիդ Շարիֆովը, Վրաստանի Միջազգային նավթային կորպորացիայի նախագահ Գիորգի Ճանտուրիան և Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Ահմեթ Ունալ Չևիքյոզը ստորագրեցին արձանագրություն Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի անվտանգության ապահովման մասին, որը նախատեսում էր Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի՝ խողովակաշարերի անվտանգությունն ապահովող ստորաբաժանումների միջև համատեղ վարժանքների անցկացում²: Արձանագրությամբ կողմերը նաև համաձայնեցին խողովակաշարերի անվտանգության ոլորտում համագործակցությանն առնչվող հարցերի քննարկման և լուծման նպատակով ստեղծել համատեղ հանձնաժողով: Թուրքիա-

¹ GUUAM's Core Trio GAU Plans Joint Battalion, *Fortnight in Review*, Volume 6, Issue 7, <https://jamestown.org/program/guuams-core-trio-gau-plans-joint-battalion/> (հասանելի է առ 3.12.2016թ.):

² Արձանագրության տեքստը տե՛ս Okmi sakartvelos, azerbaijanis resp'ublik'isa da turketis resp'ublik'as shoris aghmosavlet-dasavletis enarget'ik'uli derepnis usaprtkhoebis uzrunvelq'opis shesakheb, shedgenilia bakoshi 2003 ts'lis 23 ivliss (Արձանագրություն Վրաստանի, Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Արևելք-Արևմուտքի էներգետիկ միջանցքի անվտանգության ապահովման մասին, կազմված է Բաքվում 2003թ. հուլիսի 23-ին, վրաց.), <http://www.parliament.ge/files/international-acts/agreements/2005/1456-Is-17-05-2005.doc> (հասանելի է առ 26.11.2016թ.):

Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության համատեքստում այս արձանագրության նշանակությունը կարելի է ընդգծել այն երկու կարևոր ձեռքբերմամբ, որ սահմանվեց երեք երկրների համապատասխան կառույցների միջև փոխգործակցության հաստատման մասին դրույթ և ստեղծվեց հարթակ խողովակաշարերի անվտանգության հարցում եռակողմ համագործակցության օրակարգային խնդիրների ինստիտուցիոնալ քննարկման համար:

Սույն հարցի շուրջ անվտանգության միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունն էլ ավելի աճեց 2006-2007թթ., երբ ամբողջությամբ գործարկվեցին պաշտպանության ենթակա երկու կարևոր օբյեկտները՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Այս խողովակաշարերը ռազմավարական կարևորություն ունենին ոչ միայն նավթի և գազի պաշարների արտահանման ուղիների դիվերսիֆիկացման, այլև հետագայում դրանց միջոցով դազախական և թուրքմենական էներգակիրների արտահանման տեսանկյունից: Վերոնշյալ գազամուղը նախատեսված էր Շահ Դենիզի հանքավայրից գազի արտահանման համար, իսկ նավթամուղը, կապելով Սանգաչալի և Ջեյհանի տերմինալները և դիտարկվելով որպես նավթի արտահանման հիմնական խողովակաշար, փոխադրում է Ազերի-Չիրազ-Գյունեշլիի նավթի պաշարները: Ազերի-Չիրազ-Գյունեշլիում 1997թ. շահագործման հանձնվեց Չիրազի պլատֆորմը՝ ապահովելով «վաղ նավթի» արտահանումը Բաքու-Սուփսա նավթամուղով, ինչին հետևեց նավթադաշտի համալիր ծրագրի մեկնարկը, որը նախատեսում էր «Կենտրոնական Ազերի» (I փուլ), «Արևմտյան Ազերի» և «Արևելյան Ազերի» (II փուլ), «Խորջրյա Գյունեշլի» (III փուլ) պլատֆորմների և Չիրազի նավթային ծրագրի (*Chirag Oil Project*) ներգրավում [9, էջ 49-56]:

Ելնելով 2003թ. արձանագրությունում սահմանված ուղենիշներից՝ խողովակաշարերի անվտանգության ապահովումը թուրք-վրաց-ադրբեջանական համագործակցությունում գործնական հիմքի վրա դրվեց հետագա տարիներին: 2005թ. հոկտեմբերի 14-ին Անկարայում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի համատեղ խողովակաշարերի անվտանգության հանձնաժողովի առաջին հանդիպումը, որի ժամանակ քննարկվեցին պետություններից յուրաքանչյուրի

տարածքում խողովակաշարերի պաշտպանվածության մակարդակի, հնարավոր սպառնալիքների, ճգնաժամային իրավիճակներում միջսահմանային համագործակցության և մի շարք այլ հարցեր¹: 2006թ. սեպտեմբերին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեցին «Eternity» («Հավերժություն») զորավարությունները, որոնք ամենամյա բնույթ են կրում²: Այս նախաձեռնությունը նախատեսում էր նավթի ու գազի խողովակաշարերի անվտանգության համար պատասխանատու ուժերի անձնակազմի համար վարժանքների անցկացում՝ պատրաստվածության մակարդակի բարձրացման և այս համատեքստում երեք պետությունների փոխգործակցության ամրապնդման նպատակով: Վրաստանի ՆԳՆ տվյալների համաձայն՝ ՆԳՆ ռազմավարական խողովակաշարերի պահպանության բաժինը վերոնշյալ հարցերում սերտ կապեր հաստատեց Թուրքիայի պաշտպանության նախարարության, ժանդարմերիայի և Ադրբեջանի պաշտպանության, պետական անվտանգության նախարարությունների և հատուկ պետական պահպանության ծառայության հետ³:

Անվտանգության միջոցառումների ձեռնարկման և համատեղ վարժանքների անցկացման անհրաժեշտությունն ավելի աճեց խողովակաշարերի տարբեր հատվածներում տեղի ունեցած մի շարք պայթյուններից հետո: 2003թ. հունվարի 18-ին Բաքու-Սուփսա նավթամուղի վրացական հատվածում՝ Գորիի շրջանի Սվենեթի գյուղի մոտակայքում, հարձակում տեղի ունեցավ նավթամուղի վրա՝ պատճառելով որոշակի քանակությամբ նավթի կորուստ⁴: Մեկ այլ միջադեպ տեղի ունեցավ 2004թ. նոյեմբերի 17-ին, երբ Խաշուրիի շրջանի Չորչանա գյուղի մոտակայքում պայթեցվեց Բաքու-Սուփսա նավթամուղին ծառայող ռադիոհե-

¹ Joint Press Release, "The First Meeting of the East-West Energy Corridor Joint Pipeline Security Commission", Ankara, 14 October 2005, http://www.mfa.gov.tr/joint-press-release_-_the-first-meeting-of-the-east-west-energy-corridor-joint-pipeline-security-commission__-ankara_-14-october-2005.en.mfa (հասանելի է առ 28.11.2016թ.):

² Pipelines on Georgian Territory as a Part of the Euro-Atlantic Energy Infrastructure and the Issue of their Security, *Protecting Critical Energy Infrastructure from Terrorist Attacks*, CTN Newsletter Special Bulletin, January 2010, <http://www.osce.org/atu/41367?download=true> (հասանելի է առ 28.11.2016թ.):

³ Նույն տեղում:

⁴ Azerbaijan, Georgia address security threats to BTC pipeline, <http://www.ogj.com/articles/2003/01/azerbaijan-georgia-address-security-threats-to-btc-pipeline.html> (հասանելի է առ 28.11.2016թ.):

ռարձակիչը [10, p. 17]: Ուժգնությամբ և հասցված վնասով առավել աչքի ընկավ 2008թ. օգոստոսի 5-ին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի թուրքական հատվածում՝ Ռեֆահիե քաղաքի մոտակայքում տեղի ունեցած պայթյունը, որը պատճառեց շուրջ 30 հազ. բարել նավթի վնաս: Որոշ հաշվարկների համաձայն՝ նավթամուղի ժամանակավոր փակման արդյունքում Ադրբեջանին հասցվեց \$1 մլրդ¹, Թուրքիային՝ օրական \$300 հազ. վնաս [11, p. 13]: Թեպետ Թուրքիայի իշխանությունների համաձայն՝ պատահարը տեխնիկական խափանման արդյունք էր, արդեն 2008թ. օգոստոսի 7-ին Քրդական աշխատավորական կուսակցությունը ստանձնեց պայթյունի կազմակերպման պատասխանատվությունը²:

Խողովակաշարերի անվտանգության ապահովման հարցում ծագած վերոնշյալ մարտահրավերների հետ մեկտեղ իրադրությունը բարդացավ նաև այն պատճառով, որ պայթյունից մի քանի օր անց Հարավային Օսիայում սկսվեց 2008թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը, որի արդյունքում նավթի ու գազի խողովակաշարերը հայտնվեցին ռազմական գործողությունների գոտում կամ դրա մերձակայքում: Թեպետ ռազմական գործողությունների ժամանակ խողովակաշարերին որևէ վնաս չհասցվեց, վրացի մի շարք պաշտոնյաներ, այդ թվում՝ վարչապետ Նիկա Գիլաուրին, հայտարարեցին, որ 2008թ. օգոստոսի 9-ին և 12-ին ռուսական ավիացիան Ռուսթավի քաղաքի մոտ անհաջողությամբ փորձել է ավիահարվածներ հասցնել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Մուփսա նավթամուղերին³:

Տեղի ունեցած պայթյուններից հետո Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի՝ որպես իրենց տարածքում խողովակաշարերի անվտանգության համար պատասխանատու պետությունների համար պարզ դարձավ, որ խողովակաշարերի անվտանգության մակարդակը պատշաճ կերպով ապահովված չէ և անհրաժեշտ է էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել այդ խնդրին: 2009թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը

¹ Mysterious '08 Turkey Pipeline Blast Opened New Cyberwar, <https://www.bloomberg.com/news/articles/2014-12-10/mysterious-08-turkey-pipeline-blast-opened-new-cyberwar> (հասանելի է առ 29.11.2016թ.):

² Jenkins, G., Explosion Raises Questions about the Security of the BTC Pipeline, *Eurasia Daily Monitor*, Volume 5, Issue 152, <https://jamestown.org/program/explosion-raises-questions-about-the-security-of-the-btc-pipeline/> (հասանելի է առ 29.11.2016թ.):

³ Raids Suggest Russia Targeted Energy Pipelines, <http://www.wsj.com/articles/SB121866234961938253> (հասանելի է առ 29.11.2016թ.):

Անկարայում անցկացվեցին «Eternity» զորավարժությունները, որոնց մասնակցեց 10 ներկայացուցիչ Վրաստանից, 19՝ Թուրքիայից¹, իսկ ադրբեջանական կողմից ներկա էր 13 մասնակից, ովքեր ներկայացնում էին պաշտպանության նախարարությունը և հատուկ պետական պահպանության ծառայությունը [12, p. 10]:

Այն, որ խողովակաշարերի անվտանգության ապահովման հարցում աստիճանաբար ավելի մեծ ուշադրություն դարձվեց թուրք-վրաց-ադրբեջանական եռակողմ համագործակցությանը, նկատելի դարձավ «Eternity» ամենամյա զորավարժություններում ներկայացված շրջանակների ընդլայնումից: Այսպես, օրինակ, 2010թ. սեպտեմբերի 19-24-ը Բաքվում կայացած զորավարժություններին, բացի երեք պետությունների համապատասխան կառույցների ներկայացուցիչներից, ներկա էին Ադրբեջանում Թուրքիայի, ԱՄՆ, Վրաստանի ռազմական կցորդները և «ԲՈԹԱՇ» ընկերության՝ անվտանգության գծով տնօրեն Իրֆան Օդաբաշը², իսկ 2013թ. սեպտեմբերի 23-27-ը կրկին Բաքվում կայացած զորավարժությունների ընթացքին հետևում էր նաև ՆԱՏՕ՝ Հարավային Կովկասի կապավորների գծով սպան³:

Թեպետ «Eternity» զորավարժությունները շարունակվեցին նաև հետագայում (2014թ. սեպտեմբերի 22-26-ը Վրաստանում՝ «Կրծանիսի» ազգային ուսումնական կենտրոնում⁴, 2015թ. հոկտեմբերի 5-9-ը՝ Անկարայում⁵), ենթադրվում էր, որ համագործակցության այս ձևաչափի շնորհիվ կողմերը խողովակաշարերի անվտանգության հարցում պետք է

¹ Թուրքիայի ներկայացուցիչներից 13-ը ներկայացնում էին ցամաքային ուժերը, 3-ը՝ ժանդարմերին, 3-ը՝ «ԲՈԹԱՇ» պետական խողովակաշարային ընկերությունը, Türkiye, Azerbaycan ve Gürcistan arasında ortak tatbikat, <http://www.milliyet.com.tr/turkiye-azerbaycan-ve-gurcistan-arasinda--font-color--red--ortak-tatbikat--font-/dunya/dunyadetay/21.09.2009/1141636/default.htm> (հասանելի է առ 30.11.2016թ.):

² BTC Security Exercise ETERNITY 2010 Takes Place in Baku, <http://www.botasint.com/Haber.aspx?haberid=180&dil=eng> (հասանելի է առ 30.11.2016թ.):

³ Ադրբեջանում շարունակվում են նավթամուղի անվտանգության ուղղված զորավարժությունները, <http://razm.info/21580> (հասանելի է առ 30.11.2016թ.):

⁴ Saertashoriso sts'avleba "ETERNITY 2014" dasrulda («ETERNITY 2014» միջազգային վարժանքն ավարտվեց, վրաց.), <http://main.mod.gov.ge/c/news/international-training-%E2%80%9Ceternity-2014%E2%80%9D-completed?lang=geo> (հասանելի է առ 30.11.2016թ.):

⁵ Shss-s sp'etsialuri da sagangebo ghonisdziebebis tsent'ris ts'armomadgenlebma monats'ileoba miighes k'omp'iuterul sametauro-sasht'abo sts'avlebashii „ETERNITY 2015“ (ՆԳՆ հատուկ և արտակարգ միջոցների կենտրոնի ներկայացուցիչները մասնակցեցին «ETERNITY 2015» համակարգչային հրամանատարա-շտաբային վարժանքին, վրաց.), <http://police.ge/ge/shss-s-spetsialuri-da-sagangebo-ghonisdziebebis-tsentris-tsarmomadgenlebma-monatsileoba-miighes-komputerul-sametauro-sashtabo-sts'avlebashii-9717> (հասանելի է առ 30.11.2016թ.):

հասնելին որոշ արդյունքների, սակայն 2008թ. օգոստոսի ուժգին պայթյունից հետո արձանագրվեցին խողովակաշարերի վրա հարձակումների և պայթյունների բազմաթիվ նոր դեպքեր: 2012թ. մայիսի 29-ին և հոկտեմբերի 4-ին, 2015թ. օգոստոսի 4-ին և օգոստոսի 24-ին Սարիղամիշի շրջանում հարձակման ենթարկվեց Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը¹:

Վերոթվարկյալից արդեն պարզ է, որ նավթի ու գազի խողովակաշարերի վրա հարձակման դեպքերը տեղի են ունեցել հիմնականում Թուրքիայի տարածքում: Ընդ որում՝ նույն խնդիրն առկա է Թուրքիայի տարածքով անցնող այլ խողովակաշարերի պարագայում ևս, ինչի մասին վկայում է այն փաստը, որ միայն 2004-2010թթ. Թուրքիայի տարբեր շրջաններում գրանցվել է խողովակաշարերի վրա հարձակման 15-ից ավելի դեպք [13, p. 30]: Բաքու-Թբիլիսի-Չեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի վրա բազմաթիվ հարձակումների փաստը վկայում է այն մասին, որ այդ խողովակաշարերը շարունակում են խոցելի մնալ նոր հարձակումների համար, մինչդեռ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեյջանի համագործակցությունը դեռևս չի նպաստել խողովակաշարերի անվտանգության մակարդակի բարձրացմանը (առնվազն Թուրքիայի տարածքում): Այսպիսով, ակնհայտ է, որ էներգետիկ ենթակառուցվածքների՝ որպես հարձակման նոր թիրախների օգտագործումը պետությունների համար ի հայտ է բերում յուրատեսակ մարտահրավերներ, որոնք հետագայում ևս կարող են սպառնալ Բաքու-Թբիլիսի-Չեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի անվտանգությանը՝ հանգեցնելով էներգակիրների մատակարարումների հաճախակի խափանման և նյութական վնասների:

Ինչպես նշվեց, Բաքու-Թբիլիսի-Չեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի անվտանգության ապահովումը կարևոր է ոչ միայն Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեյջանի, այլև տարածաշրջա-

¹ Explosion occurs in Baku-Tbilisi-Erzurum gas pipeline, <http://en.apa.az/azerbaijani-news/developments/explosion-occurs-in-baku-tbilisi-erzurum-gas-pipeline.html> (հասանելի է առ 1.12.2016թ.); Turkish ministry: Explosion on Baku-Tbilisi-Erzurum gas pipeline a terror act, <http://en.trend.az/business/energy/2072926.html> (հասանելի է առ 1.12.2016թ.); PKK attacks Turkey's halted Shah Deniz gas pipeline, <http://www.reuters.com/article/us-mideast-crisis-turkey-pipeline-idUSKCN0Q90Y120150804> (հասանելի է առ 1.12.2016թ.); PKK terrorists attack pipeline in Turkey's northeastern Kars province, <http://www.dailysabah.com/nation/2015/08/24/pkk-terrorists-attack-pipeline-in-turkeys-northeastern-kars-province> (հասանելի է առ 1.12.2016թ.):

նային այլ դերակատարների համար: 2003թ. դեկտեմբերի 3-ին Բաքու ժամանեց ԱՄՆ պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդը, որն Ադրբեջանի նորընտիր նախագահ Իլհամ Ալիևի և պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի հետ այլ հարցերի թվում քննարկեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգության խնդիրը¹: 2004թ. հունիսի 10-ին Բաքու կատարած այցի ընթացքում ԱՄՆ Եվրոպական հրամանատարության հրամանատարի տեղակալ, գեներալ Չարլզ Ուոլդը հայտարարեց, որ նավթամուղիի անվտանգության ապահովումը ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների օրակարգի ամենաարդիական խնդիրներից է²: Այս հարցի քննարկումը նմանատիպ բարձրաստիճան այցելությունների ընթացքում վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ը հավասարապես հետաքրքրված էր նաև Կասպից ծովից էներգետիկ պաշարների արտահանման ուղիների դիվերսիֆիկացմամբ, նաև այդ խողովակաշարերի անվտանգության ու էներգակիրների անխափան փոխադրման խնդիրներով:

Հաշվի առնելով եվրոպական պետությունների համար էներգակիրների ներկրման ուղիների դիվերսիֆիկացման առաջնահերթությունը՝ ԵՄ-ը նույնպես կարևորում է էներգետիկ միջանցքների անվտանգության խնդիրը: 2006թ. նոյեմբերի 7-ին Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահ Մատի Վանհանենը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոն և Իլհամ Ալիևը ստորագրեցին էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագիր, որն ընդգծեց Ադրբեջանից և առհասարակ կասպյան ավազանից դեպի ԵՄ գազի և նավթի տարանցման ապահով, անվտանգ և հուսալի համակարգի ստեղծման կարևորությունը [14]:

¹ Rumsfeld Discusses Tighter Military Ties with Azerbaijan, https://www.washingtonpost.com/archive/politics/2003/12/04/rumsfeld-discusses-tighter-military-ties-with-azerbaijan/050af8a6-6108-4ba5-a2ed-4913f5869566/?utm_term=.d2d177fd92c (հասանելի է առ 2.12.2016թ.):

² Генерал Чарльз Уолд: “Господин Президент, я поздравляю Вас в связи с Вашим очень успешно продолжающимся лидерством в регионе”, президент Азербайджана Ильгам Алиев принял заместителя начальника штаба Европейского командования США, http://azertag.az/ru/xeber/GENERAL_CHARLZ_UOLD_GOSPODIN_PREZIDENT_YA_POZDRAVLYAYU_VAS_V_SVYAZ_I_S_VASHIM_OCHEN_USPESHNO_PRODOLZHAYUSHCHIMSYA_LIDERSTVOM_V_REGION_E_PREZIDENT_AZERBAIDZHANA_ILGAM_ALIEV_PRINYAL_ZAMESTITELYA_NACHALNIKA_SHTABA_EVROPEISKOGO_KOMANDOVANIYA_SSHA-630384 (հասանելի է առ 2.12.2016թ.):

Հետագա տարիներին միջազգային ասպարեզում խողովակաշարերի անվտանգության հարցը ոչ միայն շարունակեց մնալ ուշադրության կենտրոնում, այլև հետաքրքրություն առաջացրեց այդ ուղղությամբ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ընթացող համագործակցության նկատմամբ, ինչի մասին վկայում է «Eternity» գորավարժություններին 2010թ. ԱՄՆ ռազմական կցորդի, իսկ 2013թ.՝ ԱՄՆ ռազմածովային կցորդի և ՆԱՏՕ՝ Հարավային Կովկասի կապավորների գծով սպայի ներկայությունը: Հարավային Կովկասում ՆԱՏՕ կապի գրասենյակի ղեկավար Ուիլյամ Լահյուի խոսքերով՝ այդ գորավարժությունների անցկացումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ դրանց ընթացքում Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը փոխգործակցում են ՆԱՏՕ ստանդարտների հիման վրա [15]:

Բացի բուն էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանությունից և վերջինիս միջազգային նշանակությունից՝ խողովակաշարերի անվտանգության ուղղությամբ տարվող աշխատանքները կարևոր տեղ են զբաղեցնում նաև առհասարակ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմական եռակողմ համագործակցության օրակարգում, ինչը հաճախ շեշտվում է երեք երկրների պաշտպանության նախարարների հանդիպումների ժամանակ: Այսպես, օրինակ, 2014թ. օգոստոսի 18-19-ը Նախիջևանում եռակողմ հանդիպման ժամանակ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան հայտարարեց, որ քննարկման առարկա խնդիրների թվում էր «կրիտիկական ենթակառուցվածքների» պահպանության հարցը¹, մինչդեռ Վրաստանի պաշտպանության մեկ այլ նախարար՝ Թինաթին Խիդաշելին, 2015թ. դեկտեմբերի 17-ին ստամբուլյան հանդիպման շրջանակներում ընդգծեց թուրք-վրաց-ադրբեջանական ռազմական համագործակցության կարևորությունը Եվրոպայի էներգետիկ անվտանգության համատեքստում²: Խողովակաշարերի անվտանգության ապահովման նպատակով սերտ փոխգործակ-

¹ Sammkhrivi shekhvedra nakhichevanshi (Եռակողմ հանդիպում Նախիջևանում, վրաց.), <http://www.mod.gov.ge/c/news/trilateral-meeting-in-nakhchivan-?lang=geo> (հասանելի է առ 4.12.2016թ.):

² Sakartvelos, turketisa da azerbaijanis tavadtsvis minist'rebis shekhvedra (Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների հանդիպում), <http://www.mod.gov.ge/c/news/saqarTvelo-TurqeTi-azerbaijanis%20Tavadtsvis%20ministrebis%20sammxriivi%20Sexvedra?lang=geo> (հասանելի է առ 4.12.2016թ.):

ցության անհրաժեշտությունն ընդգծվեց նաև 2016թ. մայիսի 15-ին Գաբալայում կայացած հերթական հանդիպման ժամանակ¹:

Այսպիսով, Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի տարածքով Կասպից ծովի էներգակիրների փոխադրման համար խողովակաշարերի կառուցումը և գործարկումը, միջազգային մի շարք պայմանագրերով ստանձնած պարտավորությունները վերոնշյալ պետությունների համար սահմանեցին նոր խնդիր՝ ապահովել նավթի ու գազի խողովակաշարերի անվտանգությունը, որի առավել արդյունավետ լուծման համար կողմերը ձեռնամուխ եղան եռակողմ համագործակցության ձևաչափի ստեղծմանը, ինչի հանդեպ ընդգծված հետաքրքրություն և աջակցություն դրսևորվեց նաև միջազգային ասպարեզում: Թեպետ սկզբնական շրջանում խողովակաշարերի պայթեցումներն առավել ևս ընդգծեցին անվտանգության ապահովման կոլեկտիվ ջանքերի անհրաժեշտությունը, հետագայում հարձակումների հաճախակիության պահպանման փաստի հիման վրա կարելի է եզրակացնել, որ երեք պետությունների համատեղ գորավարժությունների միջոցով դեռևս չի հաջողվել էականորեն բարձրացնել խողովակաշարերի անվտանգության մակարդակը (առնվազն Թուրքիայի տարածքում), ուստի նոր հարձակումների վտանգը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության համար շարունակում է մնալ մարտահրավեր, որին կողմերը հարկադրված կլինեն ավելի շատ ուշադրություն դարձնել Տրանսսաստոլիական գազամուղի (*TANAP*) կառուցումից և «Հարավային գազային միջանցքի» գործարկումից հետո:

Փետրվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Host Government Agreement between and among the Government of the Azerbaijan Republic and the State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Caspian Sea) Ltd., Statoil BTC Caspian AS, Ramco Hazar Energy Limited, Turkiye Petrolleri A.O., Unocal BTC Pipeline, Ltd., Itochu Oil Exploration (Azerbaijan) Inc., Delta Hess (BTC) Limited, done on October 17, 2000 in Baku.

¹ Turketma, sakartvelom da azerbaijanma shesadzloa, ertoblivi ts'vrtnebi chaat'aron (Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը, հնարավոր է, համատեղ գորավարժություն անցկացնեն), <http://www.tabula.ge/ge/story/107738-turketma-saqartvelom-da-azerbaijanma-shesadzloa-ertoblivi-tsvrtnebi-chaataron> (հասանելի է առ 16.12.2016թ.):

2. Host Government Agreement between and among the Government of Georgia and the State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Caspian Sea) Ltd., Statoil BTC Caspian AS, Ramco Hazar Energy Limited, Turkiye Petrolleri A.O., Unocal BTC Pipeline, Ltd., Itochu Oil Exploration (Azerbaijan) Inc., Delta Hess (BTC) Limited, done on April 28, 2000 in Tbilisi.
3. Host Government Agreement between and among the Government of the Republic of Turkey and the State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Caspian Sea) Ltd., Statoil BTC Caspian AS, Ramco Hazar Energy Limited, Turkiye Petrolleri A.O., Unocal BTC Pipeline, Ltd., Itochu Oil Exploration (Azerbaijan) Inc., Delta Hess (BTC) Limited, done on October 19, 2000 in Ankara.
4. Host Government Agreement between and among the Government of Georgia and State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Azerbaijan) Limited, Total Fina Elf E&P Caucasian Gas SA, LUKAgip N.V., Statoil Azerbaijan a.s., Naftran Intertrade Co. (Nico) Limited, Turkish Petroleum Overseas Company Limited, done in London on March 14, 2002.
5. Host Government Agreement between and among the Government of the Azerbaijan Republic and State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Azerbaijan) Limited, Total Fina Elf E&P Caucasian Gas SA, LUKAgip N.V., Statoil Azerbaijan a.s., Naftran Intertrade Co. (Nico) Limited, Turkish Petroleum Overseas Company Limited, done in Baku on February 21, 2002.
6. “Sakartvelos shinagan sakmeta saminist'ros st'rat'egiuli milsadenebis datsvis dep'art'ament'is debulebis damt'k'itsebis shesakheb” sakartvelos shinagan sakmeta minist'ris brdzaneba №129, 2016 ts'lis 30 mart'i, k. tbilisi («Վրաստանի ներքին գործերի նախարարության ռազմավարական խողովակաշարերի պահպանության բաժնի կանոնադրության հաստատման մասին» Վրաստանի ներքին գործերի նախարարի №129 հրաման, 2016թ. մարտի 30, ք.Թբիլիսի, վրաց.), <https://matsne.gov.ge/ka/document/download/3238502/0/ge/pdf> (հասանելի է առ 26.11.2016թ.).
7. *Pavliuk, O.*, GUUAM: the Spillover of Politics into Economics?, The Turkish Yearbook of International Relations, Vol. XXVIII, pp. 1-27, 1998.
8. Sakartvelos uakhlesi ist'oriis tsent'raluri arkivi, pondi 1206, aghs'era 2, sakme № 2395 – sakartvelos saelcho bakoshi, sakartvelos sagareo sakmeta minist'rs, bat'on irak'li menagharishvils, № 213, 30.05.1998 (Վրաստանի ժամանակակից պատմության կենտրոնական արխիվ, ֆոնդ 1206, ցուցակ 2, գործ № 2395 - Բարվում Վրաստանի դեսպանություն, Վրաստանի արտաքին գործերի նախարար պարոն Իրակլի Մենաղարիշվիլին, № 213, 30.05.1998, վրաց.):
9. *Մարջանյան Ա.*, Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, Հավելվածներ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013:
10. Sakartveloshi momkhdar k'onplikt'tan dak'avshirebuli pakt'ebis damdgeni damouk'idebeli saertashoriso misia, angarishi, t'omi III (Վրաստանում հակամարտության հետ կապված միջազգային անկախ փաստաթուղթ առաքելություն, զեկույց, հատոր III, վրաց.), 2009.

11. *Tsereteli, M.*, The Impact of the Russia-Georgia War on the South Caucasus Transportation Corridor, Jamestown Foundation, 2009.
12. *Kogan, E.*, Trilateral Military and Energy Security Co-Operation: Reactions From Moscow And Washington, Georgian Foundation for Strategic and International Studies, 2014.
13. *Weiss, A. S., Larrabee, F. S., Bartis, J. T., Sawak, C. A.*, Promoting International Energy Security, Volume 2, Turkey and the Caspian, 2012, RAND Corporation.
14. Memorandum of Understanding on a Strategic Partnership between the European Union and the Republic of Azerbaijan in the Field of Energy, done in Brussels, on 7 November, 2006.
15. Հարցազրույց Ուիլյամ Լահյուի հետ, Թբիլիսի, 16.11.2016թ.:

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Էրիկ Դավթյան

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթի ու գազի խողովակաշարերի անվտանգության ապահովման նպատակով եռակողմ համագործակցության մակարդակում թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից իրականացված քայլերը, այդ համագործակցությունը պայմանավորող իրավապայմանագրային հիմքը: Ներկայացվում են խողովակաշարերի անվտանգության սպառնալիքները և այս համատեքստում եռակողմ համագործակցության մարտահրավերները: Անդրադարձ է կատարվում այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների դիրքորոշմանը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի անվտանգության պահպանման, այդ ուղղությամբ թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ձեռնարկած համատեղ քայլերի հանդեպ:

**ПРОБЛЕМА БЕЗОПАСНОСТИ ЭНЕРГЕТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР
В КОНТЕКСТЕ ТРЕХСТОРОННЕГО СОТРУДНИЧЕСТВА
ТУРЦИЯ-ГРУЗИЯ-АЗЕРБАЙДЖАН**

Эрик Давтян

Резюме

В статье анализируются предпринятые Турцией, Грузией и Азербайджаном совместные шаги по обеспечению безопасности нефтепровода Баку-Тбилиси-Джейхан и газопровода Баку-Тбилиси-Эрзерум, а также соответствующая правовая база, обуславливающая сотрудничество трех стран. Представляются угрозы безопасности трубопроводов и в этом контексте вызовы трехстороннего сотрудничества Турции, Грузии и Азербайджана. Освещена позиция других стран и международных организаций по вопросу охраны нефтепровода Баку-Тбилиси-Джейхан и газопровода Баку-Тбилиси-Эрзерум и совместных мер, предпринятых Турцией, Грузией и Азербайджаном в этом направлении.

**THE ISSUE OF SECURITY OF ENERGY INFRASTRUCTURES
IN THE CONTEXT OF TRILATERAL COOPERATION
BETWEEN TURKEY, GEORGIA AND AZERBAIJAN**

Erik Davtyan

Resume

The article analyzes Turkish, Georgian and Azerbaijani joint efforts aimed at ensuring the security of the Baku-Tbilisi-Ceyhan oil pipeline and Baku-Tbilisi-Erzurum gas pipeline, as well as the legal/contractual bases that underlie the trilateral cooperation on pipeline security issues. The research defines the main challenges for the Turkey-Georgia-Azerbaijan trilateral cooperation emanating from pipeline security threats. The article also presents the position of other states and international organizations concerning the pipeline security issue and joint steps of Turkey, Georgia and Azerbaijan in this regard.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՀՆԱՐՔԸ. ԻՆՉ ՆՊԱՏԱԿ Է ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԱՆԿԱՐԱՆ

Հայկարամ Նահապետյան՝

Բանալի բառեր՝ Հայաստան, Թուրքիա, Հայոց ցեղասպանություն, մերժողականություն, Երևան, Անկարա, Ռեջեփ Թայիփ Էրդոգան, Յուսուֆ Հալաչոլու, Դեյվիդ Գաունթ, լորդ Էյվբուրի, Արա Սարաֆյան, Կապույտ գիրք, օսմանյան արխիվներ:

Ս.թ. հունվարի 26-ին Դանիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության օրինագծի հաստատմանը հաջորդեց այս թեմայով թուրքական դիվանագիտության ամենատարածված թեզի կրկնությունը. ԱԳ նախարար Մևուլթ Չավուշօղլուն հայկական կողմին հրավիրեց պատմաբանների հանձնաժողով ձևավորել՝ քննելու 1915թ. իրադարձությունները: «Թող բոլորը բացեն արխիվները, որից հետո մենք կընդունենք ցանկացած արդյունք», - հայտարարեց նա¹:

Առնվազն 2001 թվականից, երբ ձևավորվեց Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը (*TARC*), թուրքական կողմը ժամանակ առ ժամանակ հնչեցնում է պատմությունն ուսումնասիրելու և գնահատական տալու կոչը: Հայկական կողմի վերաբերմունքն այս խնդրում ի սկզբանե առավելապես բացասական էր: Ընդունված տեսակետ է, որ ցեղասպանության ենթարկված հանրությունը մերժողականների հետ չի քննում դրա պատմական եղելության հարցը: Ըստ ականավոր ամերիկացի հրեա ցեղասպանագետ Դեբորա Լիպշդատի՝ «Ցեղասպանության մերժողականությունը, անկախ նրանից՝ խոսքը հայերի հանդեպ թուրքերի, թե հրեաների հանդեպ նացիստների գործադրածի մասին է, պատմության վերագնահատման քայլ չէ: ...Ազատ խոսքը մերժողականներին չի ապահովում «հակադիր կողմ» հանդես գալու

¹ Հ1 հեռուստաընկերության սեփական թղթակից, ԱՄՆ:

¹ «Չավուշօղլուն կոչ է արել Հայաստանին համատեղ հանձնաժողով ստեղծել», 28.01.2017; <http://www.panorama.am/am/news/2017/01/28/Չավուշօղլու-հին-երգ/1717466>

օրինական իրավունք, քանի որ «հակադիր կողմ»՝ որպես այդպիսին, գոյություն չունի»¹:

Եղել են թուրքական առաջարկի մերժման պաշտոնական արձագանքներ, մասնավորապես 2005թ. այն ժամանակվա վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից, որը հայտարարեց, թե եղելությունը «վերահաստատելու խնդիր չի տեսնում»²:

Իսկ ըստ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության, «կարելի է քննարկել Հայոց ցեղասպանության իրականացման պատճառների կամ եղանակների հարցը, բայց ոչ փաստն ինքնին»³:

Հանձնաժողովի հարցում հայկական կողմի հիմնականում բացասական մոտեցումը թուրքական քարոզչամեթոդների փորձում է շահարկել քարոզչական դաշտում: Նույն Չավուշօղլուն Դանիայի որոշմանը հաջորդած հայտարարության մեջ շեշտել էր. «...մինչև օրս Հայաստանը դրան չի գնացել: Ինչո՞ւ: Իրենք էլ գիտեն, որ ցեղասպանություն չի եղել, բայց արտասահմանյան լոբբիստական ուժերի հետ շարունակում են համագործակցել Թուրքիայի դեմ»: 2011թ. ապրիլին նույն կերպ Վաշինգտոնում խոսեց Թուրքիայի այն ժամանակվա փոխվարչապետ և պետնախարար Բյուլենթ Արընչը: Նշված ելույթին դեռ կանդրադառնանք:

Մինչդեռ ոչ բոլոր դեպքերում է, որ հայկական ու նաև ոչ հայկական շրջանակները հրաժարվել են Մեծ եղեռնի թեմայով Թուրքիայի հետ երկկողմ կամ բազմակողմ հանձնաժողովում հնարավոր աշխատանքից: Այդ դեպքում ինչո՞ւ պատմական քննարկում տեղի չունեցավ: Փաստերի համադրությունից հետևում է, որ նման հեռանկարի իրական ուրվագծեր ստանալու դեպքում հրաժարվողը եղել է... Թուրքիան:

Այսօրինակ «փախուստների» բազմակի կրկնությունից կարող է հետևել, որ հանձնաժողովի մասին թուրքական ողջ նախաձեռնությունն, ըստ էության, կեղծիք է: Հետազոտության նպատակն է հիմնավո-

¹ *Վահագն Դադրյան*, «Հայոց ցեղասպանության թուրքական մերժողականության հիմնական տարրերը. աղճատման և կեղծիքի հետազոտություն», հավելված 4, «Ցեղասպանության մերժողականության մասին», Ջորջյան ինստիտուտ, 1999թ; էջ 81 (անգլ. «The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification»):

² «Վարչապետ Մարգարյանը մերժում է Թուրքիայի առաջարկը», Ազատություն ռադիոկայան, 18.04.2005; <http://www.azatutyun.am/a/1576565.html>

³ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նամակը վարչապետ Էրդողանին, <http://www.genocidescholars.org/sites/default/files/document%09%5Bcurrent-page%3A1%5D/documents/Turkish%20State%20Denial%20Open%20Letter.pdf>

րել, որ հարևան երկիրն ընդհանրապես նպատակ չունի հայերի կամ ոչ հայերի հետ Մեծ եղեռնի հարց ուսումնասիրելու: Թաքուն եղել և շարունակում է մնալ լավագույն «լուծումը» պաշտոնական Անկարայի համար, իսկ «պատմական երկխոսության» հնարքը շահարկվում է քարոզչական և դիվանագիտական նպատակներով՝ միջազգային հանրությանը համոզելու, թե իբր թուրքերը պատրաստ են երկխոսության, հայերը՝ ոչ:

Եթե պաշտոնական Անկարան իրոք ցանկանար հարցի ազատ քննարկում հանձնաժողովի կամ այլ մակարդակներով, ապա մոտեցումը շատ ավելի գործնական պետք է լիներ: Մեծ եղեռնը ուղղակիորեն վերաբերում է հայերին, բայց համամարդկային խնդիր է՝ դատապարտված գրեթե 30 երկրների կողմից: Ակադեմիական կամ հանրային քննարկում կազմակերպելու համար իմաստ չունի դիմել գուտ հայկական կողմին: Միջազգային գիտական շրջանակներում շատ մեծ թիվ են կազմում նշված խնդրի ոչ հայ մասնագետները, որոնց Անկարան մինչև օրս կարող էր հրավիրել հանձնաժողով և աշխատել նրանց հետ՝ առանց հայկական կողմի արձագանքին իբրև թե սպասելու: Ավելին, ինչպես ցույց կտանք հաջորդող օրինակներում, Թուրքիան ինքն է միշտ խուսափել միջազգային ասոյաններից ստացված նման առաջարկներից:

Թուրքիան կարող էր նման «ձշմարտության» հանձնաժողով ձևավորել էլ ավելի պարզեցված ձևով՝ իր երկրի ներսում, քանի որ այստեղ էլ արդեն քիչ թիվ չեն կազմում Մեծ եղեռնի փաստը հրապարակայնորեն ընդունող թուրք, քուրդ կամ պոլսահայ պատմաբանները, հասարակական-քաղաքական գործիչներն ու իրավապաշտպանները: Միջազգային ձևական ելույթների փոխարեն և առանց «հեռու գնալու»՝ նույն Ստամբուլում կարելի էր ստեղծել մի հանձնաժողով՝ այնտեղ հրավիրելով, օրինակ, թուրքերի և հայերի հաշտեցման ուղղությամբ աշխատող պոլսահայ լրագրող Հրանտ Դինքին, լրագրողներ Էթիեն Մահչուփյանին, Օրալ Չալըշլարին, Բասքըն Օրանին, իրավապաշտպան Էրեն Քեսքինին, գործիչ Գարո Փայլանին, պատմաբաններ Ահմեթ Ինսելին, Հալիլ Բերքթային, ականավոր գրող Ահմեթ Ալթանին կամ նրա եղբայր Մեհմեթ Ալթանին, որը հրապարակախոս է, և վերջապես, գրականության Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուքին: Այս անձինք տարիներով բնակվում էին Ստամբուլում, բավական հաջող տիրապետում խնդրին, և վերջիններիս հետ հանձնաժողովի հարցը բառացիորեն օրերի ընթաց-

քում կարելի էր լուծել՝ մեկուկես տասնամյակ անորոշ հայտարարությունների փոխարեն:

Ներկայացնենք մի քանի օրինակներ, երբ երկխոսության առաջարկը սկսել էր որոշակի գծագրումներ ստանալ, և ուսումնասիրենք Թուրքիայի քայլերը, որոնք հաջորդել են: Կամ չեն հաջորդել:

2005թ.- Հալիլ Բերքթայի կոչը կառավարության «դատապաշտպան-պատմաբաններին». 1994թ. Թուրքիայի կառավարության կողմից հրատարակվեց «Հայերն օսմանյան փաստաթղթերում» հատորյակը: Այն օսմաներեն վավերագրերի ժողովածու է, որոնք իբրև թե կոչված էին հերքելու Հայոց ցեղասպանության փաստը, այսինքն՝ հերքելու անհերքելին:

Թուրք վայ-պատմաբանների անուշադրության շնորհիվ հատորյակում տպվեցին մեծ թվով փաստաթղթեր, որոնք ոչ թե չէին հերքում, այլ վերստին հիմնավորում էին ցեղասպանության եղելությունը: Մասնավորապես, 1915թ. հունիսի 29-ին Թալեաթը Դիարբեքիի նահանգապետին ուղղած հեռագրում հստակ նշում է, որ գիշերային օպերացիայի ընթացքում Մարդին քաղաքից տարհանվել են հայեր և այլ քրիստոնյաներ ու «ոչխարների պես մորթվել»: «Հայերի դեմ իրականացվող քաղաքական և կարգապահական միջոցառումները ոչ մի դեպքում չպետք է իրականացվեն այլ քրիստոնյաների դեմ, քանի որ հնարավոր է շատ բացասական ազդեն հանրային կարծիքի վրա»¹, - գրել էր Թալեաթը:

Թերևս, վայ-պատմաբաններն ուզեցել էին հանրությանը ցույց տալ, թե Թալեաթը հրահանգել է այլ քրիստոնյաների չվնասել, մինչդեռ հեռագրի կոնտեքստը ակնհայտորեն այլ իմաստ ունի:

Թուրքիայի Սաբանջը համալսարանում է աշխատում պատմագիտության պրոֆեսոր Հալիլ Բերքթայը, որը Հայոց ցեղասպանության ճանաչման ակտիվ աջակիցն է: 2005թ. մարտին «Հյուրիեթին» տված հարցազրույցում Բերքթայը նշել է, որ սույն փաստաթուղթը հիմնավորում է Մեծ եղեռնի փաստը: «Ես տասը, քսան, երեսուն, քառասուն, հիսուն, հարյուր կամ հարյուր հիսուն հոգուց բաղկացած ժյուրիի դեմ փաստաթղթի անզլերեն կամ ֆրանսերեն թարգմանված ու նոտարով

¹ Թուրքիայի վարչապետի արխիվային գլխավոր վարչություն, «Օսմանյան փաստաթղթերում հայերը – 1915-1920», Սնկարա 1994, էջ 69; փաստաթուղթ 71 (թուրք. «Osmanli Belgelerinde Ermeniler 1915-1920»):

հաստատված թարգմանությամբ «պետության փաստաբան»-պատմաբանների և պաշտոնաթող դիվանագետների դեմ իմ կարծիքը միայնակ պատրաստ եմ պաշտպանել», - հայտարարել էր նա¹:

Բերքթայն իր հետ նույն քաղաքում ու նույն երկրում ապրող «պալատական» պատմաբաններին մարտահրավեր նետեց, հրավիրեց երկխոսության՝ առաջարկելով սկսել Թուրքիայի կառավարական արխիվից վերցված ու պետության տպած վավերագրի քննարկումից: Մինչև օրս որևէ թուրք մերժողական դրական չի պատասխանել նրա առաջարկին:

Եթե թուրք գեղծարարները Մեծ եղեռնի հարցում չեն երկխոսում իրենց կողքին բնակվող պատմաբանի հետ, ի՞նչ իմաստ ունի դիմել Հայաստանի Հանրապետությանը կամ Սփյուռքին:

2001թ.- Փախուստ TARC-ից. 2001թ. հուլիսի 9-ին Ժնևում ձևավորվեց Թուրք-հայկական հաշտության հանձնաժողովը (*TARC*): Կառույցի նպատակն էր աջակցել հայերի և թուրքերի միջև փոխըմբռնմանը և բարյացակամությանը²:

Հիմնադրման պահին կառույցն ուներ 10 անդամ, 6-ը՝ թուրք, 4-ը՝ հայ, որոնք ներկայացնում էին քաղաքական, գիտական, լրբհաստական շրջանակները՝ Գյունդուզ Աքթան (նախկին դեսպան), Իլթեր Թյուրքմեն (ԱԳ նախկին նախարար), Օզդեմ Մանբերք (նախկին դեսպան), Վան Գրիգորյան (ԱՄՆ Հայկական համագումարի նախագահ), Ալեքսանդր Արզումանյան (ԱԳ նախկին նախարար) և այլն: Քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանի խոսքով, *TARC*-ը ձևավորվել էր Պետքարտուղարության ջանքերով և մասնակի ֆինանսավորվում էր ԱՄՆ, Ավստրիայի, Նորվեգիայի և Շվեդիայի կառավարական ծրագրերով³: Նման կարծիքի էր նաև թուրք պատմաբան Քամեր Քասըմը⁴:

¹ «Ի՞նչ է տեղի ունեցել 1915թ., Հալիլ Բերքթայ», 01 հունիսի 2005, «Հյուրիեթ» օրաթերթ (թուրք. «1915'te ne oldu; Halil Berktaş»), <http://www.hurriyet.com.tr/1915-te-ne-oldu-324069>

² *Մուրադ Մուրադյան*, «Հաշտություն. թուրք-հայկական հաշտության հանձնաժողովի դեպքը», էջ 5 (անգլ. Moorad Mooradian, «Reconciliation: A Case of the Turkish-Armenian Reconciliation Commission»), http://scar.gmu.edu/wp_24_mooradian.pdf

³ Նույն տեղում, էջ 10, տե՛ս նաև «Ազգ», հունվարի 23, 2004:

⁴ *Քամեր Քասըմ*, «Թուրք-հայկական հաշտության հանձնաժողով. բաց թողնված հնարավորություն» (անգլ. Kamer Kasim, «Turkish Armenian Reconciliation Committee: Missed Opportunity»), <http://www.eraren.org/index.php?Page=Dergiler&IcerikNo=166&Lisan=en>

«Նյու Յորք թայմսում» տպվեց Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Էլի Վիգելի խիստ դրական հրապարակումը *TARC*-ի մասին: «Տեղի ունեցածը հրաշք է: Եթե թուրքերը և հայերը կարող են հանդիպել և երկխոսել, ուրեմն՝ բոլորը կարող են», - նշել էր նա¹:

TARC-ի ձևավորման առաջին պահից նկատելի էր հակասականությունը. մի կողմից՝ միությունն աշխատանք էր տանելու հաշտության և, դեսպան Աքթանի ձևակերպմամբ, «ապագայի համար նոր հորիզոններ բացելու համար», մյուս կողմից՝ հայտարարվել էր, թե չեն քննելու Հայոց ցեղասպանության հարցը: Որքանով է առանց Մեծ եղեռնի խնդրի կարգավորման հայ-թուրքական վերջնական հաշտությունը իրական դժվար է ասել: «Հանձնաժողովը դժվարություններ ունի՝ կապված այն հարցի հետ, թե ինչպես լավագույնս գործադրի իր մանդատը», - նկատել էր Անցումային շրջանի արդարադատության միջազգային կենտրոն (*ICTJ*) նյույորքյան կառույցը²: Միջազգային իրավաբաղաբական խնդիրների և կոնֆլիկտների վերլուծությամբ զբաղվող *ICTJ*-ն, ի դեպ, նույնպես ստեղծվել էր 2001թ., և *TARC*-ը կազմավորման օրից ակտիվ գործակցում էր վերջինիս հետ:

2001թ. տարեվերջին խումբն, այնուամենայնիվ, անդրադարձավ Մեծ եղեռնի հարցին: Նոյեմբերի 19-ին Նյու Յորքում հանդիպումից հետո կառույցի համակարգող Դեյվիդ Ֆիլիպսը հայտարարեց, որ *ICTJ*-ն ուսումնասիրելու էր, թե որքանով էր 1915թ. տեղի ունեցածը համապատասխանում ՄԱԿ 1948թ. ցեղասպանության հռչակագրին:

Այդ շրջանում, ինչպես զգալի չափով նաև մեր օրերում, Հայկական հարցը Թուրքիայում թաքու էր, առավել ևս՝ *TARC*-ի թուրք անդամների համար, որոնք, Վան Գրիգորյանի բնութագրմամբ, «անկասկած, կապի մեջ էին իրենց կառավարության հետ»³: Դա ցայտուն երևում է հետևյալ օրինակից. *TARC*-ը երբևէ նիստ չգումարեց Երևանում, քանի որ այդ դեպքում կանգնելու էր Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցի հարցը, ինչին «հաշտություն որոնելու» կոչված թուրք մասնակիցները չէին

¹ *Մ.Մորադյան*, նշվ. աղբյուր, էջ 5:

² *ICTJ*-ի տարեկան զեկուցագիր, էջ 14 (անգլ. «ICTJ Annual Report 2001-2002; Turkish-Armenian Reconciliation Commission»), https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Annual_Report_2001-2002.pdf

³ «Թուրք-հայկական հաշտություն», 17.07.2001, «Վաշինգտոն թայմս» (անգլ. «Turkish-Armenian Reconciliation?»).

համաձայնում: Այսպիսով, *ICTJ*-ին դիմումը թուրքական կողմի համար ռիսկային էր, քանի որ դրական եզրակացության հեռանկարը չէր համատեղվում թուրքական պետական թաբուի հետ: Կարճ ժամանակ անց թուրք մասնակիցները միակողմանի հրաժարվեցին *ICTJ* ներկայացված դիմումից¹: Սակայն *ICTJ*-ն, այնուամենայնիվ, հրապարակեց որոշումը՝ 2003թ. փետրվարի 10-ին հայտարարելով, որ տեղի ունեցածը ցեղասպանություն էր: «...(1915թ.- Հ.Ն.) դեպքերն իրականացնողների առնվազն մեկ մասը տեղյակ էր, որ իրենց գործողությունների հետևանքը կլինեք Արևելյան Անատոլիայի հայերի ամբողջական կամ մասնակի բնաջնջումը: Տեղյակ լինելը կամ այս ուղղությամբ միտումնավոր գործելը պարունակում է ցեղասպանական մտադրության հատկացուցիչ»²- նշված էր *ICTJ*-ի իրավաբանական եզրակացության մեջ²:

Այն պահին, երբ նյույորքյան կառույցը հրապարակեց իր որոշումը, Թուրքիայում արդեն իշխանության էր եկել Արդարություն և բարգավաճում կուսակցությունը:

Շարունակ խոսելով հանձնաժողովի ձևավորման անորոշ առաջարկի մասին՝ Էրդողանի կառավարությունը միտումնավոր մոռացության է տալիս այն, ինչն իրականում չեն կարող չիմանալ.

1. Հանձնաժողով արդեն եղել է;
2. Երբ հանձնաժողովն ուսումնասիրում էր Հայոց ցեղասպանության հարցը, թուրք մասնակիցներն էին, որ հետ վերցրին դիմումը;
3. Հանձնաժողովի աշխատանքի արդյունքում իրավաբանական գնահատական է տրվել, որ տեղի ունեցածը ցեղասպանություն էր:

2005թ.- Նամակ ՀՀ նախագահին. Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի օրերին՝ 2005թ. ապրիլի 14-ին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը նամակ գրեց ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որում առաջին անգամ պաշտոնապես բարձրաձայնեց համատեղ

¹ *Մ.Մուրադյան*, նշվ. աղբյուրը, էջ 19:

² «ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի հռչակագրի կիրարկելիությունը 20-րդ դարակգրին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ», էջ 17, <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf> (անգլ. «The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events Which Occurred During the Early Twentieth Century»), <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf>

հանձնաժողովի մասին: Էրդողանը նշել էր, որ «իր տեսակետը կիսում է նաև ընդդիմադիր հիմնական կուսակցության ղեկավար Դենիզ Բայքալը»¹:

Միանգամայն իրատեսական կարելի է համարել ՀՀ նախագահի՝ մոտ 10 օր անց հետևած պատասխանի այն կետը, որ Երևանի ու Անկարայի միջև առկա են ոչ միայն պատմական, այլև քաղաքական խնդիրներ (օրինակ՝ փակ սահմանը): Ուստի, Երևանն առաջարկեց ձևավորել ոչ թե գուտ պատմաբանների, այլ միջպետական հանձնաժողով: «... Կարող է գումարվել միջկառավարական հանձնաժողով՝ քննելու երկու երկրների միջև առկա ցանկացած և բոլոր խնդիրները՝ նպատակ ունենալով լուծել դրանք և հասնել փոխըմբռնման», - նշված էր նախագահ Ռոբերտ Քոչարյանի նամակում²:

Պատասխանն առնվազն չէր բացառում, որ միջպետական հանձնաժողովում, այլ քաղաքական հարցերի թվում, հնարավոր էր անդրադարձ նաև անցյալին: Թե ինչ համատեքստում՝ այլ հարց է: Ապրիլի 30-ին ԱԳՆ խոսնակ Նամրկ Թանը հայտարարեց, որ Հայաստանից ստացված նամակը դրական դիտանկյունով է գնահատվում³: «Այս հայտարարությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. Անկարան Քոչարյանի նամակը կտրուկ չի մերժի», - գրեց թուրքական մամուլը⁴:

Թվում էր, թե կողմերը մոտենում էին իրար և համակողմանի երկխոսությունը հնարավոր էր: Բայց, չնայած «դրական դիտանկյունով գնահատելու» մասին դիվանագետ Թանի հայտարարությանը՝ Անկարայի պատասխանը Երևանին մինչև օրս չի ստացվել: Միջպետական հանձնաժողովում բոլոր հնարավոր հարցերը քննել Անկարան չցանկացավ...

¹ Տե՛ս 2005թ. ապրիլի 15-ի Թուրքիայի ԱԳ նախարարության հաղորդագրությունը, http://www.mfa.gov.tr/no_62---15-nisan-2005_-basbakan-sayin-recep-tayyip-erdogan_in-ermenistan-devlet-baskani-robert-kocaryan_a-gonderdigi-mektup-hk_tr.mfa

² Թաթոյլ Հակոբյան, «Քոչարյանի պատասխանը Էրդողանին կամ Տեր-Պետրոսյանը ճիշտ չի հիշում», 11.04.2016; <http://www.aniarc.am/2016/04/11/kocharian-erdogan-ltp/>

³ Տե՛ս Թուրքիայի ԱԳ նախարարության 2005թ. ապրիլի 18-ի հաղորդագրությունը, http://www.mfa.gov.tr/sc_16---28-nisan-2005_-disisleri-bakanligi-sozcusu-namik-tan_in_-ermenistan-cumhurbaskani-robert-kocaryan_in-sayin-basbakanimiza-gonderdigi-cevabi-mektup_hakkinda-kendisine-yoneltlen-bir-soruya-cevabi.tr.mfa

⁴ «Անկարայում քննարկում են Քոչարյանի նամակը», «Բիրգյուն», 29.04.2005 (թուրք. «Ankara'da Koçaryan'ın mektubu tartışılıyor»), <http://www.birgun.net/haber-detay/ankara-da-kocaryan-in-mektubu-tartisiliyor-23269.html>

2011թ. ապրիլին Վաշինգտոն էր այցելել Թուրքիայի այն ժամանակվա փոխվարչապետ և պետնախարար Բյուլենթ Արընչը, որը ելույթ ունեցավ Մարշալի գերմանական հիմնադրամում¹: Հանդիպմանը Հայաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ լրբբիստ Քեյթ Նահապետյանի հարցին ի պատասխան՝ Արընչը հիշեց 2005թ. Էրդողանի նամակը, ապա ստեց՝ ասելով, թե մինչև օրս սպասում են Հայաստանի պատասխանին: Սա՝ այն դեպքում, երբ Արընչը 2011թ. դեռ շատ մոտ էր Էրդողանի հետ, ընդհանրապես համարվում է ԱԶԿ կուսակցության հիմնադիրներից, և խիստ անհավանական է, որ տեղյակ չլիներ Երևանից ստացված պատասխանի մասին²: Նույնիսկ եթե տարիքի հետ Արընչի հիշողությունն իրոք նահանջել էր, ապա նրա կողքին նստած էր ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան... Նամրկ Թանը: ԱԳ նախարարության նախկին խոսնակ, իսկ 2010-2014թթ. ԱՄՆ-ում դեսպան Թանը չմիջամտեց և չուղղեց Արընչի սխալը, թեև 2005թ. նա դրական դիտանկյունով էր գնահատում Երևանից ստացված նամակը:

Հայաստանի պատասխանը հնարավորություն էր տալիս անվազն շարունակել երկխոսությունը: Եվ եթե Թուրքիան ստում է 2005թ. նամակագրության թեմայով, արդյո՞ք դա ևս մի հիմնավորում չէ, որ Թուրքիան ստում է 1915թ. մասին ընդհանրապես:

2005թ.- Լորդ Էյվբուրիի կոչը. «Հայերի վիճակն Օսմանյան կայսրությունում» գիրքը, որը հայտնի է նաև որպես Կապույտ գիրք, առաջին անգամ տպվել է Մեծ Բրիտանիայի «Վելինգտոն Հաուս» ռազմական քարոզչության մարմնի կողմից 1916թ.: Հեղինակներն էին իրավաբան, դիվանագետ, վիկոնտ Ջեյմս Բրայսը և պատմաբան Արնոլդ Թոյնբին: Գրքում ներկայացված են ցեղասպանության մասին մեծ թվով վկայություններ, վերլուծություններ և 150-ի չափ փաստաթղթեր: 1918թ. նոյեմբերի 13-ին վիկոնտ Բրայսը Լորդերի պալատում, ավելի կոշտ դիրքորոշում պահանջելով պատերազմում պարտված Թուրքիայի հանդեպ,

¹ «Քաղաքական բարեփոխումները Թուրքիայում», 07.04.2011 (անգլ. «Political Reforms in Turkey»), <http://www.gmfus.org/events/political-reforms-turkey>

² «Արդյոք Բյուլենթ Արընչը՝ ԱԶԿ-ի հիմնադիր հայրը, Էրդողանի հետ վեճի պատճառով կհեռանա», «Ալ-Մոնիթոր», 17.11.2013; անգլ. «Will Bulent Arinc, founding father of AKP, Depart Over Dispute with Erdogan», <http://www.al-monitor.com/pulse/originals/2013/11/turkey-bulent-arinc-akp-politics.html>

ջարդերի մասին գիտելիքները թարմացնել ցանկացողներին խորհուրդ էր տալիս նորից կարդալ Կապույտ գիրքը, «որի մեջ դուք կգտնեք արձանագրությունն այն սարսափելի կոտորածների, որոնք ամենուրեք ծանուցվում են տվյալ պատմության մեջ»¹:

2005թ. ապրիլի 13-ին Թուրքիայի մեջլիսի բոլոր անդամները և վարչապետ Էրդողանը ստորագրեցին Բրիտանիայի խորհրդարան ուղարկվելիք 5 էջանոց նամակի տակ, որով պահանջեցին ընդունել, թե «գիրքն անվատահեղի սկզբնաղբյուր է, սխալ է, Արնոլդ Թոյնբին ինքն ավելի ուշ ընդունել է սխալները» և այլն²:

Նամակը հեղինակել էր ընդդիմադիր պատգամավոր, պաշտոնաթող դեսպան Շյուքրյու Էլեքդադը:

Թուրքիայի խորհրդարանի բոլոր 550 պատգամավորները միահամուռ կեղծիք որակեցին մի գիրք, որն իրենցից նույնիսկ մեկն ամենայն հավանականությամբ երբևէ տեսած չկար, քանի որ այն Թուրքիայում չէր տպվել: Թուրքերեն տպագրությունը տեղի ունեցավ ավելի ուշ, այն էլ Անգլիայում, Կոմիտաս բրիտանահայ ինստիտուտի կողմից: «Մինչ Էրդողանն ասում է, թե պատրաստ ենք առերեսվել անցյալի հետ, ԹԱՄԺ-ը Անգլիայի խորհրդարանին կոչ է անում նախաձեռնություն հանդես բերել», - նամակի առիթով ինքնավստահ կերպով գրեց թուրքական կայքը³:

Անգլիացիները հանդես բերեցին նախաձեռնություն, և 2006թ. հունվարի 27-ին (Հոլոքոստի հիշատակի օրը Եվրոպայում) բրիտանական խորհրդարանի 33 անդամներ, Լորդերի պալատի մարդու իրավունքների հանձնաժողովի փոխնախագահ Էրիկ Էյվերուրիի, լորդ Բիֆենի և լորդ Արչերի նախաձեռնությամբ պատասխանեցին, որ գրքում սխալներ չկան, Թոյնբին երբևէ սխալ չի ընդունել, դիվանագետների և միսիոներների հարյուրավոր վկայությունները հիմնավորում են

¹ «Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում», Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտ, էջ 51, Երևան, 2004:

² https://www.tbmm.gov.tr/eyayin/GAZETELER/WEB/MECLIS%20BULTENI/2469_2005_0000_0116_0000/0031.pdf;

տե՛ս նաև http://chgs.umn.edu/histories/occasional/Akcam_Anatomy_of_Denial.pdf, Anatomy of Genocide Denial: Academics, Politicians, and the “Re- Making” of History.

³ «Անգլիայից պատասխան է եկել Կապույտ գրքին», «Գազեթե Վաթան», 30.01.2006 (թուրք. İngiltere'den Mavi Kitap mektubuna cevap geldi);

<http://www.habervitrini.com/gundem/ingiltereden-mavi-kitap-mektubuna-cevap-geldi-713398>

գիրքը և այլն: «ԹԱՄԺ-ը Կապույտ գրքի թեմայով բավարար տեղեկացված չէ: Թուրքիայի մեջլիսին առաջարկում ենք հետ վերցնել նամակը և հրավիրում քննարկման հայկական հարցով», - նշված էր պատասխանում¹: Սակայն թուրքական նամակի հեղինակ Շյուքրյու Էլեքդաղը բավարարվեց միայն «նամակը հետ վերցնելու մասին» կոչին արձագանքելով՝ հայտարարելով, որ նման քայլի չեն դիմի²: Իսկ երկխոսության առաջարկի մասով ոչ Էլեքդաղը, ոչ 550 պատգամավորներից որևէ մեկը որևէ «նախաձեռնություն հանդես չբերեց»: 2006թ. նոյեմբերի 15-ին լորդ Էյվբուրին գրեց իր բլոգում. «...առաջարկել էինք երկխոսություն բրիտանացի և թուրք պատգամավորների միջև, որոնք, իրենց կողքին ունենալով նաև ակադեմիական փորձագետներ, կուսումնասիրեին (թուրքական- Հ.Ն.) վկայության իրավացիությունը: Երբ որևէ պատասխան չեկավ, ես բոլոր թուրք պատգամավորներին անհատապես նամակ գրեցի՝ հարցնելով, թե արդյոք կցանկանային երկխոսություն վարել: Ոչ մեկը չպատասխանեց»³: Էյվբուրին նկատում է, որ ոչ մեջլիսը հավաքական առումով, ոչ պատգամավորներն անհատապես պատրաստ չէին բաց քննարկման: «Բայց հրավերը դեռ ուժի մեջ է: Հույս ունեմ այս հայտարարությամբ որոշ թուրք պատգամավորների կմղեմ խիզախության, որ երկխոսություն վարեն», - իր բլոգի վերջում նշել էր պատգամավոր և հումանիստ լորդ Էյվբուրին:

2016թ. փետրվարի 14-ին լորդ Էրիկ Բարոք Էյվբուրին մահացավ: Ոչ մի թուրք մեջլիսական այդպես էլ չարձագանքեց նրա կոչին...

2007թ.- Արա Սարաֆյանի առաջարկը. 2006թ. մարտի 16-ին Ստամբուլի համալսարանում գիտաժողովի էր մասնակցում Մեծ Բրիտանիայի Կոմիտաս ինստիտուտի տնօրեն Արա Սարաֆյանը: Ներկա էր նաև Թուրքիայի Պատմության պետական ինստիտուտի տնօրեն Յուսուֆ Հալաչոլուն, որն իր ելույթում կրկնել էր համատեղ հանձնաժողովի միջոցով պատմությունը քննելու առաջարկը⁴: 2007թ. փետրվարի

¹ Նույն տեղում:

² Էլեքդաղ. ԹԱՄԺ-ը հետ չի առնի Կապույտ գրքի նամակը, 30.01.2006, <http://www.sondakika.com/haber/haber-elekdag-tbmm-mavi-kitap-mektubunu-geri-cekmez/>

³ Հայոց ցեղասպանություն, 15.11.2006 (անգլ. Armenian Genocide), <http://ericavebury.blogspot.com/2006/11/armenian-genocide.html>

⁴ «Ցեղասպանության համատեղ հանձնաժողով», «Ռադիկալ» օրաթերթ, 17.03.2006 (թուրք. Ortak 'soykirim' komisyonu), <http://www.radikal.com.tr/turkiye/iortak-soykirim-komisyonu-i-774734/>

22-ին «Նոքթա» ամսագրին տված հարցազրույցում Արա Սարաֆյանը նշել էր. «Մի իրադարձային հետազոտություն անենք՝ զբաղվենք Խարբերդի դաշտով... Այս աշխատանքը պետք է լինի թափանցիկ և գիտական... Թող Թուրքիայի պատմաբանները ներկայացնեն Խարբերդից տարագրված և այլ վայրերում փոխադրված հայերի մասին իրենց ձեռքին եղած օսմանյան արձանագրությունները»¹: Թուրքական «Ռադիկալ» թերթի հոդվածն այս թեմայով վերնագրված էր «Երկխոսության հույս», նույն թերթի սյունակագիր Իսմեթ Բերքանը խորհուրդ էր տալիս «ձեռքից բաց չթողնել հնարավորությունը»²:

Հետևեցին թուրք քաղաքական գործիչների հայտարարությունները. պատգամավորներ Մեթին Քաշքոզլու (ԱԶԿ). «Առողջ մտեցում է, թող պարզվի ճշմարտությունը», Օրհան Էրդեմ (ԱԶԿ). «Պատմաբանների հանձնաժողովի ձևավորումը օրակարգ էինք բերել, դրական քայլ է», խոսեցին նաև Ինալ Բաթուն (ԺՀՊ, Թուրքիայի խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի անդամ), ազգայնական Մեհմեթ Շանդըրը և ուրիշներ³: Մի պահ նորից կարող էր թվալ, թե պատմական քննարկման հարցն իրական ուրվագծեր է ստանում:

Գործի անցավ զեղծարար և մերժողականության «չեմպիոն» Յուսուֆ Հալաչոլուն, որը հակասող հայտարարություններով հարցն անորոշության տարավ: Ըստ «Ռադիկալ» օրաթերթի, լրագրողների առաջին հարցմանն ի պատասխան նա ասել էր, թե ընդունում է առաջարկը, ապա մեկ օր անց հայտարարել, թե դեռ չի ընդունել, քանի որ անձամբ իրեն նման առաջարկ Սարաֆյանը չէր ուղարկել⁴: «Սպասում եմ պաշտոնական դիմումի», - նշել էր Հալաչոլուն⁵:

¹ «Ցեղասպանության հարցում երկխոսության հույս», «Ռադիկալ» օրաթերթ, 24.02.2007 (թուրք. 'Soykırım'da diyalog umudu), <http://www.radikal.com.tr/turkiye/soykirimda-diyalog-umudu-806825/>

² «Այս առիթը բաց չթողնենք», «Ռադիկալ» օրաթերթ, 24.02.2007 (թուրք. «Bu fırsat kaçmasın»), <http://www.radikal.com.tr/yazarlar/ismet-berkan/bu-firsat-kacmasin-806805/>

³ «Պատմաբանների հանդիպմանը քաղաքականները նույնպես դրական են նայում», «Սաբահ», 23.02.2007 (թուրք. «Tarihçilerin buluşmasına siyasiler de sıcak bakıyor»), <http://arsiv.sabah.com.tr/2007/02/22/gnd118.html>

⁴ «Այս առիթը բաց չթողնենք»:

⁵ «Հալաչոլուն Սարաֆյանի պաշտոնական դիմումին է սպասում», «Գազեթե Վաթան», 23.02.2007 (թուրք. «Halaçoğlu, Sarafyan'dan resmi başvuru bekliyor»), <http://www.gazetevatan.com/halacoglu-sarafyan-dan-resmi-basvuru-bekliyor-110032-gundem/>

Դրությունը դիպուկ էր բնութագրել թուրք լրագրող Իսմեթ Բերքանը. «Սարաֆյանի արածը մի քայլ էր, որը տեղավորվում է Թուրքիայի վերջին շրջանի «Պատմությունը թողնենք պատմաբաններին» և «Պատմաբանների հանձնաժողով գումարենք...» պետական քաղաքականության մեջ, և չմերժելը կարևոր է: «Մեզ պաշտոնապես չի դիմել» կամ «դիմել է, բայց նամակի նամականիշը պակաս էր», կամ «նամակ չեմ ստացել» ոճի անտեղի պատճառաբանություններով Սարաֆյանի առաջարկը չի կարող մերժվել: *Խաղաքարտին դրված է Թուրքիայի խոսքի վստահելի լինելը*¹:

Տեսնենք, թե որքան վստահելի էր այդ խոսքն անգամ Սարաֆյանից դիմում ստանալուց հետո: Փետրվարի 22-ին նա էլեկտրոնային նամակ գրեց Հալաչոլունին՝ խնդրելով իրեն ներկայացնել օսմանյան փաստաթղթեր Խարբերդի հայ ազգաբնակչության մասին: «Ես, իհարկե, հույս ունեմ ուսումնասիրել օսմանյան բռնագաղթի մասին արձանագրություններն այսօրվա թուրքական արխիվներից», - նշեց նա²:

Հալաչոլուն պատասխանում նորից «խոսքը կտուրն է գցում»՝ Սարաֆյանին առաջարկելով, եթե հնարավոր է, իր նամակները գրել թուրքերեն և նախ ճշտել, թե ովքեր և ինչ արխիվներ պետք է ուսումնասիրեն: Բայց չէ՞ որ Սարաֆյանը պարզ գրել էր, որ «Օսմանյան արխիվներ» և «Խարբերդի թեմայով»: Առաջ շարժվելու փոխարեն Հալաչոլուն կարծես ժամանակ շահելով և կրկեսությամբ էր զբաղված:

Փետրվարի 26-ին Հալաչոլուն հանդես եկավ թուրքական *CNN Turk* ալիքով, որի ժամանակ սկսեց անորոշ խոսել օսմանյան արխիվների մատչելիության մասին, ասաց, որ ինչ-որ խնդիրներ կան փաստաթղթերի հետ, մասնավորապես՝ ոչ բոլոր գյուղերի և տարագրվածների անուններն են հայտնի: «Սարաֆյանը շատ լավ գիտե ինչ ասել է արխիվ: Այնտեղ գյուղ առ գյուղ, անուն առ անուն տարագրվածներին չի կարողանալու գտնել», - հայտարարեց Հալաչոլուն³: Ավելի ուշ նա

¹ «Այս առիթը բաց չթողնենք»:

² «Հալաչոլունի և Սարաֆյանի էլեկտրոնային նամակները», Հայկական ցեղասպանության աղբյուրների կենտրոն (անգլ. «Halacoglu and Sarafian emails»), <http://armenians-1915.blogspot.com/2007/03/1530-halacoglu-sarafian-emails.html>

³ «Սարաֆյանի հետ գործակցություն չկա», «Ռադիկալ», 10.03.2007 (թուրք. «Sarafyan'la işbirliği yok»), <http://www.radikal.com.tr/politika/sarafyanla-isbirligi-yok-808155/>

ասաց, որ «արխիվների ոչ մատչելի լինելու» մասին իր խոսքը ճիշտ չեն հասկացել, թեև կողմ էր, որ արխիվում խնդիրներ կան¹:

Ճիշտ չհասկացվելու մասին նրա խոսքերը համոզիչ չթվացին առաջին հերթին *CNN Turk*-ի լրագրող Մեհմեթ Ալի Բիրանդին, որը և իր հեղինակային «Մանշեթ» ծրագրի ժամանակ նրանից վերցրել էր նշված հարցազրույցը: Ի պատասխան Բիրանդը հողված տպեց «Հյուրիեթում»՝ «Հայերից գոլ կերանք» խորագրով. «Հալաչոլուն չի համաձայնել ցույց տալ որոշ փաստաթղթեր և առանց սահմանափակման բացել օսմանյան արխիվները: Եթե չէիք կարողանալու փաստաթուղթ ցույց տալ, ինչո՞ւ էիք հրապարակել նույն: Թուրքիան առանց այդ էլ թույլ ուղորտում նոր գոլ կերավ», - նշել էր նա: Վերլուծաբանի խոսքով, «այսուհետ ոչ ոք չի հավատալու բոլոր արխիվները բացելու և պատմաբանների միջոցով հարցը քննելու մասին թուրքական նախաձեռնությանը»²:

Սարաֆյանը նամակ գրեց Հալաչոլունին՝ ասելով, որ եթե արխիվները մատչելի չեն, ապա համատեղ աշխատելն անիմաստ է: Այսքանով թեման փակվեց, իսկ Սարաֆյանը հայտարարեց, որ Հալաչոլունի պահվածքը միայն ամրապնդում է հայկական կողմի դիրքերը³ և գոհունակություն հայտնեց լրագրող Բիրանդի հողվածի առիթով⁴: Սարաֆյանը նաև վստահաբար նշել էր, որ Օսմանյան Թուրքիայի ՆԳ նախարարությունն արձանագրել է ցեղասպանության ենթարկված բոլոր գյուղերի և բնակավայրերի բոլոր հայ բնակիչների անունները⁵:

P.S. Օսմանյան արխիվներում է աշխատել ծնունդով Թուրքիայից պատմագիտության դոկտոր Ումիթ Քուրտը, որն այս թեմային անդրադարձավ 2017թ. փետրվարի 28-ին ԱՄՆ մայրաքաղաքի Ջորջ Վաշինգ-

¹ «Հալաչոլուն. Փաստաթղթերը պահելու իրավունք չունեն», «Թուրքիեթ» օրաթերթ, 15.03.2007 (թուրք. Halaçoğlu. Belgeleri saklama yetkim yok),

<http://www.turkiyegazetesi.com.tr/Genel/a322222.aspx>

² «Հայերից գոլ կերանք», «Հյուրիեթ», 14.03.2007 (թուրք. «Ermeniler'den Gol Yedik...»),

<http://www.hurriyet.com.tr/ermeniler-den-gol-yedik-6120651>

³ «Որտե՞ղ են գոյություն ունեցող փաստաթղթերը», «Ենի Աքթյուեյլ», մարտ 2005 (թուրք. «Var, denen o belgeler nerede?»), <http://www.yeniaktuel.com.tr/tur101,89@2100.html>

⁴ «Էրդոդանը, Օսմանյան փաստաթղթերը և Հայոց ցեղասպանությունը», 01.02.2015;

<http://www.horizonweekly.ca/news/details/60770> (անգլ. Erdogan, «Ottoman Archives and the Armenian Genocide»).

⁵ Նույն տեղում:

տոնի անվան համալսարանում իր ելույթում¹: Ելույթից հետո հեղինակի հետ զրույցում նա նշեց. «Հայերի ունեցվածքի բռնագրավման մասին մատյանները չէին տրամադրում: Գիտենք, որ այդ արձանագրությունները կան, նրանք գոյություն ունեն և եթե հրապարակվեն, ապա կբացահայտվի հայերի թալանը: Այդ պատճառով փաստաթղթերն անհասանելի են պահում հետազոտողներից: Ես մեկ տարի փորձում էի ստանալ այդ մատյանները, բայց ամեն անգամ ասում էին, թե հասանելի չեն, համակարգված չեն»:

Այսբանով հանդերձ, եղել է մի բացառիկ դեպք, երբ հաջողվել է ձեռք բերել 1915թ. Օսմանյան կայսրության հայերի ունեցվածքի բռնագրավման և վաճառքի մասին մեկ մատյան: Այնթապցի Սարգիս Յակուբյանը 1915թ. դեկտեմբերին ստացել ու պահպանել է իր ունեցվածքի բռնագրավման և մահմեդականներին դրա հետագա վաճառքի մասին պետական արձանագրությունը: «Այս զեկույցում կարող եք բառացիորեն տեսնել Յակուբյանի ամեն մի պարագայի, անգամ դանակների և պատառաքաղների բռնագրավման մասին արձանագրությունը, հետագայում այդ բոլոր պարագաները գնողների անունները: Մա միայն մեկ արձանագրություն էր, բայց նման հարյուր հազարավոր արձանագրություններ պետք է լինեն արխիվներում», - դասախոսության ժամանակ նշել էր Քուրտը՝ հավելելով, որ առաջիկայում հավանական է՝ իր հետազոտությունը կհրապարակի առանձին գրքով²:

Այս մեկ օրինակից, համենայնդեպս, հետևում է, որ օսմանյան կառավարիչներն արձանագրել էին ոչ միայն գյուղ առ գյուղ, ոչ միայն անուն առ անուն, այլև նույնիսկ հաշվառել էին այն դանակ-պատառաքաղները, որ զավթել էին տուժյալ հայերից:

Մա՛ ի գիտություն «արխիվներում տեղեկություն չկա» ասող թուրք «պատմաբան Հալաչօղլուին»...

Տեղեկություն շատ կա: Այդ տեղեկությունը տրամադրող չկա...

¹ «Ձորջ Վաշինգտոնի համալսարանի իրավաբանական դպրոցը և Արդարության ու մարդու իրավունքների հայկական իրավաբանական կենտրոնը (ALC) համահովանավորեցին դր Ումիթ Քուրտի ելույթը», Armenian Weekly, 03.03.2017 (անգլ. George Washington University Law School and the Armenian Legal Center for Justice and Human Rights (ALC) Cosponsor talk by Dr. Ümit Kurt).

² «Դր. Ումիթ Քուրտը քննարկում է Հայոց ցեղասպանության ունեզրկումը GW LAW-ում» (անգլ. «Dr. Ümit Kurt Discusses Armenian Genocide Dispossession at GW Law»), https://youtu.be/gADlrBh_0mo?t=4622

2007թ.- Դեյվիդ Գաունթի փորձը. 2006թ. հոկտեմբերի 19-ին Թուրքիայի հարավարևելյան Մարդին քաղաքի մոտակա Նյուսայբինի (պատմական Մծբին) շրջանի Քուրու գյուղի գյուղացիները հոր էին փորում, երբ պատահաբար հայտնաբերեցին ոսկրերի կույտ: Շվեդիայի Սոդերստոբն համալսարանից պատմաբան Դեյվիդ Գաունթը մասնագիտանում է հատկապես նշված տարածաշրջանի պատմության ուղղությամբ: Նրա տվյալներով, 1915թ. Մարդինում 150-ի չափ ջարդեր էին եղել: Ամենահավանականը, որ գյուղացիները գտել էին, Մարդինի օսմանցի գավառապետ Հալիլ Էդիպի հրամանով սպանված 270 քրիստոնյաների (150 կաթոլիկ հայեր և 120 ասորիներ) կմախքներն էին: Քրիստոնյաները մոտակայքի Դարա (այսօր Օդուզ) գյուղից էին: Նրանց բանտարկել էին 1915թ. հունիսի 13-ին և սպանել հունիսի 15-ին: Շվեդ պատմագետի մյուս տարբերակով դրանք հունիսի 28-ին սպանված հայ կաթոլիկ կանանց կամ նույն շրջանում սպանված ուղղափառ ասորիների մնացորդներն էին¹: Ավելի հստակ պատկերացնելու համար Գաունթն առաջարկեց գալ Նյուսայբին՝ անձամբ տեսնելու և քննության առնելու ոսկորները: Հրապարակ նետվեց «պատմաբան» և խառնակիչ Յուսուֆ Հալաչօղլուն, որն առաջարկեց միասին մեկնել Նյուսայբին և հետազոտել²: Այստեղ արդեն, նախորդ տխուր փորձից ելնելով, կարելի էր պատկերացնել, թե հետազոտություն ասածը Հալաչօղլուն ինչ անհեթեթության էր վերածելու: 2007թ. ապրիլի 23-ին Դեյվիդ Գաունթը Դիարբեքիբում էր և Հալաչօղլուի, հնագետների, պատմաբանների, բժիշկների, լրագրողների և ոստիկանության ուղեկցությամբ շարժվեց դեպի Նյուսայբին: «Գուցե առաջին անգամ Թուրքիայի պատմաբանները միջազգային մասնագետների հետ բնագաղթի ժամանակաշրջանի հետազոտության ուղղությամբ շատ կարևոր քայլ կանեին», - գրեց թուրքալեզու կայքը³:

Բայց Թուրքիան հերթական թատրոնն էր խաղում...

¹ «Զանգվածային թաղատեղին պատկանում է հայերին և ասորիներին», «Օզգյուր Գյունդեմ», 07.11.2006 (թուրք. «Toplu Mezar Ermenilere ve Suryaniler'e Ait»), <http://old.acsatv.com/index.php?sid=2&usid=27&aID=640>

² «Թուրք-շվեդ պատմաբանները կհետազոտեն զանգվածային գերեզմանի պնդումը», Անադոլու գործակալություն, 09.03.2007 (անգլ. «Turkish-Swedish Historians to Examine Alleged Mass Grave»).

³ «Եթե մահանամ, չգաս գերեզմանիս», «Էվրենսել», 29.04.2007 (թուրք. «Ölürsem kabrime gelme istemem!»), <https://www.evrensel.net/haber/245246/olursem-kabrime-gelme-istemem>

Քարանձավի մուտքը փակ էր, թեև տարածքի ժողովուրդն ասում էր, որ մինչև նախորդ օրն այն բաց էր եղել, և տեղացի լրագրողներից յուրաքանչյուրն այդ ընթացքում առնվազն մեկ անգամ արդեն մտել էր քարանձավ ու տեսել ոսկորները¹: Պետք է ենթադրել՝ Անկարան, լավ բեմականացման համար, նաև փակել էր մուտքը, որ այն իբրև թե բացվեր Գաունթի ներկայությամբ: Քարանձավում կմախքներ չկային, մեկ-երկու ոսկոր էր մնացել: Գաունթը նկատեց, որ պատկերն ամեննին չէր համապատասխանում հոկտեմբերին արված լուսանկարին: «Գանգեր և մեծ ոսկորներ որոնեցի, ոչ մի հատ չկար: Մեկ-երկու փոքր ոսկոր էր մնացել», - նշել էր Գաունթը²:

Այստեղ գլխավոր ստախոս Հալաչոլուն հայտարարեց, որ երևի անձրևներ ու փոշի է լցվել ներս ու քշել-տարել կամ ծածկել ոսկորները³: Ավելի ուշ նա շարունակեց իր «դարակազմիկ» բացահայտումները՝ հայտարարելով, թե մնացած կտորներն ինքը փորձաքննության տվեց ու պարզեց, որ դրանք պատկանում էին... հին հռոմեական դարաշրջանին⁴:

Հին Հռոմը գոյություն է ունեցել մինչև 476թ.: Այսինքն, ըստ թուրք «գիտնականի», ոսկրերի կույտը տեղում է եղել առնվազն այդ դարաշրջանից ի վեր մոտ 15 դար, մինչև 2006թ. աշունը, երբ այն լուսանկարվել է, և այդ ընթացքում անձրևները չէին քշել ոսկորները, փոշին այն չէր ծածկել: Սակայն ճիշտ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Շվեդիայից գիտնականի հնարավոր այցի մասին, մի քանի ամսում անձրևները սրբեցին, փոշին ծածկեց...

Մեկնաբանությունները, թերևս, ավելորդ են:

«Ես բավական դժվարությամբ իջա այդ փոսի մեջ», - հեղինակի հետ գրույցում նշել է Դեյվիդ Գաունթը, - «բայց Հալաչոլուն բավական ճարպիկ ձևով իջավ: Կարծում եմ՝ նա այնտեղ արդեն եղել էր»:

¹Նույն տեղում:

²«Ձանգվածային թաղատեղին գոլորշիացավ», «Էվրենսել» 26.04.2007 (թուրք. «Toplu Mezar Buharlaştı»), <http://www.suryaniler.com/haberler.asp?id=250>

³«Այս ոսկորներն ո՞ր գնացին», «Ռադիկալ», 26.04.2007 (թուրք. «Bu Kemikler Nereye Gitti?»), <http://www.radikal.com.tr/turkiye/bu-kemikler-nereye-gitti-812439/>

⁴«Ոչ թե հայկական, այլ հռոմեական գերեզման էր», «Ռադիկալ», 24.05.2007 (թուրք. «Ermeni değil Roma mezariyimid»),

<http://www.radikal.com.tr/turkiye/ermeni-degil-roma-mezariymis-815088/>

Մենք գործ ունենք մի պետության հետ, որը 21-րդ դարում հատուկ ստորաբաժանում է ուղարկում քարանձավ այնտեղի փոսերից անթաղ մարդկանց ոսկորները հավաքելու և դեպքի վայրից ծածուկ հեռացնելու համար...

Մենք գործ ունենք մի պետության հետ, որն անգամ հարյուր տարի անց հնարավորություն չի տալիս գոնե վերաթաղելու անթաղ նահատակների մասունքները...

2010թ.- Հայ-թուրքական արձանագրությունները. Նույն օրինակների թվում էին հայ-թուրքական արձանագրությունները, որոնք ՀՀ և Թուրքիայի ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանը և Ահմեթ Դավութօղլուն ստորագրեցին 2010թ. հոկտեմբերի 10-ին¹: Ներկա էին ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիայի, Շվեյցարիայի ԱԳ նախարարները, միջազգային շատ լրատվամիջոցներ, մասնավորապես *CNN*-ը, *Assosiated Press*-ը ստորագրման արարողությունը լուսաբանում էին ուղիղ ժամանակի ռեժիմով:

Փաստաթուղթը նախատեսում էր նաև վավերացում խորհրդարանների կողմից: Ինչպես հայտնի է, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երաշխավորեց, որ Երևանը կվավերացնի արձանագրությունները՝ պայմանով, որ դա առաջինն անի Թուրքիան²: Թոմաս դե Վաալի հետազոտությունից հետևում է, որ հայկական խորհրդարանի հաստատումը խնդիր չէր հարուցի³:

Անկարայի մեջլիսում մեկ օր՝ 2009թ. հոկտեմբերի 21-ին, քննարկեցին փաստաթղթերը, սակայն չվավերացրին ու մինչև օրս այլևս չքննարկեցին⁴: Փաստաթուղթը նախատեսում էր պատմաբանների նե-

¹ «Դիվանագիտական պատմություն. Թուրքիա-Հայաստան արձանագրությունները», 17.04.2012; Քարնեգի հաստատության կայք (անգլ. «Diplomatic History: The Turkey-Armenia Protocols»), <http://carnegieendowment.org/2012/04/17/diplomatic-history-turkey-armenia-protocols-event-3630>

² «Նախագահ. Հայաստանը կվավերացնի արձանագրությունները Թուրքիայից հետո», <http://www.armeniansdiaspora.com/showthread.php?215637-Armenia-To-Ratify-Protocols-After-Turkey-President> (անգլ. «Armenia to ratify protocols after Turkey»), Mediamax 10.02.10, <http://www.armeniansdiaspora.com/showthread.php?215637-Armenia-To-Ratify-Protocols-After-Turkey-President>

³ Թոմաս դե Վաալ, «Մեծ աղետ», Oxword University Press, 2015, էջ 232 (անգլ. Thomas de Waal, «Great Catastrophe»).

⁴ «Հայկական արձանագրությունը մեջլիսում», «Հյուրիէթ» 21.10.2009 (թուրք. «Ermeni protokolu Meclis'te»), <http://www.hurriyet.com.tr/ermeni-protokolu-mecliste-12743361>

րառում հանձնաժողովում, որը պետք է անաչառորեն քննէր պատմությունը: Արցախյան հակամարտության կարգավորումը որպես նախապայման արձանագրությունները չէին նախատեսում¹:

Տարրական տրամաբանությամբ, Ղարաբաղյան հարցի լուծումն իբրև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախապայման առաջադրելն իմաստագրկում էր ողջ գործընթացը, քանի որ առանց արձանագրությունների էլ պարզ էր, որ ԼՂ ինդրի քաղաքական կարգավորման պարագայում Թուրքիան բարելավելու էր Հայաստանի հետ հարաբերությունները: Արձանագրությունների ողջ իմաստը հայ-թուրքական կարգավորումն էր առանց նախապայմանների:

Թուրքիան հրաժարվեց թե՛ քաղաքական կարգավորումից, թե՛ պատմական հարցի անաչառ քննարկումից:

«Արձանագրությունները» Սպիտակ տան դիվանագիտական նախաձեռնությունն էին, և նախորդ դեպքերի համեմատ Վաշինգտոնն այս անգամ առավել ուշադիր հետևեց զարգացումներին՝ թուրքական խուսափողականությանն ի պատասխան պետքարտուղար Հիլարի Բլինթոնի մակարդակով հայտարարելով, որ «գնդակը Թուրքիայի խաղաղաշտում է»²:

2017թ. փետրվարի 3-ին, դանիական խորհրդարանի որոշումից հետո, Չավուշօղլուի հայտնի առաջարկին ի պատասխան, Կանադայում գործող Չորյան ինստիտուտը հանդես եկավ մամուլի հաղորդագրությամբ. «Ինչպես ասում են՝ *deja vu*, նորից կրկնություն: Հայաստանին 1915թ. իրադարձությունները համատեղ հանձնաժողովի միջոցով քննելու կոչը վերջին տարիներին դարձել է Թուրքիայի կառավարության գործելատճը», - նշված էր հայտարարության տեքստում³:

Չորյան ինստիտուտը, մասնավորապես, վկայակոչում էր արձանագրություններից փախչելու թուրքական նախադեպը:

¹ Տե՛ս հայ-թուրքական արձանագրությունների տեքստը, <http://www.azatutyun.am/a/1812299.html>

² «Գնդակը Թուրքիայի դաշտում է», «Առավոտ» օրաթերթ, 04.06.2012; <http://www.aravot.am/2012/06/04/298891/>

³ «Չորյան ինստիտուտի պատասխանը 1915թ. իրադարձությունները համատեղ քննելու Թուրքիայի ԱԳ նախարարի կոչին», 06.02.2017 (անգլ. «Zoryan Institute Responds to Turkish Foreign Minister's Call to Set Up Joint Commission to Study the Events of 1915»), <http://www.zoryaninstitute.org/Announcements/Zoryan%20Response%20to%20Turkish%20FM%20Feb%206%202017.pdf>

Որքան հեղինակին հայտնի է, սա առաջին դեպքն է, երբ հայկական կառույցը հրապարակայնորեն բարձրաձայնեց երկխոսության առաջարկներից հետևողականորեն փախչելու թուրքական «դեժա վյուի» մասին:

Մինչդեռ այս գործընթացը պետք է շարունակական լինի Թուրքիայի դիվանագիտական հերթական խարդավանքն աշխարհին ըստ պատշաճի ներկայացնելու համար...

Եզրակացություն. Գնդակը միշտ էր Թուրքիայի դաշտում. դա են փաստում բազմաթիվ օրինակները, երբ թուրքերը փախել են բանակցություններից, չեն արձագանքել հրավերներին ու պարզապես ստել են: Ընդ որում՝ օրինակները շարունակելի են: Շվեդ պատմաբան Դեյվիդ Գաունթն ասում է, թե Թուրքիայի իշխանություններին դիմել էր նաև պատմաբանների հանձնաժողով ձևավորելու առաջարկով, անգամ պայմանագիր ստորագրել, ու նորից անարդյունք: Եվս մի անհաջող փորձ արվել էր Վիեննայում 2003թ.: Այստեղ հայկական կողմը թուրքերին պատմական փաստաթղթեր էր ուղարկել ավստրիաբնակ պատմաբան Արտեմ Օհանջանյանի միջոցով: Այս ծրագիրը շարունակական չեղավ, սակայն թուրք «պատմաբանները» դեռևս 2003թ., թերևս ծանոթանալով հայկական փաստաթղթերին, դաս առան, որ նման երկխոսության մասնակցելու կարիքը չկա:

2014թ. դեկտեմբերին Վաշինգտոնի Համաշխարհային քաղաքականության ինստիտուտում (*IWP*) Թուրքիայի արտաքին քաղաքականության թեմայով խորհրդաժողովի ժամանակ տողերիս հեղինակը նշված թեմայով զեկուցում կարդաց¹: Տարիների ընթացքում փորձ է արվել հարցը բարձրացնել ամերիկյան վերլուծաբանների, դիվանագետների, լրագրողների հետ շփումների ընթացքում:

Ցավոք, Անկարայի քարոզչա- և դիվանագիտական մեքենաներին տարիներով կարծես հաջողվել է ստեղծել տպավորություն, թե իբր իրենք երկխոսության կողմնակիցն են, հայերը՝ ոչ: Առնվազն, բացի Քլինթոնի հայտնի հայտարարությունից և Ջորջյան կառույցի հաղորդագրությունից, չկա որևէ միջազգային բարձրաստիճան պաշտոնյայի կամ հաստատության խոսք, որը կմատնանշեր. Թուրքիան ստում է՝ երկխո-

¹ «Թուրքիայի արտաքին քաղաքականության երկընտրանքները 2015թ.», 03.12.2014 (անգլ. «Turkey's Foreign Policy Dilemmas in 2015»),

<https://www.youtube.com/watch?v=MxusXBAU2M0&t=1s>

սուրբան առաջարկը դարձնելով մարտավարական քայլ այս կեղծիքի ծրագրում: Հայկական կողմը դեռևս անելիքներ ունի նշված ուղղությամբ, մասնավորապես՝ քաղաքական և լրատվական դաշտերում:

Մարտ, 2017թ.

**ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՀՆԱԲՔԸ.
Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿ Է ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԱՆԿԱՐԱՆ**

Հայկարամ Նահապետյան

Ամփոփագիր

Դանիայի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումից հետո Թուրքիան պաշտոնապես առաջարկեց ստեղծել հայ-թուրքական հանձնաժողով՝ իբր, 1915թ. հարցի պատմական քննության համար: Վերջին ավելի քան տասը տարվա ընթացքում Թուրքիան քանիցս նման առաջարկություններ է արել: Որքանով են անկեղծ Անկարայի հայտարարությունները: Հողվածը նպատակ ունի հիմնավորելու այն թեզը, որ թուրքական կողմի համար նախընտրելի տարբերակը եղել և մնում են մերժողականությունը և հայկական հարցի թաքուն երկրի ներսում, այլ ոչ թե քննարկումը: Պատմությունը բաց քննարկելու իբր պատրաստակամության մասին հայտարարությունները, նշված բազմաթիվ օրինակների լույսի ներքո, Թուրքիայի դիվանագիտական հնարամիտ քայլն են հանդիսանում: Վերլուծության համաձայն Թուրքիան կարող էր նման «ճշմարտության» հանձնաժողով ձևավորել ավելի պարզեցված ձևով՝ իր երկրի ներսում, քանի որ այստեղ էլ արդեն քիչ թիվ չեն կազմում 1915թ. Հայոց ցեղասպանության փաստը և Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը հրապարակայնորեն ընդունող պատմաբանները, հասարակական-քաղաքական գործիչներն ու իրավապաշտպանները: Սակայն Թուրքիան ոչ միայն չի արել դա, այլև խուսափել է այդ ուղղությամբ միջազգային նախաձեռնություններից:

**УЛОВКА АРМЯНО-ТУРЕЦКОГО «ИСТОРИЧЕСКОГО ДИАЛОГА»:
КАКУЮ ЦЕЛЬ ПРЕСЛЕДУЕТ АНКАРА?**

Айкарամ Нагапетян

Резюме

После осуждения Данией Геноцида армян Турция вновь официально предложила создать армяно-турецкую комиссию для якобы исторического исследования

вопроса 1915 года. В течение последнего десятилетия с лишком Турция неоднократно делала такие предложения. Насколько искренни заявления Анкары? Статья призвана обосновать, что предпочтительным вариантом турецких властей была и остается историческая амнезия и табуирование армянского вопроса внутри страны, а не обсуждения. Заявления о якобы готовности открыто обсуждать историю, в свете множества приводимых примеров, являются дипломатической уловкой Турции. Согласно анализу, Турция при желании давно могла организовать такую работу в куда более упрощенном варианте: внутри страны. В самой Турции уже немало историков и интеллектуалов, которые отстаивают необходимость признания Анкарой Геноцида 1915 года и нормализации отношений с Ереваном. Однако Турция не только не делала этого, но и уклонялась от международных инициатив в данном направлении.

THE PLOY OF ARMENIAN-TURKISH “HISTORIC DIALOG”: WHAT OBJECTIVE ANKARA PURSUES?

Haykaram Nahapetyan

Resume

After Denmark condemned the Armenian Genocide, Turkey once again officially proposed establishing of an Armenian-Turkish commission for studying the historical events of 1915. For more than a decade Turkey has made numerous such offers. To what extend are these initiatives sincere? The article substantiates that the preferred option of the Turkish authorities has always been and still remains the historical amnesia and taboo of the Armenian issue inside the country, not an open discussion of it. In the light of many examples mentioned in the article, claims of readiness to openly discuss the history appear to be a diplomatic ploy by Turkey. According to the analysis, Turkey, if desired, could have organized such work long time ago in a much more simplified version: inside its own country. In Turkey itself, there is a substantial number of historians and intellectuals who advocate the recognition of the Armenian Genocide of 1915 by Ankara and the normalization of relations with Yerevan. Turkish authorities never tried to form a commission with them and also avoided such opportunities with any reputable international scholars.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Թաթուլ Մանասերյան**

«Ամենաշահութաբեր բիզնեսը պատերազմն է»¹:

Բանալի բառեր՝ պատերազմ, պարտադրված տնտեսագիտություն, ազատական կառավարման տնտեսագիտություն, տեղեկատվական պատերազմ, հիմնարար շահ, ռազմարդյունաբերական համալիր, մարտահրավեր:

Հոդվածում մեր նպատակն է ներկայացնել պատերազմի իրական սպառնալիքի պայմաններում ապրող հասարակության ընտրությունը՝ հաշվի չառնել պատերազմի սպառնալիքը և շարունակել ազատական ուղղվածության բարեփոխումները կամ պատրաստվել պարտադրված պատերազմի ցանկացած դրսևորման՝ ըստ այդմ մշակելով և կիրառելով զարգացման որակապես նոր մոդել:

Վարկածներ. Նախ՝ ուսումնասիրության մեջ կիրառվող վարկածների մասին:

Թերևս, ապացուցման կարիք չունի այն պնդումը, որ ֆիզիկայի որոշ օրենքները Երկիր մոլորակի վրա և տիեզերքում տարբեր են: Անհերքելի է նաև այն, որ տնտեսագիտական օրենքներն ու օրինաչափությունները, կառավարման բազմաբնույթ մոդելները խաղաղ պայմաններում համադրելի չեն պատերազմական իրավիճակում երկրին պարտադրված տնտեսվարման մոդելի հետ: Հետևաբար՝ խաղաղ պայմանների համար մշակված տնտեսական զարգացման ցանկացած մոդել, առավել ևս՝ ծրագիր, չի կարող ինտեգրվել պատերազմի տնտեսագիտությանը: Մա, իր հերթին, նշանակում է, որ պատերազմի պայմաններում չեն կարող գոյակցել կամ ներդաշնակվել երկու «զուգահեռներ»՝ պատերազմի պայմաններում երկրին պարտադրված տնտեսագիտությունը և ազատական կառավարման տնտեսագիտությունը:

* «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր:

¹ *Wade Frazier*, The Business of War, July 2014, <http://ahealedplanet.net/war.htm>

Այս ամենը կարևորվում է, երբ հաշվի են առնվում շուկայական տնտեսությանն անցման փուլին բնորոշ տնտեսական թնջուկները, ազգային տնտեսության ձևավորման մոդելի բացակայությունը, ինչպես նաև աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոններն ու երկրի բազմաբնույթ՝ պատմական, մշակութային, քաղաքական, սոցիալական, հոգեբանական և այլ առանձնահատկությունները:

Վերջապես, խնդիրն ավելի է սրվում, երբ խոսքն առնչվում է ոչ միայն առերևույթ, այլև քողարկված բնույթի պատերազմներին և հակամարտություններին:

Հիմնարար շահ. Ակներևաբար, հիշատակված վարկածներն ու դրանց առնչվող միտումները տարածվում են պատերազմի բոլոր հնարավոր տեսակների վրա, որոնք նշանավոր չին մտածող Մուն Ցզիի կարծիքով (մ.թ.ա. 5-րդ դար), կարող են լինել արդար կամ անարդար [1, c. 12-75], առաջադիմական (ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության կարգախոսներով) կամ ռեակցիոն, զավթողական կամ ազատագրական, լոկալ, տարածաշրջանային կամ ավելի լայնամասշտաբ, երկկողմ կամ բազմակողմ, կարճատև կամ երկարատև, ցամաքային, ծովային, քիմիական, կենսաբանական, բակտերիոլոգիական, գեոֆիզիկական կամ այլ բնույթի, որոնք բնորոշ են մեր դարաշրջանին և, Քերոլին Նորդստրոմի պնդմամբ, կարող են հարափոփոխ լինել՝ կախված ծախսերից, դրանց ֆինանսավորման աղբյուրներից, ակնկալվող արդյունքից և նպատակներից [2, pp. 2-25]: Թերևս, կարելի է առանձնացնել նաև ծրագրված կամ կազմակերպված ու պարտադրված կամ սադրած պատերազմները, որոնք կարող են ունենալ իրենց ընդհանրություններն ու յուրահատկությունները՝ հանդես գալով որպես ինքնապաշտպանություն, կանխարգելիչ կամ զսպող պատերազմներ, երբ ակնհայտ է թշնամու առաջխաղացման վտանգը, իսկ որոշ դեպքերում նաև նախահարձակ գործողություններով, որպես սպառնալիքի կանխարգելում՝ ռազմավարական ակամա դաշնակցին աջակցելու միջոցով: Դրանք ունեն իրենց երբեմն բացառիկ տրամաբանությունն ու օրենքները [3, էջ 34-67], սակայն բոլորի հիմքում, առաջին հերթին, ընկած է տնտեսական շահը, որն էլ դարձնում է պատերազմն առավել շահավետ բիզնես ինչպես վերջնական արդյունքների ակնկալիքների առումով՝ այն նախաձեռնողների, այնպես էլ հակամարտության կողմերին զենք վաճառողների համար:

Նոր տնտեսական ռեսուրսներին տիրանալու ձգտումն ընկած էր համաշխարհային երկու պատերազմների հիմքում: Եթե ընդունում ենք այս իրողությունը, ապա դժվար չէ նկատել, որ ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների իրական պատճառը ռեսուրսներն են, առաջին հերթին՝ նավթը¹, որքան էլ որ տարբեր են հռչակված նպատակները՝ սկսած ժողովրդավարության հաստատումից, միջուկային զենքի ծրագրերի դադարեցումից մինչև զանգվածային ոչնչացման զենքի առգրավումը և այլն [4, pp. 11-15]:

Ինչ վերաբերում է ներգրավված երկրի համար պատերազմի բարեհաջող ելքի նախապայմաններին, ապա հարկ է նկատել, որ իրականում ուժային գործողությունների հաջողությունն անխուսափելիորեն կանխորոշվում է զինուժի, տեխնոլոգիական զարգացման, տնտեսական ռեսուրսների, աշխարհագրական դիրքի և դաշնակիցների աջակցության համախառնուրդով:

Սպառազինությունների և ռազմական տեխնիկայի արտադրության բարձր գիտատարությունը, վերջինիս բարձր արժեքը և զինը, ինչպես նաև շահագործման և գործածության ապահովման մեծ ծախսերն էլ ավելի են սահմանափակում տնտեսության հնարավորությունները՝ ժամանակակից պահանջներին համապատասխան միջոցների մատակարարմամբ ապահովելու երկրի զինված ուժերի մարտունակությունը:

Մյուս կողմից՝ ընդունելով այն փաստը, որ ժամանակակից աշխարհում գիտելիքն ու դրա նպատակային օգտագործումը նույնքան կարևոր են, որքան և զենքը, ինտելեկտուալ ռեսուրսները կարող են ոչ միայն լրացնել զարգացող երկրներից պահանջվող նյութական միջոցների բացը, այլև հակամարտության պայմաններում շահեկան դիրք ապահովել նրանց համար: Հատկանշական է, որ արդի պայմաններում զինված ընդհարումներին զուգահեռ կիրառվում են նաև պայքարի այնպիսի ձևեր, ինչպիսիք են կազմակերպական, դիվանագիտական, տեղեկատվական և այլ հակամարտությունների բազմաբնույթ մեթոդները: Առանձին վերլուծության առարկա են հենց պետության հովանավորությամբ և հստակ ցուցումներով ու ծրագրով իրականացվող տեղեկատվական պատերազմները, որոնք կարող են նաև սանձազերծվել ինչպես առևտ-

¹ Andrew T. Price-Smith, *Oil, Illiberalism, and War, An Analysis of Energy and US Foreign Policy*, The MIT Press, 2015, <https://mitpress.mit.edu/books/oil-illiberalism-and-war>

րային, գաղափարախոսական, այնպես էլ «սովորական» պատերազմներին զուգահեռ: Տեղեկատվական պատերազմներից սերվելով՝ այսօր ինքնուրույն «կյանքի իրավունք» են ստացել ցանցային կամ ցանցակենտրոն պատերազմները, կիրեռապատերազմները և այլն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվությունը դարձել է թանկ ապրանք, որին ձգտում են տիրանալ բոլորը, մյուս կողմից, ինչպես Ռոտշիլդներն են ժամանակին բնորոշել՝ «ով տիրապետում է տեղեկատվությանը, նա կարող է տիրել աշխարհը»¹, միանգամայն հասկանալի է դառնում տեղեկատվական պատերազմների² շարունակական և հետզհետե ավելի ահագնացող բնույթը:

Ժամանակակից և հետագա պատերազմները պետության համար կարող են նյութական, գաղափարախոսական և հոգևոր ներուժի լուրջ փորձություն լինել: Ռազմատեխնիկական ներուժի առումով դրանք կարող են հանդես գալ որպես գիտության և տեխնիկայի իսկական պատերազմներ: Վերջինս, մեր համոզմամբ, ենթադրում է զինված պայքարի այնպիսի տարբերակներ, որոնք թույլ կտան որոշ չափով չեզոքացնել տնտեսական և կազմակերպական առումով պատերազմող երկրի խոցելի կողմերը: Այսպես, օրինակ, երկարատև պատերազմների ժամանակ հակամարտող կողմերը երբեմն դադար են վերցնում՝ չբավականացնող ռեսուրսներ և զինամթերք ձեռք բերելու համար: Եթե սեփական ուժերը չեն բավարարում, կողմերը փորձում են գտնել դաշնակիցներ՝ անհրաժեշտ դիվանագիտական աշխատանքների և արտաքին հարաբերությունների զարգացման, արտաքին օգնության ինտենսիվ փորձերի շնորհիվ: Հենց այս ճանապարհով են հանգուցալուծվել բազմաթիվ խնդիրներ ինչպես Երկրորդ աշխարհամարտի տարիներին, այնպես էլ դրան նախորդող բազմաթիվ պատերազմներում: Քիչ չեն նաև հակառակորդին տարբեր միջոցներով մոլորեցնելու մանևրները, որոնք, մի կողմից, թույլ են տալիս խնայել առկա միջոցներն ավելի վճռական փուլի համար, մյուս կողմից՝ ավելի ռացիոնալ օգտագործել տնտեսության ներուժը: Վերջապես, հիշյալ նպատակին հասնելու ձևերից մեկն էլ հակառակորդին այլ հակամարտության մեջ հրահրելն է, ինչն, ի վերջո, կարող է ջլատել ուժերը և հնարավորություն ընձեռել վճռական հարվածի համար:

¹ <http://just-meller.livejournal.com/98697.html>

² «Տեղեկատվական պատերազմ» տերմինն առաջին անգամ պաշտոնական շրջանառության մեջ է դրվել ԱՄՆ պաշտպանության նախարարության կողմից 1992թ. (*information warfare*):

Ազատական տնտեսությունը, ռազմարդյունաբերական համալիրի մրցունակությունը և երկրի մարտահրավերները. Աշխատանքի միջազգային բաժանումն, ինքնին, ենթադրում է խաղաղ պայմաններում համագործակցություն և արդար մրցակցություն: Դրանք փոխապայմանավորող գործոններ են¹: Պատերազմը բերում է ոչ միայն մարդկային զոհեր, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի աղետներ ու ավերածություններ, այլև, ի սկզբանե, ի չիք է դարձնում ազատական տնտեսությունը և դրան առնչվող ցանկացած օրինաչափություն: Այն պահանջում է պետության բացարձակ կարգավորում և վերահսկողություն բոլոր ոլորտներում:

Շուկայական տնտեսությունը, Վերներ Զոմբարտի և նրա գաղափարակիցների վկայությամբ, ենթարկվում է սպառողների ինքնիշխանությանը [5], մինչդեռ պատերազմի օրոք պետությունն է որոշում ոչ միայն այն խնդիրը, թե ինչ պետք է գնի սպառողը, այլև ավելին՝ ինչ, որքան և ում համար պետք է արտադրի արդյունաբերողը: Միակողմանիորեն, առանց լայն հասարակության հետ քննարկման, պատերազմի օրոք որոշվում են պետական բյուջեի ծախսային հոդվածների առաջնահերթությունները: Որոշ փորձագիտական հաշվարկներով՝ Ուկրաինայի հետ զինված հակամարտության ժամանակ երկու տարում Ռուսաստանը հարկադրված է եղել իր արժույթային ռեզերվներից ծախսել մոտ \$200 մլրդ-ին համարժեք գումար², ինչն ամեննին էլ չի համաձայնեցվել քաղաքացիական հասարակության հետ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ ժամանակ առ ժամանակ առաջանում են հակասություններ, որոնք անհնար է հանգուցալուծել առանց ռազմական ուժի կիրառման: Նույնը պահանջվում է նաև պետության տնտեսական անվտանգությունն ապահովելու համար: Հետևաբար, ազատական տնտեսությունն ու պատերազմն անհամատեղելի ինստիտուտներ են: Մի իրողություն, որը շրջանցվել է անկախության տարիներին՝ Հայաստանի բոլոր կառավարությունների կողմից: Հետևաբար, չեն արվել համապատասխան եզրակացություններ, և չի մշակվել համարժեք հանրակարգ:

¹ Մանչեսթրի դպրոցի առանցքային մտեցումներն են: *Bresiger, Gregory*. "Laissez Faire and Little Englanderism: The Rise, Fall, Rise, and Fall of the Manchester School," *Journal of Libertarian Studies* (1997) 13#1 pp. 45–79, <https://mises.org/library/laissez-faire-and-little-englanderism-rise-fall-rise-and-fall-manchester-school-0>

² Петр и Мазепа, Экономика войны, <https://petrimazepa.com/economyofwar.html>

Այս պայմաններում առաջացող կարևոր հիմնահարցերից մեկն այն է, թե ինչպես կարելի է համապատասխանություն սահմանել ռազմաքաղաքական նպատակների և տնտեսական հնարավորությունների միջև, որն, իր հերթին, պահանջում է հաշվի առնել պատերազմի և տնտեսության հնարավոր փոխազդեցությունները: Ու թեև այս առումով ուսանելի է բազմաթիվ երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ, Ֆրանսիայի, Իսրայելի, ՌԴ կուտակած փորձը, մեր համոզմամբ, յուրաքանչյուր երկիր պետք է հաշվի առնի խնդիրն արդյունավետ հանգուցալուծելու սեփական հնարավորությունները: Արժանահիշատակ է, հատկապես, Իսրայելի օրինակը, որը ոչ միայն Պաղեստինի, այլև Իրանի և այլ երկրների հետ լարված հարաբերությունների պայմաններում միշտ չէ, որ հաշվի է առնում ԱՄՆ կամ ԵՄ դիրքորոշումները: Կիրառելով ոչ թե խաղաղ, այլ պատերազմական պայմաններին առավել համահունչ տնտեսական զարգացման մոդել և ամեն գնով զարկ տալով ՌԱՀ զարգացմանը, Իսրայելն այսօր հնարավոր պատերազմի մրցունակությունն ապահովում է նաև ՌԱՀ հենքի վրա ձևավորված արտահանման ծավալների ավելացման և դրանից ստացված շահույթների հաշվին: Ավելին, ռազմական տեխնիկայի վաճառքն ու այդ ասպարեզում ծավալվող համագործակցությունն առաջնահերթություն են ոչ միայն արտաքին տնտեսական, այլև արտաքին քաղաքական հարաբերություններում: Մասնավորապես, Իսրայելի համար առավել մեծ կարևորություն են ստացել Հարավարևելյան Ասիայի հինգ երկրները՝ Վիետնամը, Ֆիլիպինները, Թաիլանդը, Սինգապուրն ու Միանմարը: Ավելին, «Հայացք Արևելքին» ռազմավարական ծրագրի շրջանակներում ավելի մեծ թափ է ստանում ՌԱՀ, մասնավորապես, կիբեռանվտանգության շուրջ համագործակցությունը Ճապոնիայի, Հարավային Կորեայի, ինչպես նաև Հնդկաստանի հետ: Այսպես, օրինակ, *Israel Weapon Industries* ընկերությունը \$100 մլն ներդրում է կատարել Վիետնամի բանակին *Galil ACE 31, 32* ինքնաձիգեր մատակարարելու համար, իսկ Իսրայելի կառավարությունն, ըստ միջպետական պայմանագրի, հանձն է առել Վիետնամի ազգային բանակի արդիականացման ծրագրի իրագործումը, որի օրինակը պատրաստվում է տարածել նաև Ադրբեջանում¹: Ընդ որում, Վիետնամն աստիճանաբար հրաժարվում է

¹ Израиль стал крупнейшим экспортером оружия в ЮВА, «Expert Online» 2016, <http://expert.ru/2016/06/13/izrail/>

ռուսական ավանդական «Կալաշնիկով» ինքնաձիգերից: 2005-2015թթ. Վիետնամը Բուրայելից ձեռք է բերել *Spyder* և *Derby* հրթիռներ և ELM-2288/ER և ELM-2022 ռադարներ: Այսպիսով, Հարավարևելյան Ասիայի երկրները սկսել են կարևոր դեր խաղալ Բուրայելի ՌԱՀ զարգացման և արտահանման մեջ՝ հանդիսանալով իսրայելական ռազմական տեխնիկայի գլխավոր գնորդներն աշխարհում: Մասնավորապես, անցյալ տարի Բուրայելի վաճառած մոտ \$5,6 մլրդ-ի զենքից մոտ \$3 մլրդ-ն բաժին է ընկնում հենց այս տարածաշրջանի երկրներին¹:

Հարկ է նկատել, որ այսօր աշխարհում ավելի մեծ ուշադրություն է դարձվում տեղեկատվական պատերազմներին [6, pp. 33-38], որում ակամա ներքաշված է նաև Հայաստանը: Փորձագետների վկայությամբ, «զոմբիավորված ցանցերում» օգտագործելով մոլորակի վրա գոյություն ունեցող համակարգիչների ընդամենը 1%-ը՝ այսօր կարելի է բլոկավորել և խաթարել հաղորդակցությունների, էլեկտրական ցանցերի, ֆինանսական շուկաների, պաշտպանական ողջ համակարգերը: Վերջերս ձեռնարկված հանկարծակի իմիտացիոն կիրեռարձակումը ԱՄՆ-ի դեմ ցույց տվեց այդ երկրի պաշտպանվածության ցածր մակարդակը, ինչպես նաև այն, որ վաղն անգամ կարելի է սահմանափակ միջոցներով կանգնեցնել համաշխարհային տնտեսության զարգացումը, որը 90%-ով կախված է համացանցից և տեղեկատվական տեխնոլոգիաներից [7]: Եվ չնայած այս իրողությանը, ԱՄՆ-ն այսօր առաջատարն է տեղեկատվական պատերազմներում ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների, այնպես էլ նյութատեխնիկական բազայի և ֆինանսական ներդրումների առումներով: *GlobalSecurity.org* կայքի տվյալների համաձայն, դեռևս տասներկու տարի առաջ Երկիր մոլորակի շուրջ պտտվում էին ավելի քան 138 ամերիկյան, 61 ռուսական, 10 չինական և 12 եվրոպական ռազմական արբանյակներ: Ֆրանսիացիները գտնում են, որ ամերիկացիների համեմատ իրենց հնարավորությունները շատ ավելի համեստ են²: Մասնավորապես, ֆրանսիացի փորձագետ Միշել Ալիո-Մարին այն կարծիքին է, որ տեղեկատվական պատերազմն արդի պատերազմի կարևորագույն մասն է կազմում: Ֆրանսիայում արդեն հիմնադրվել և գործում է էլեկտրոնային զենքի կենտրոնը (*CELAR*), որը տեղեկատվական

¹Նույն տեղում:

²<http://www.internetactu.net/2005/11/25/guerre-de-linformation-made-in-france/>

պատերազմի յուրօրինակ տեխնիկական կենտրոն կարելի է համարել, ուր աշխատում են մոտ 900 բարձր դասի մասնագետներ և օգտագործում են այնպիսի տեխնիկական միջոցներ, ինչպիսիք բացակայում են անգամ Ֆրանսիայի Միջուկային Էներգիայի կոմիսարիատում, որտեղ աշխատում է ավելի քան 4500 մասնագետ¹:

Ուսումնասիրված երկրների օրինակներն, անշուշտ, որոշակի դեր ունեն Հայաստանի համար պատերազմի իրական սպառնալիքի պայմաններում առանցքային գործոնի՝ երկրի ռազմարդյունաբերական համալիրի մրցունակության և դրա արդյունավետ իրացման հարցերի վերլուծության մեջ: Իր հերթին, ռազմարդյունաբերական համալիրի մրցունակությունը պայմանավորված է առավել արդիական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությամբ՝ սպառազինության որակով և վերջինիս ապահովման համար առկա ֆինանսական միջոցներով (ի տարբերություն քաղաքացիական պայմաններում գործածվող «գին» բաղադրիչի): Ավելի լայն առումով, ռազմարդյունաբերական համալիրի մրցունակությունը կախված է ազգային տնտեսության մրցունակության մակարդակից, ինչը որոշիչ է ոչ միայն զենքի, զինամթերքի, զինված հակամարտության պայմաններում կիրառվող տեխնիկական միջոցների արտադրության, այլև տրանսպորտի և հաղորդակցությունների աշխատանքի կազմակերպման, մատակարարման համակարգերի, զինված ուժերի գործողություններում անհրաժեշտ ենթակառուցվածքների կատարելագործման, ՌԱՀ ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի համար: Ընդամին, հետզհետե կրճատվում են ռազմական տեխնիկայի հերթական սերնդի ժամկետները, ինչը լուրջ մարտահրավերների առջև է կանգնեցնում մեր երկրի ՌԱՀ-ը:

ԱՄՆ, Ռուսաստանի, Իսրայելի և այլ երկրների փորձը վկայում է, որ, օրինակ, ռազմական ուղղվածության մեքենաշինության արտադրանքի (ինքնաթիռների, զրահատանկային տեխնիկայի, շարժիչների, ռազմատրանսպորտային միջոցների) սերնդափոխությունը, միջին հաշվով, կարող է կազմել հինգից տասը տարի, ռազմական էլեկտրոնիկայի արտադրանքի (կրակի կառավարման ավտոմատացված համակարգեր, ռադիոտեխնիկական սարքերի) համար՝ երկուսից երեք տարի: Ըստ

¹Նույն տեղում:

որում, ինքնին հասկանալի է, որ դրանց նոր մոդելների մշակումը պահանջում է ավելի երկար ժամանակահատված: Պարզվում է, որ կապի բորտային ռադիոէլեկտրոնիկայի սարքավորման (չորրորդ և հաջորդ սերնդի) հիմնական բաղադրիչների մշակումն, օրինակ, պահանջում է հինգից ութը տարի, ինչն էականորեն ավելացնում է նոր տեսակի կիրառության ժամկետները՝ մինչև դրա բարոյական մաշվածությունը¹:

Այսուամենայնիվ, նոր տեխնիկական միջոցների ներդրման անհրաժեշտ նախապայմաններից մեկը փորձանմուշից սերիական արտադրությանն անցումն է, որն ամբողջովին պայմանավորված է երկրի տնտեսական հնարավորություններով: Իսկ վերջինս, իր հերթին, կապված է համապատասխան տեխնոլոգիաների իրացման համար պահանջվող որոշակի ծախսերի հետ:

Հայաստանի պարագայում, մասնավորապես, ակնհայտ է, որ գնի բարձր կամ ցածր մակարդակը չի կարող արդարացնել սպառազինության որևէ տեսակից կամ բաղադրիչից կախվածությունն արտերկրից, եթե դրա համարժեքը հնարավոր է արտադրել տեղում: Խոսքը վերաբերում է ինչպես անօդաչու սարքերին, այնպես էլ փամփուշտներին և զինամթերքի այլ տեսակներին: Միայն փամփուշտների մասով փորձագիտական ուսումնասիրությունները² վկայում են, որ մեկ թշնամի սպանելու համար միջին հաշվով կրակում են մի քանի տասնյակից մինչև մի քանի տասնյակ հազար, իսկ երբեմն՝ հարյուր հազար փամփուշտ: Գուցե նման հաշվարկները չափազանցված են, սակայն ոսկերչական ճշտությամբ դրանք որևէ մեկին չի հաջողվում ներկայացնել: Մի բան ակնհայտ է. ցանկացած պատերազմ չափազանց ծախսատար երևույթ է: Այն սովորաբար ծանր բեռ է դառնում տնտեսության համար, եթե «սպասարկվում» է ձեռնարկությունների մի մասի ռազմականացման կամ հարկերի բարձրացման հաշվին:

Ի վերջո, ինչպես ամեն ապրանք ու ծառայություն, ամեն արհավիրք ու աղետ, պատերազմը նույնպես ունի իր գինը: Եվ դրա հաշվարկն ամեննին էլ տնտեսագիտության դասական սահմանումներով կատար-

¹ *Круглов Сергей*, Моральное старение техники (вопросы методологии и теории), Москва, 1997, с. 26, <http://www.referun.com/n/moralnoe-starenie-tehniki-voprosy-metodologii-i-teorii#ixzz4WYzicioT>

² *David Friedman*, The economics of war, http://www.daviddfriedman.com/Academic/economic_of_war/the_economics_of_war.htm

վող գնի հաշվարկը չէ: Եվ ռազմական հակամարտության ու պատերազմի գինը, բնականաբար, սրանով չի կարող սահմանափակվել: Կարևոր է հաշվի առնել նաև պատերազմի սոցիալական գինը, ներքին և արտաքին քաղաքական գինը, ժողովրդագրական գինը, բարոյական և հոգեբանական գինը և այլ հաշվառելի ու աներևույթ գործոններ¹: Ուստի, դրա առանձնահատկություններին հարկ է անդրադառնալ միայն խոր և բազմակողմանի մասնագիտական ուսումնասիրություններից և դիտարկումներից հետո:

Փետրվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Сунь-цзы*, Трактат о военном искусстве // Сунь-цзы, У-Цзы. Трактаты о военном искусстве, М., Изд-во АСТ; СПб., Texta Fantastica, 2003.
2. *Carolyn Nordstrom*, *Shadows of War: Violence, Power, and International Profiteering in the Twenty-First Century*, University of California Press, 2004.
3. *Հենն Մելիք-Շահնազարյան*, Պատերազմի և հաղթանակի մասին, Երևան, 2015թ.:
4. The economics of war Calculating the consequences, *The Economist*, Nov 28th 2002, New York.
5. *Sombart, Werner* (2001): *Economic Life in the Modern Age*. Nico Stehr & Reiner Grundmann, eds. New Brunswick: Transaction. (New English translations of key articles and chapters by Sombart, including (1906) in full and the segment defining Capitalism from (1916).
6. *Cyberwar: Security, Strategy, and Conflict in the Information Age*, New York, 1996.
7. Christophe Alix, *La realite du cybercrime depasse les pires scenarios* // *Ecrans.fr*. jeudi 11 mars 2010, selectionne par Spyworld.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թաթուլ Մանասերյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվել է պատերազմի իրական սպառնալիքի պայմաններում ապրող հասարակության ընտրությունը՝ հաշվի չառնել պատերազմի սպառնալիքը և շարունակել ազատական ուղղվածության բարեփոխումները

¹ «Social and political costs of war», available at: <http://watson.brown.edu/costsofwar/costs/social>

կամ պատրաստվել պարտադրված պատերազմի ցանկացած դրսևորման՝ ըստ այդմ մշակելով և կիրառելով զարգացման նոր մոդել: Ցույց է տրված, որ ինչպես ամեն ապրանք ու ծառայություն, ամեն արհավիրք ու աղետ, այնպես էլ պատերազմն ունի իր գինը: Եվ դրա հաշվարկն ամեննին էլ տնտեսագիտության դասական սահմանումներով կատարվող գնի հաշվարկ չէ:

ЭКОНОМИКА ВОЙНЫ: ПРИОРИТЕТЫ ГОСУДАРСТВА

Татул Манасерян

Резюме

В статье представлен выбор для общества, живущего в условиях реальной угрозы войны: не учитывать угрозу войны и продолжать реформы либерального толка или подготовиться к любым проявлениям навязанной войны, в соответствии с этим разрабатывая и применяя новую модель развития. Показывается, что, как любой товар и услуга, любое бедствие и катастрофа, так и война имеет свою цену. И ее расчет отнюдь не укладывается в классические определения экономики по расчету стоимости и цены.

THE ECONOMY OF WAR: GOVERNMENT PRIORITIES

Tatul Manaseryan

Resume

The article presents choices of society that lives under a real threat of war: ignore the threat and continue liberal reforms or prepare for a any manifestations of forced war and create a new development model accordingly. It is demonstrated that as with any goods or services, any disaster and catastrophe, the war has its price. And determination of this price is not an economic calculation done according to classical definitions.

ՌՌԻՍԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԵԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեեր Մահակյան՝

Բանալի բառեր՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականություն, Ռուսաստանը Մերձավոր Արևելքում, ԵԱՏՄ, Ռուսաստանը Հեռավոր Արևելքում, Ռուսաստան-Արևմուտք հարաբերություններ:

21-րդ դարի առաջին տասնամյակից հետո Ռուսաստանին հաջողվեց դուրս գալ տնտեսական ճգնաժամից, վերականգնել ռազմական հզորությունն ու բռնել ինքնուրույն քաղաքական բևեռ դառնալու ճանապարհը: Դժվարին արտաքին մարտահրավերների նկատմամբ Ռուսաստանի արձագանքը հասկանալու, ինչպես նաև հետագա հնարավոր քայլերը վերլուծելու համար կարևոր է ուսումնասիրել Ռուսաստանի որդեգրած արտաքին քաղաքական ռազմավարությունը:

2016թ. նոյեմբերի 30-ին Կրեմլը հրապարակեց «Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգ» փաստաթուղթը, որը ստորագրվել է նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից: Հետագայում ռուսական դիվանագիտությունը հենց այս իրավական փաստաթուղթը հիմք վերցնելով կշարունակի գործունեությունը:

Այս փաստաթուղթում նշված է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը նպատակ ունի ապահովել երկրի անվտանգությունը, անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, այն պետք է նպաստի ժողովրդավարական ու իրավական երկրի ստեղծմանը, ինչպես նաև խթանի մրցունակ տնտեսության զարգացմանը [1, c. 1-2]:

Հատկանշական է, որ հայեցակարգում ասվում է, որ ռուսական արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից մեկը Ռուսաստանն արդի աշխարհի ազդեցիկ կենտրոններից մեկը դարձնելն է [1, c. 2]:

*Նանջինգի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտ:

Այս կետը խոսում է այն մասին, որ ապագայում Ռուսաստանն ավելի ակտիվ է ներգրավվելու համաշխարհային քաղաքականությունում, փորձելու է ստեղծել նոր ազդեցության գոտիներ, գտնել նոր դաշնակիցներ ու համակիրներ, որոնց միջոցով առաջ է տանելու իր ազգային շահը, միջազգային տարաբնույթ զարգացումներից փորձելու է քաղել սեփական օգուտները:

Ինչ խոսք, Ռուսաստանն այս ամենն իրագործելու համար հզոր լծակներ ունի, կարելի է նշել հետևյալ հանգամանքները.

1. Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի (ՄԱԿ ԱԽ) 5 մշտական անդամներից է: Այս հանգամանքը Մոսկվային հնարավորություն է ընձեռում իր ձայնը լսելի դարձնել համաշխարհային օրենսդրության ստեղծման այս բարձր հարթակում: Մշտական անդամակցությունը Ռուսաստանին տալիս է նաև վետոյի իրավունք, այսինքն՝ առանց նրա վերջնական համաձայնության ՄԱԿ ԱԽ մյուս գործընկերները չեն կարող բանաձևեր ընդունել, ինչը Ռուսաստանին հնարավորություն է տալիս պահպանել իր տեղը համաշխարհային կարևոր խաղացողների ցանկում: Հենց սա է պատճառը, որ արտաքին քաղաքականությանը վերաբերող նոր հայեցակարգում նշված է, որ Ռուսաստանը հետամուտ է լինելու ՄԱԿ դերի բարձրացմանն ու ամրապնդմանը:
2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության փլուզումից հետո էլ Ռուսաստանը շարունակում է տիրապետել աշխարհի՝ հզորությամբ երկրորդ ռազմական զինանոցին, որում առկա է նաև արդիականացված միջուկային սպառազինություն: Մոսկվան ռազմական ցուցանիշներով զիջում է միայն Վաշինգտոնին: Սեփական զինուժը հզորացնելու և արդիականացնելու համար Մոսկվան մինչև 2020թ. մտադիր է ներդնել \$700 մլրդ [2, p. 24]:
3. Ռուսաստանը տիրապետում է նավթի ու գազի, բնական հանածոների հսկայական պաշարների, որոնք նրան նույնպես զարգանալու մեծ հնարավորություններ են ընձեռում: Վերջին տարիներին նավթի գների¹ կտրուկ անկման պայմաններում էլ այս գործոնը

¹ Կարևոր է նշել, որ 2014-2016թթ. նավթի մեկ բարելի զինը \$100-ից իջավ մոտավորապես 30-ի, արդյունքում՝ Ռուսաստանի տնտեսությունը տուժեց, քանի որ բյուջեի կեսը կազմվում է նավթի և գազի վաճառքից գոյացած հարկերի միջոցով [3, p. 19]:

դեռևս շարունակում է կարևոր դեր խաղալ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում, քանի որ էներգակիրների մատակարարումների շնորհիվ Ռուսաստանը որոշակի տնտեսական և քաղաքական ազդեցություն է ստանում:

4. Աշխարհագրական դիրքը ևս մեծ դեր է խաղում, քանի որ ռուսական ցամաքային, ռազմածովային և ռազմաօդային ուժերը մանրելու մեծ հնարավորություններ են ստանում: Արևելքից արևմուտք ձգվող սահմանները Ռուսաստանին ընձեռում են նաև տնտեսական լայն հնարավորություններ, այն Եվրոպան Ասիային կապող կամուրջ է:

Անդրադառնանք հայեցակարգի հիմնական որոշ դրույթների, ներկայացնենք, թե որ ուղղություններով է շարժվելու «ռուսական արջը», որ լծակներն են Մոսկվայի կողմից օգտագործվելու արտաքին քաղաքականությունում, ի՞նչ զարգացումներ կարող են տեղի ունենալ Ռուսաստանի՝ համաշխարհային ակտիվ քաղաքականություն վերադառնալու պայմաններում:

Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)

Հայեցակարգում Ռուսաստանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային առաջնահերթությունների վերաբերյալ բաժնում նշված է, որ Ռուսաստանի հիմնական նպատակն է զարգացնել բազմակողմ և երկկողմ հարաբերություններ ԱՊՀ երկրների հետ, նպաստել Ռուսաստանի մասնակցությամբ ինտեգրացիոն ծրագրերի իրագործմանը [1, c. 22-23]:

Հայեցակարգի 51-րդ կետում կարևորվում են Եվրասիական տնտեսական միության¹ (ԵԱՏՄ) շրջանակներում Հայաստանի, Ղազախստանի, Բելառուսի և Ղրղզստանի հետ հարաբերությունների զարգացումն ու համատեղ ծրագրերի իրագործումը [1, c. 23]:

Այս հավակնոտ ծրագիրը նպատակ ունի մեկ քաղաքական ու տնտեսական միավորի մեջ համախմբել նաև նախկին ԽՍՀՄ մյուս անդամներին, որոնք դեռևս չեն ինտեգրվել: Խոսքն առաջին հերթին այն

¹ Եվրասիականության գաղափարախոսությունը սկիզբ է առել ռուս էմիգրանտների շրջանում դեռևս 1921թ.: Ըստ նրանց պատկերացումների՝ Ռուսաստանը ոչ էվրոպական, ոչ էլ ասիական երկիր է, այլ յուրահատուկ խառնարան [4, p. 3]:

երկրների մասին է, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո, ցավոք, հետընթաց ապրեցին և այդպես էլ չկարողացան ադապտացվել ներկա բարդ համաշխարհային գործընթացներին, ի վիճակի չեղան գտնել իրենց այն քաղաքական ու տնտեսական տեղն ու դերը, որը նրանց հետաքրքիր կդարձներ այլ խաղացողների համար. արդյունքում՝ գտնվում են քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամի մեջ, որին ավելանում է նաև սեփական անվտանգության հետ կապված հարցերը ինքնուրույն լուծելու անկարողությունը:

Ինչպես 2005թ. նշել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ԽՍՀՄ քաղաքական դաշտից անհետացումն իսկական «մեծ աշխարհաքաղաքական աղետ» էր [5, pp. 30-38]: Աղետ էր հատկապես ԽՍՀՄ-ի և նրա հիմնական դաշնակիցը հանդիսացող երկրների համար: Ընդամենը մի գիշերվա մեջ աշխարհի հզորագույն երկրի քաղաքացիները հայտնվեցին սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, իսկ ԽՍՀՄ անդամ որոշ երկրներում սկսվեցին ազգամիջյան բախումներ:

Թվում էր, թե հետխորհրդային տարածքում գտնվող երկրները նույնպես պետք է հետաքրքրված լինեին ԵԱՏՄ-ին¹ անդամակցելու տեսլականով, բայց իրավիճակը բարդացնում են ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած բազմաթիվ հակամարտությունները, որոնք խանգարում են ինտեգրացիոն գործընթացներին: Այս ծրագրի երկրորդ խանգարիչ հանգամանքն է նաև Արևմուտքի դիրքորոշումը, որն ամեն գնով փորձում է խանգարել ԽՍՀՄ հնարավոր «վերակենդանացման» աշխատանքներին, թեև հասկանալի է, որ երկրորդ ԽՍՀՄ նույնիսկ տեսականորեն այլևս հնարավոր չէ ստեղծել:

Երկրորդ հիպոթեզի լավագույն ապացույցը կարող է հանդիսանալ Արևմուտքի օգնությամբ Ուկրաինայում իրականացված հեղափոխությունը, որի հետևանքով Ուկրաինան կտրվեց Ռուսաստանից, ուստի չանդամակցեց ԵԱՏՄ-ին, իսկ Ուկրաինայի Արևելքում տեղի ռուսների և ուկրաինական ուժերի միջև ռազմական բախումները խոչընդոտներ են առաջացնում այս երկու սլավոնական ազգերի միջև, որոնք կապված էին պատմական ու մշակութային բազմաբնույթ հարաբերություններով:

¹ Հետխորհրդային տարածաշրջանում Տնտեսական միության ստեղծման վերաբերյալ ԱՊՀ երկրների ղեկավարների կողմից որոշումն ընդունվել էր դեռևս 1993թ., սակայն այդպես էլ մնացել էր թղթի վրա [6, c. 175]:

Ռուսաստանի համար իրավիճակը բարդացավ նաև Արևմուտքի կողմից սահմանված տնտեսական պատժամիջոցների, ինչպես նաև նավթի գնի անկման պատճառներով: Համենայնդեպս, նույնիսկ այս դժվար իրավիճակում Ռուսաստանին հաջողվեց որոշակի հաջողություն արձանագրել Սիրիայում, որտեղ նրա օդուժի անմիջական օժանդակությամբ Բաշար ալ-Ասադը կարողացավ դուրս գալ անելանելի իրավիճակից ու անցնել հակահարձակման, իսկ Ուկրաինայի արևելքում ռուսամետ ուժերը շարունակում են վերահսկել իրավիճակը:

Ռուսական արջը փորձում է փրկել Մերձավոր Արևելքի վառվող փեթակները

Ռուսաստանը սիրիական հիմնախնդրի կարգավորումը տեսնում է Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնմամբ [1, շ. 33]: Ի դեպ, ռուսներին հաջողվեց Արևելյան Հալեպն ընդդիմադիրներից և ահաբեկիչներից «մաքրելու» հարցում համաձայնություն ձեռք բերել Թուրքիայի և Իրանի հետ¹: Հետաքրքիր է, որ Հալեպն Ասադին վերադարձնելու հարցում այս յուրահատուկ և միմյանցից խիստ տարբեր անդամներից բաղկացած եռյակին հաջողվեց շրջանցել ԱՄՆ-ը:

Ինչպես նշում է Ռուսաստանի ԱԳ նախարար Մերգել Լավրովը. «ԱՄՆ-ի հետ ձեռք բերված նախկին համաձայնությունները ձախողվեցին ամերիկացիների մեղքով, քանի որ Վաշինգտոնում ի վիճակի չգտնվեցին կամ չցանկացան ապահովել ամենազիջավորը, այն է՝ տարբերակում մտցնել այսպես կոչված «չափավոր ընդդիմության» ջոկատների և «Իսլամական պետության», «Ան-Նուսրայի» և այլ ծայրահեղական կազմակերպությունների ահաբեկիչների միջև: Հետագայում էլ կշարունակենք համագործակցությունն Անկարայի, Թեհրանի և տարածաշրջանի մյուս ուժերի հետ»²:

Ռուսաստանի՝ Սիրիայի հակամարտությունում բռնած կոշտ դիրքորոշումն ու իսլամական ծայրահեղական գաղափարներն ահաբեկչության նպատակներով տարածողներին մինչև վերջ ոչնչացնելու վճռա-

¹ Интервью С.В. Лаврова агентству «Интерфакс» 27 декабря 2016, <http://www.russia.org.cn/ru/news/intervyu-s-v-lavrova-agentstvu-interfaks/>

² Նույն տեղում:

կանությունը գալիս է նաև նրանից, որ Ռուսաստանում¹ բնակվում են միլիոնավոր մուսուլմաններ, և այս քայլով Ռուսաստանը փորձում է կասեցնել «Իսլամական պետության գաղափարախոսություն» կոչված հիվանդության տարածումը սեփական երկրում և ազդեցության գոտիներում:

Լինելով ՄԱԿ ԱԽ 5 մշտական անդամներից մեկը՝ Ռուսաստանը կարևոր դեր է խաղում նաև իրանական միջուկային հիմնախնդրի կարգավորման գործում: Իրանական դիվանագիտական «ճակատում» միջազգային հանրությունը կարողացավ հաջողություն գրանցել նաև Ռուսաստանի վարած կառուցողական քաղաքականության շնորհիվ: Կարևոր է նշել, որ Ռուսաստանը մշտապես դեմ է հանդես եկել Իրանում միջուկայինացման դեմ պայքարի քողի տակ հնարավոր հեղաշրջում կազմակերպելու Արևմտուտքի ծրագրերին [7]: Ռուսաստանը նաև դեմ է արտահայտվել հարցը ռազմական ուղով լուծելուն, ինչպես նաև միակողմանի պատժամիջոցների միջոցով, որոնք հաստատված չեն ՄԱԿ ԱԽ կողմից, Թեհրանին ծնկի բերելուն: Խաղալով կառուցողական դեր՝ Ռուսաստանն առաջարկեց հարցի փուլային լուծման տարբերակը, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ Իրանի հետ բազմակողմ հարաբերություններում հաջողություն արձանագրելու գործում [8, p. 20]:

Վայրիվերումների շարան. այսպես կարելի է բնութագրել ռուս-թուրքական հարաբերությունները, սակայն փաստ է, որ այս փուլում երկու կողմերն էլ կարևորում են թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական հարաբերությունները: Վերոնշյալի վառ ապացույցն է այն, որ ռուսական ռազմաօդային ուժերին պատկանող կործանիչը թուրքերի կողմից խոցվելուց հետո երկկողմ հարաբերություններում առկա ճգնաժամը կարճ տևեց: Սակայն Մերձավոր Արևելքում առկա նոր իրավիճակը, երբ ԱՄՆ-ը փորձում է հեռանալ կամ ցույց է տալիս, որ մտադիր է հեռանալ, հնարավոր է՝ այս կարևոր տարածաշրջանն ազդեցության ոլորտների բաժանման ռուս-թուրքական նոր դիմակայության հետևանք դառնա, որից, իհարկե, անմասն չի մնա նաև Իրանը:

¹ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում նշվում է, որ միջազգային հանրությունը միանաբար պետք է պայքարի ահաբեկիչների դեմ և հետագայում բացառի «Իսլամական պետության» նման վտանգավոր կառույցների առաջացումը: Ռուսներն առաջարկում են ստեղծել ահաբեկչության դեմ պայքարող կոալիցիա, որը կգործի հստակեցված, իրավական դաշտի հիման վրա [1, c. 6-7]:

**Հեռավորարևելյան ուղղության ռուսական տեսլականը,
կամ՝ ռուսական արջը նայում է դեպի Պեկին**

Արտաքին քաղաքականության հայեցակարգում նշված է, որ նկատվում է, որ համաշխարհային պոստենցիպլը կուտակվում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, այդ պատճառով Արևմուտքը հետզհետե կորցնում է իր քաղաքական ու տնտեսական առաջատարի պատմական դերը [1, c. 3]:

Այս համատեքստում կարևոր է արձանագրել Հեռավոր Արևելքում սեփական ձեռագրով պատասխանատու ուժի՝ Չինաստանի ի հայտ գալը, որն իր «Մետաքսի ճանապարհ» տնտեսական գոտու (ՄՃՏԳ), «Օովային մետաքսի ճանապարհ» (ՕՄՃ) ծրագրերի միջոցով փորձում է էլ ավելի մեծացնել իր ազդեցությունը [9, էջ 43]: Հետաքրքրական է, որ Ռուսաստանի նախագահը չինական այս խոշոր տնտեսական ծրագրում վտանգ չի տեսնում, ընդհակառակը, գտնում է, որ ԵԱՏՄ-ն պետք է համակցել ՄՃՏԳ-ին¹:

Պարզ է, որ Արևմուտքի հետ հարաբերությունների սրման պայմաններում Ռուսաստանը պետք է խորացնի հարաբերությունները Չինաստանի հետ: Սա նշված է նաև հայեցակարգի 84-րդ կետում, ըստ որի՝ Ռուսաստանը պատրաստակամություն է հայտնում Չինաստանի հետ զարգացնել համագործակցությունը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական բնագավառներում [1, c. 31]: Կարևոր է նաև նշել, որ միայն Չինաստանը չի կարող փակել ռուսական տնտեսությունում առաջացած այն բացը, որն ի հայտ եկավ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների վատթարացումից հետո: Ինչպես նշում է Սթենֆորդ համալսարանի պրոֆեսոր Ստեպան Կոտկինը. «Իրականում Չինաստանի հետ սկսված «աղմկոտ» «ռազմավարական գործընկերությունը» շատ քիչ ներդրումներ և ֆինանսներ բերեց Ռուսաստանին, և դրանք ի վիճակի չեն փակել այն վնասները, որոնք առաջացել են արևմտյան պատժամիջոցների պատճառով» [4, c. 7]:

Ի տարբերություն տնտեսական դաշտում համագործակցության դանդաղ զարգացման՝ Ռուսաստանի և Չինաստանի միջև ձևավորվել է

¹ Владимир Путин принял участие в пленарном заседании юбилейной, 70-й сессии Генеральной Ассамблеи ООН в Нью-Йорке, 28 сентября 2015 года, <http://kremlin.ru/events/president/news/50385>

քաղաքական սերտ համագործակցություն: Այս համագործակցության արդյունքներից հատկանշական է իրանական և կորեական միջուկային հիմնախնդիրների, Չինական ծովի, սիրիական ճգնաժամի շուրջ տարվող բանակցություններում տեսակետների ու դիրքորոշումների համապատասխանեցումը: Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև Ռուսաստանի և Չինաստանի¹ արտահայտած կոշտ դիրքորոշմանն ընդդեմ ԱՄՆ-ի և Հարավային Կորեայի ձեռք բերած համաձայնության, ըստ որի՝ վերջիններս ցանկանում են Հյուսիսային Կորեայի սահմանի մոտ տեղակայել ԱՄՆ *THAAD (Terminal High Altitude Area Defense)* հակաօդային պաշտպանության կայանները, որոնք ի վիճակի են չեզոքացնել նաև Ռուսաստանի ու Չինաստանի տարածքից արձակված հրթիռները:

Ինչպես Իրանի միջուկայինացման հիմնախնդրի պարագայում, այնպես էլ Հյուսիսային Կորեայի դեպքում Ռուսաստանը դեմ է հանդես գալիս Կորեական թերակղզում միջուկային սպառազինությունների տարածմանը: Հյուսիսային Կորեայի միջուկային հիմնախնդրի լուծումը տեսնում է միայն բազմակողմ բանակցությունների միջոցով [1, c. 32]: Եթե ՄԱԿ ԱԽ-ում իրանական միջուկային հիմնահարցի լուծման շուրջ տարվող բանակցություններում Ռուսաստանն էր առաջին համարի տակ խաղում՝ ստանալով Չինաստանի աջակցությունը, ապա Հյուսիսային Կորեայի հիմնահարցում Մոսկվան փորձում է փոխլրացնել Պեկինին:

Արևմտյան ուղղության փակվող, բայց դեռևս չփակված դռները

Թեև հայեցակարգում նշվում է, որ Ռուսաստանը հետևողական է 2010թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի հետ ձեռք բերված ռազմավարական նշանակություն ունեցող հարձակողական սպառազինությունների կրճատմանը վերաբերող համաձայնությունների հարցում [1, c. 11], բայց պետք է նաև արձանագրել այն փաստը, որ ներկա լարված հարաբերությունները բարդացնում են սպառազինությունների կրճատման շուրջ հնարավոր նոր համաձայնությունների ձեռքբերումը: Առավել ևս, նման իրավիճակում մեծանում է վտանգը, որ կողմերը հնարավոր է նաև հրաժարվեն

¹ Zhang Yunbi, “Beijing Urges Caution as Seoul Considers THAAD Missile System,” China Daily, 13 January 2016, from http://www.chinadaily.com.cn/world/2016-01/13/content_23075032.htm?mkt_tok=3RkMMJWWfF9wsRous6rIZKXonjHpfsX66eotXaG%2B1MI%2F0ER3fOvrPUfGjI4JSpri%2BSLDwEYGJlv6SgFSrnAMbBwzLgFWhI%3D

նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունից ու սպառազինությունների նոր մրցավազք սկսեն, ինչպիսին առկա էր Սառը պատերազմի տարիներին:

Հայեցակարգում քննադատության է արժանացվում Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) և Եվրոպական միության (ԵՄ)՝ Եվրատլանտյան տարածաշրջանում վարած քաղաքականությունը: Այս երկու արևմտյան միավորների քաղաքականությունը Ռուսաստանը որակում է որպես «էքսպանսիա»: Նշվում է, որ եվրոպական ընդհանուր անվտանգության դաշտ ստեղծելու գաղափարն այդպես էլ մնացել է թղթի վրա, իսկ Ռուսաստանին գուպելու ԱՄՆ և նրա արևմտյան գործընկերների քաղաքականությունը պատճառ է հանդիսացել հարաբերությունների վատթարացման [1, c. 25]:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ Վարշավայի պակտի նախկին անդամները սկսեցին անդամագրվել ՆԱՏՕ-ին, Ռուսաստանը ևս փորձեց հասկանալ, թե որքանով է այս գործընթացը նպաստում կամ հակասում Ռուսաստանի ազգային շահերին: Հատկանշական է, որ 1988-1994թթ. ընկած ժամանակահատվածում Ռուսաստանը սեփական բանակի անձնակազմի թիվը 5 մլն-ից կրճատեց և հասցրեց 1 մլն-ի [10, c. 98]:

«Դեռևս 1991թ. դեկտեմբերին, երբ ԽՍՀՄ-ը ֆորմալ առումով դեռևս գոյություն ուներ, Ռուսաստանի նախագահ Բ.Ելցինը պատրաստակամություն հայտնեց ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը դարձնել արտաքին քաղաքականության բնագավառում Ռուսաստանի հեռահար նպատակներից մեկը» [10, c. 87]: Տարիներ անց Բ.Ելցինը հիշեցման կարգով ավելացրեց, որ Մոսկվան դեմ է առանց Ռուսաստանի ՆԱՏՕ ընդլայնմանը [10]:

Ավելի ուշ, երբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ղեկավարի պաշտոնը ստանձնեց Եվգենի Պրիմակովը, ռուսները, զգալով ՆԱՏՕ ընդլայնման արդյունքում միայնակ մնալու և ՆԱՏՕ-ական երկրների կողմից «բնական» շրջապատման մեջ ընկնելու վտանգը, հստակեցրին իրենց արտաքին քաղաքականությունը և դեմ արտահայտվեցին ՆԱՏՕ կազմի հետագա ընդլայնմանը: Եվգենի Պրիմակովն իր գրքում, խոսելով ՆԱՏՕ ընդարձակման շուրջ իր վարած բանակցությունների մասին, նշում է. «1996թ. հուլիսի 30-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ռիֆկինդի հետ հանդիպման ժամանակ ես նշեցի, որ ՆԱՏՕ ընդարձակման հարցում գոյություն ունեն երկու

«կարմիր գծեր», որոնք ռուսները չեն անցնի: Ուղղահայացը, որ ՆԱՏՕ ենթակառուցվածքները նոր անդամների շնորհիվ մոտենան Ռուսաստանի սահմաններին, իսկ հորիզոնական գիծն այն է, որ Մոսկվան երբեք չի հաշտվի Բալթյան և նախկին ԽՍՀՄ մյուս անդամ երկրների՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու փաստի հետ» [11, շ. 226]: Վերոնշյալ մտքերը մինչև այսօր էլ շարունակում են մնալ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական բաղադրիչները: Այս համատեքստում պետք է փորձել հասկանալ նաև Ռուսաստանի անհամաձայնությունն ու կտրուկ արձագանքն ի պատասխան Վրաստանի և Ուկրաինայի ղեկավարության ցանկությանն՝ անդամակցել ՆԱՏՕ-ին:

ՆԱՏՕ ընդգծված հակառուսական ուղղվածությունը Մոսկվայում քաջ գիտակցում են, սա է փաստում նաև Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի ելույթը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում. «Որոշ գործընկերների (նկատի ունի ԱՄՆ-ը) մոտ դեռևս պահպանվում են «Սառը պատերազմի» ժամանակաշրջանին հատուկ «ճամբարային» մտածելակերպը և աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող նոր տարածքների իրացմամբ զբաղվելը: Սկզբնական շրջանում նրանք շարունակեցին ՆԱՏՕ ընդլայնման քաղաքականությունը, հարց է առաջանում՝ ինչո՞ւ, եթե Վարշավայի պակտը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ ԽՍՀՄ-ը քանդվեց»¹: Հետևելով դեպքերի ընթացքին՝ կարելի է եզրակացնել, որ ՆԱՏՕ-ն ներկայում օգտագործվում է Ռուսաստանին զսպելու համար, այն հանդիսանում է նաև Արևմուտքի յուրահատուկ «պատժիչ ձեռքը», որի միջոցով ժամանակ առ ժամանակ հեռացնում է իրեն ոչ հարմար քաղաքական ռեժիմները:

Ռուս-ամերիկյան հակամարտությունը տեղափոխվել է նաև կիբեռ-ոլորտ, այստեղ ծավալվել է իսկական պատերազմ: Ըստ ամերիկյան կողմի, հենց ռուս ցանցահեռնների միջոցով աշխարհը տեղեկացավ Հիլարի Քլինթոնի պաշտոնական գաղտնիք պարունակող էլեկտրոնային նամակագրության հետ կապված խնդիրներին, ինչն էլ նպաստեց այն հանգամանքին, որ ԱՄՆ նախագահական ընտրություններում թեկնածու Քլինթոնը ձայներ կորցնի: ԱՄՆ որոշ պաշտոնյաներ Ռուսաստանին

¹ Владимир Путин принял участие в пленарном заседании юбилейной, 70-й сессии Генеральной Ассамблеи ООН в Нью-Йорке, 28 сентября 2015 года,

<http://kremlin.ru/events/president/news/50385>

մեղադրեցին կիբեռհարձակումների միջոցով ԱՄՆ ընտրությունների վրա ազդելու մեջ: Գործը հասավ նրան, որ Օբամայի վարչախումբը վտարեց ԱՄՆ-ում գտնվող ռուս դիվանագետներին՝ մեղադրելով նրանց ԱՄՆ-ի դեմ իրագործված կիբեռհարձակումների մասնակիցը լինելու մեջ: Վ. Պուտինը չպատասխանեց ԱՄՆ այս քայլին՝ պատճառաբանելով, որ ցանկություն չունի իջնել «խոհանոցային» դիվանագիտության մակարդակին: Արդյունքում՝ նա մասնակիցը չդարձավ ռուս-ամերիկյան հարաբերությունների վերջին կամուրջը հրկիզելու գործին և ևս մեկ անգամ փաստեց, որ պատրաստ է համագործակցել ԱՄՆ նորընտիր նախագահ Դ. Թրամփի թիմի հետ ու չի ցանկանում սրել իրավիճակը:

Ռուս-ամերիկյան վերջին բախումների պատճառները կարելի է գտնել նաև «Ռուսաստանը համաշխարհային հարցերում» պարբերականի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Ֆեոդոր Լուկյանովի արտահայտած հետևյալ մտքում. «Երկբևեռ աշխարհի հակամարտությունների ժամանակները վաղուց են անցել, բայց միաբևեռ աշխարհակարգի ժամանակն էլ է անցել, որտեղ 1991-ից գերիշխում էր ԱՄՆ-ը: Ներկայիս բազմաբևեռ աշխարհը միջազգային հարաբերությունների դաշտ բերեց ավելի շատ անվստահություն: Թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Ռուսաստանը ներկայում պայքարում են աշխարհում իրենց ներուժին համապատասխան դիրքեր զբաղեցնելու համար» [5, p. 31]:

Համենայնդեպս, կարևոր է նաև չմոռանալ այն հանգամանքը, որ ռուսական տնտեսությունը հավասար է ԱՄՆ տնտեսության միայն 1/15 մասին [4, p. 3], և թեև Ռուսաստանին 2016թ. ընթացքում հաջողվեց պահպանել հավասարակշռությունը, բայց Արևմուտքի հետ հետագա առձակատումը կարող է վտանգավոր շրջադարձներ ունենալ:

Դրիմի՝ Ռուսաստանին անցնելուց հետո հարաբերությունները հարթ չեն նաև ԵՄ-ի հետ¹: Ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ ԵՄ-ը մի շարք պատժամիջոցներ կիրառեցին Ռուսաստանի դեմ:

¹ Շեռաքրքրական է նաև, որ Ռուսաստանի կողմից Դրիմի վերամիավորման հնարավոր քայլը սպասելի էր Ուկրաինայի քաղաքական վերնախավի կողմից: 2007թ. ամերիկյան հեղինակավոր «Արտաքին հարաբերություններ» (*Foreign Affairs*) ամսագրում Ուկրաինայի նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոն նշում էր, որ Ռուսաստանին չպետք է թույլատրել, որ Սերբիայից Կոսովոյի անկախացման օրինակն օգտագործի հատկապես Դրիմի դեպքում պաշտպանելով անջատողական շարժումները, որի արդյունքում Դրիմը կանցնի Ռուսաստանին [12, p. 28]:

2016թ. հունիսին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինը Եվրահանձնաժողովի ղեկավար Ժան-Կլոդ Յունկերին փոխանցեց մի շարք առաջարկություններ, որոնց իրագործման շնորհիվ Ռուսաստան-ԵՄ հարաբերությունների բարելավման ակնատեսը կլինեինք, սակայն ԵՄ ղեկավարությունը ոչ միայն մերժեց դրանք, այլև 2016թ. վերջին երկարաձգեց հակառուսական պատժամիջոցների ժամկետները¹:

Թե ինչպես կրնա նաև ԵՄ-Ռուսաստան հարաբերությունները, մեծապես կախված է նաև 2017թ. Ֆրանսիայում սպասվող նախագահական ընտրությունների արդյունքից, ինչպես նաև ԱՄՆ նորընտիր նախագահ Դ.Թրամի արտաքին քաղաքականությունից:

Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը նշում է, որ Ռուսաստանը մտադրություն չունի հակամարտել ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կամ ՆԱՏՕ-ի հետ: Նա հավելում է, որ եվրոպական մայրցամաքի բնակիչների շահերի բավարարման լավագույն միջոցը Ատլանտյանից մինչև Խաղաղ օվկիանոս ձգվող ընդհանուր տնտեսական և հումանիտար տարածքի ստեղծումն է: Նոր ստեղծված ԵԱՏՄ-ն էլ կարող է Եվրոպան Ասիա-խաղաղօվկիանոսյան շրջանի հետ ինտեգրող լավագույն կամուրջը դառնալ²:

Ամփոփենք. 2017-ը կարող է շրջադարձային դառնալ միջազգային հարաբերություններում: ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալուն կարող է հաջորդել նաև Ֆրանսիան, եթե 2017թ. Ֆրանսիայի նախագահական ընտրություններում հաղթանակ տանի «Ազգային ճակատի» ղեկավար Մարին Լը Պենը: Ինչպես նշում է Լը Պենը, դառնալով Ֆրանսիայի նախագահ՝ նա առաջ կքաշի եվրոն շրջանառությունից հանելու ծրագիրը, եթե դա չստացվի, ապա առաջարկությամբ հանդես կգա, որ Ֆրանսիան ԵՄ տարածքից դուրս գա [13]: Դեպքերի նմանատիպ զարգացումների արդյունքում Ֆրանսիան ավելի անկախ քաղաքականություն կվարի և հնարավոր է, որ բարելավի հարաբերությունները Ռուսաստանի հետ:

¹ Кортунюв Андрей, Внешняя политика России 2016. Достижения и неудачи. Российский Совет по международным делам, 31 декабря 2016, http://russiancouncil.ru/inner/?id_4=8543#top-content

² Лавров Сергей, Историческая перспектива внешней политики России. Россия в глобальной политике, 3 марта 2016 года, http://www.mid.ru/web/guest/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/2124391

Սա է փաստում նաև Մարին Լը Պենի այն միտքը, որ ռուս-ֆրանսիական համագործակցությունը խորացնելու գործում ոչ մի իրական խոչընդոտ չկա: Միակ պատճառն այն է, որ ԱՄՆ-ը չի թույլատրում Ֆրանսիային: Նա նաև նշում է, որ ԱՄՆ-ը սխալ է գործում՝ Ռուսաստանի դեմ սկսելով նոր «Մառը պատերազմ», այս քայլով Վաշինգտոնը Մոսկվային մղում է Պեկինի գիրկը, իսկ ռուս-չինական ծայրահեղ հզոր ընկերակցությունը վտանգավոր է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ամբողջ աշխարհի համար [13, p. 6]:

Ըստ հայեցակարգի 21-րդ և 22-րդ կետերի, Ռուսաստանը գիտակցում է իր պատասխանատվությունն աշխարհի անվտանգության պահպանման գործում, թե՛ տարածաշրջանային, թե՛ համաշխարհային մակարդակներում: Փաստաթղթում նշվում է, որ պատմության ընթացքում Ռուսաստանը խաղում է *յուրահատուկ դեր*, այն հավասարակշռում է միջազգային հարաբերությունները, ինչպես նաև նպաստում է համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը [1, c. 8]:

Այս մտքին համաձայն չէ ամերիկյան Սթենֆորդ համալսարանի պրոֆեսոր Ստեպան Կոտլիկը. «Մինչև Ռուսաստանը չհամապատասխանեցնի իր նկրտումները սեփական հնարավորությունների հետ, այն չի դառնա «նորմալ» երկիր» [4, p. 6]: Հակադարձելով Կոտլիկին՝ պետք է նշել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը բազմիցս փորձեց ինտեգրվել արևմտյան աշխարհին ու դառնալ այդ «նորմալ երկիրը», սակայն հանդիպեց փակ դռների, որից հետո փորձեց շրջվել դեպի Արևելք, բայց այնտեղ էլ շատ դժվար է խաղարկելը, քանի որ Չինաստանն էլ իր սեփական խաղն է խաղում ու դժվար թե դիրքերը զիջի ռուսներին: Սա էր պատճառը, որ Ռուսաստանը հայացքն ուղղեց դեպի հետխորհրդային երկրներն ու սկսեց ինքնուրույն կենտրոնի վերածվելու հավակնոտ գործընթացը:

Արևմուտքի՝ Ռուսաստանը մեկուսացնելու և զսպելու քաղաքականության պատճառով այդ երկիրը, հնարավոր շրջափակումը ճեղքելու, սեփական ազգային շահերը պաշտպանելու նպատակով, սկսեց ագրեսիվ քաղաքականություն վարել և կայծակնային արագությամբ միավորեց թե՛ Ղրիմը, թե՛ Սևաստոպոլը: Ինչպես նշում է ամերիկյան Քարնեգի կենտրոնի մոսկովյան մասնաճյուղի տնօրեն Դմիտրի Տրենինը. «Ղրիմի՝ Ռուսաստանի հետ միավորման հարցը շատ ռուսների համար

պատմական արդարության վերականգնում էր» [2, p. 29]: Նմանատիպ կարծիք է արտահայտում նաև Ֆեոդոր Լուկյանովը. «ԽՍՀՄ փլուզումից հետո ռուսները Ղրիմի՝ Ռուսաստանի տարածքից դուրս մնալը համարել են տարածքային ամենանվաստատուցիչ կորուստը: Երկար ժամանակ Ղրիմը հանդիսանում էր հետխորհրդային շրջանում Ռուսաստանի՝ իր պատշաճ կարգավիճակի համար չպայքարելու խորհրդանիշը» [5, p. 35]:

Վերցնելով Ղրիմն ու պահպանելով Ասադի վարչակարգը՝ Ռուսաստանը տապալեց Արևմուտքի այն ծրագիրը, ըստ որի՝ նա պետք է դուրս վճռվեր երկու ծովերից՝ Սև ու Միջերկրական: Պահելով Ասադին՝ Վ.Պուտինը պահպանեց և ընդլայնեց Լաթաքիայում գտնվող ռազմաբազաները, միավորելով Ղրիմն ու Սևաստոպոլը՝ նա պահպանեց ռուսական նավատորմի գերիշխող դիրքը Սև ծովում:

Միրիական քառսի և ուկրաինական հակամարտության ընթացքում, ԽՍՀՄ փլուզումից շատ հետո, Ռուսաստանը ցուցադրում է, որ ի վիճակի է պաշտպանել սեփական ազգային շահը ոչ միայն հայտարարությունների կամ բանակցությունների մակարդակում, այլև ռազմական ուժի ակնհայտ կամ քողարկված օգտագործմամբ:

Հետաքրքիր է, որ Ղրիմը Ռուսաստանին միավորելու շնորհիվ, մինչև 2016թ. փետրվարը նախագահ Վ.Պուտինի վարկանիշը շարունակում էր մնալ 80% [14, p. 44]: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ Ռուսաստանի ներկայիս արտաքին քաղաքականությունն արժանանում է նաև ազգաբնակչության հավանությանը:

Ի՞նչ զարգացումներ կարող են տեղի ունենալ համաշխարհային ակտիվ քաղաքականություն Ռուսաստանի վերադառնալու պայմաններում:

Ռուսաստանը, միավորելով նախկին ԽՍՀՄ երկրները մեկ տնտեսական ու քաղաքական միավորի մեջ, կարող է ինքնուրույն, հզոր կենտրոն դառնալ, որն այլընտրանք կդառնա Արևմուտքի և Արևելքի (չինական) մոդելների: Կիրառվող գաղափարախոսությունը՝ Եվրասիականությունը ևս հետաքրքիր է ընտրված, այն հնարավորություն կտա հետագայում ԵՍՏՄ դոները բաց պահել նաև Եվրասիա մայրցամաքի մյուս ժողովուրդների համար, որոնք հետաքրքրված կլինեն համագործակցել կամ ինտեգրվել ԵՍՏՄ-ին: Եթե իսկապես հաջողվի ԵՍՏՄ-ն ու ՄՃՏԳ-ն համակցել, ապա Ռուսաստանն ու Չինաստանը

կարող են դառնալ հզոր բևեռ՝ վերջնականապես փոխելով «Սառը պատերազմից» հետո առաջացած, բայց արդեն ճաքեր տված միաբևեռ աշխարհը:

Ռուսաստանի ակտիվացումը նշանակում է, որ հետագայում ամրապնդվելու է նաև ՄԱԿ դերակատարումը, եթե առաջ ԱՄՆ-ը բազմաթիվ անգամներ անտեսում էր ՄԱԿ-ն ու շրջանցում այն, ապա ներկայում ստիպված կլինի նորից վերադառնալ այս ձևաչափին, քանի որ հակառակ դեպքում Ռուսաստանն ու Չինաստանն էլ կարող են նման կերպ վարվել, և միջազգային հարաբերություններում վտանգավոր ու անկառավարելի քառու կառաջանա: Ուստի, Ռուսաստանի վերադարձը համաաշխարհային քաղաքականությունն որոշակիորեն կհավասարակշռի իրավիճակը:

ԵԱՏՄ հետագա զարգացումը հնարավորություն կտա զարգացնել նաև ԽՍՀՄ փլուզումից հետո ծանր տնտեսական իրավիճակում գտնվող և հետընթաց գրանցած նախկին խորհրդային երկրները: Միակ վտանգն այն է, որ հնարավոր է, որ արդեն մեկնարկած «Սառը պատերազմը» շարունակի խորանալ, ինչը կարող է բերել նոր քաղաքական ճգնաժամի, սպառազինությունների մրցավազքի, պատերազմների, պարտվողների ու հաղթողների:

Հունվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Указ президента об утверждении Концепции внешней политики Российской Федерации, Москва, Кремль, 30 ноября 2016.
2. *Trenin Dmitri*, "The Revival of the Russian Military," *Foreign Affairs*, May/June 2016, pp. 23-30.
3. *Guriev Sergei*, "Russia's Constrained Economy," *Foreign Affairs*, May/June 2016, pp. 18-23.
4. *Kotkin Stephan*, "Russia's Perpetual Geopolitics," *Foreign Affairs*, May/June 2016, pp. 2-9.
5. *Lukyanov Fyodor*, "Putin's Foreign Policy," *Foreign Affairs*, May/June 2016.
6. *Примаков Евгений*, Россия. Надежды и тревоги, Москва, Центрполиграф, 2015.
7. *Путин Владимир*, Под видом борьбы с распространением ОМУ предпринимаются попытки сменить иранский режим, *Индекс Безопасности*, #1, том 18, 2012, с. 143-145.
8. *Ryabkov Sergey*, "Changing Priorities in International Security," *A Russian Journal on International Security: Security Index*, Vol. XX, #1, 2014, pp. 17-25.

9. *Սահակյան Մհեր*, Չինաստանը որպես 21-րդ դարի պատասխանատու ուժ, «21-րդ ԴԱԸ», # 6, 2016, էջ 42-48:
10. *Барсенков Александр*, Внешняя политика России на начальном этапе становления новой государственности (1991-1993), Вестн. Моск. ун-та, сер. 25, Международные отношения и мировая политика, 2013, #4, с. 75-105.
11. *Примаков Евгений*, Встречи на перекрестках, Москва, Центрполиграф, 2015.
12. *Tymoshenko Yulia*, “Containing Russia,” in Gedeon Rose Crisis in Ukraine,” Foreign Affairs, pp. 20-34.
13. “France’s Next Revolution? A Conversation with Marine Le Pen,” Foreign Affairs, November/December 2016, pp. 2-9.
14. Lipman Maria, “How Putin Silences Dissent,” Foreign Affairs, May/June 2016, pp. 38-47.

**ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՄԵՇ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Մհեր Սահակյան

Ամփոփագիր

Հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները, ներկայացնել, թե որ ուղղություններով է շարժվելու «ռուսական արջը», որ լծակներն են Մոսկվայի կողմից օգտագործվելու արտաքին քաղաքականությունում, ինչ զարգացումներ կարող են տեղի ունենալ համաշխարհային ակտիվ քաղաքականություն Ռուսաստանի վերադառնալու պայմաններում:

РОССИЯ ВОЗВРАЩАЕТСЯ В БОЛЬШУЮ МИРОВУЮ ПОЛИТИКУ

Մեր Տաակյան

Резюме

Статья нацелена на изучение основных положений внешнеполитической повестки России. Предпринята попытка проанализировать и ответить на следующие вопросы. По каким геополитическим направлениям будет двигаться «русский медведь»? Какие рычаги и ресурсы будут использованы Москвой для реализации своих целей в международных отношениях? Какие сдвиги произойдут во время возвращения России в большую мировую политику?

THE RETURN OF RUSSIA TO GLOBAL BIG POLITICS

Mher Sahakyan

Resume

The article focuses on the main concepts of the Russian foreign policy. It aims to analyse and answer such questions as: In which directions will the “Russian bear” move? What tools and sources will be used by Moscow for implementation of its foreign policy? What kind of developments might take place with Russia’s return to the big politics?

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Կարինե Հակոբյան՝

Բանալի բառեր՝ հաստատութենական փոփոխություններ, հաստատութենական փոխակերպումներ, հետարդիականություն, համաշխարհայնացում, ազգային պետություն:

Հասարակական փոխակերպումների ներկայիս դարաշրջանում հաստատություններին և դրանց փոփոխություններին ու փոխակերպումներին վերաբերող նոր հարցեր են առաջանում: Որտե՞ղ է ինստիտուցիոնալ (հաստատութենական) փոփոխությունների և փոխակերպումների միջև սահմանը, և ի՞նչ է տեղի ունենում այդ սահմանը հատելիս: Արդյո՞ք հաստատությունները ստեղծվում են միայն բարի նպատակներով և դրական ազդեցություն ունեն հասարակությունների գործառության մեջ, թե՞ կարող են լինել նաև այլ գործառությամբ հաստատություններ: Որո՞նք են արդյունավետ հաստատության չափանիշները, և ինչպե՞ս պահպանել հասարակական կյանքն առողջացնող և արդյունավետ գործող հաստատություններն ու հրաժարվել մյուսներից: Եվ վերջապես, հռետորական մեկ հարց. երբ համաշխարհայնացման գործընթացների և հաստատութենական փոխակերպումների հետևանքով հասարակության մակրոմակարդակում (ազգային մակարդակ) համահարթեցվում են ազգային ինքնությունները, արդյո՞ք հասարակության մետամակարդակում (համամարդկային մակարդակ) հնարավոր է լինելու պահպանել մարդկային ինքնությունը, այսինքն՝ մշակութաստեղծ, բանական և սոցիալական մարդուն: Ի դեպ, Պիտեր Բերգերը և Թոմաս Լուկմանը հենց այդպիսի մարդու ձևավորումն են համարում հաստատությունների առաջացման կարևոր շարժառիթը: Նրանք նշում են, որ հաստատությունները ստեղծվում են «բանական և սոցիալական

«Բարեփոխում» կրթամշակութային կազմակերպության նախագահ, ԵՊՀ, Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ:

մարդու» կողմից նրա մեջ առկա «կենդանականը» որոշակի սահմաններին մեջ դնելու համար [1 c. 85]: Բերգերի և Լուկմանի տեսության համաձայն՝ յուրաքանչյուր հաստատություն ունի իր պատմությունը, այսինքն՝ ստեղծվում է ժամանակի ընթացքում սերունդների կողմից: Ակնհայտ է, որ մարդու և նրա կողմից ստեղծված սոցիալական աշխարհի միջև կապը փոխադարձ է: Այդ առումով մարդկանց բարոյական նկարագիրը, նրանց հոգեկան կերտվածքը որոշակիորեն ազդում են հաստատությունների (ընտանիք, դպրոց, եկեղեցի, պետություն, ավանդույթներ, օրենսդրություն և այլն) բովանդակության վրա: Մյուս կողմից, արտադրանքն ինքը, որը տվյալ դեպքում հաստատությունն է, ազդում է արտադրողի վրա [1, c. 32-37]:

Հաստատությունների և մարդկանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապին անդրադարձել է նաև Մաքս Վեբերը: Գիտնականի կարծիքով, թեև «մարդը» ենթարկվում է գոյություն ունեցող հաստատությանը, մասնավորապես՝ «պետությանը» և «եկեղեցուն», այդուհանդերձ, այդտեղ գործում է հասարակական համաձայնության սկզբունքը: Վեբերն անդրադառնում է նաև այն հարցին, թե արդյոք հաստատությունները ստեղծվում են միայն բարի նպատակներով, թե՞ կարող են լինել նաև այլ գործառույթամբ հաստատություններ: Նա նկատում է, որ կազմակերպության կամ հաստատության նոր կանոնակարգը հազվադեպ է լինում, որ ընդունվի բոլոր մասնակիցների ինքնակամ որոշմամբ: Սովորաբար տեղի է ունենում նոր կանոնակարգերի «բռնի ներմուծում»: Ղեկավար անձինք ներկայացնում են դրանք որպես անհրաժեշտ փոփոխություններ, իսկ տվյալ հաստատությանը ենթակա անձինք հնազանդվում են այդ որոշումներին՝ դրանով արտահայտելով իրենց նվիրվածությունը տվյալ հաստատությանը: Արդյունքում՝ հաստատության նոր կանոնակարգը, համարվելով «ընդհանուր համաձայնությամբ» ընդունված կարգ, ձեռք է բերում կարևոր նշանակություն: Այնինչ, իրականում դա ոչ թե համաձայնության, այլ «լռակյաց հնազանդության» հետևանք է: Ըստ էության, Վեբերն այստեղ նշում է ժողովրդավարական համակարգի խոցելի կողմերից մեկը, որն այսօր էլ գոյություն ունի ազատական-ժողովրդավարական ազգային պետություններում: Ըստ Վեբերի՝ «հաստատություն» է այն, ինչն ընդունված է որպես նորմ, ինչպես բազմապատկման աղյուսակը, որն այլևս չի քննարկվում, այլ պարզապես օգ-

տագործվում է: Այդպես մենք օգտվում ենք տրանսպորտից՝ առանց մտածելու, թե ինչպես է գործում այդ համակարգը, օգտագործում ենք «փողը»՝ առանց խորանալու, թե ինչ երևույթ է այն որպես հաստատություն և այլն: Հաստատությունները, փաստորեն, կյանքը դարձնում են սովորույթ, երբ ապրում ես՝ կրկնելով նույն գործողությունները, այլևս չմտածելով դրանց իմաստի մասին: Մինևույն ժամանակ, այդ բանական (ռացիոնալ) ընդհանրացումների կարգը, լինի հաստատություն թե կազմակերպություն, Վեբերի կարծիքով, ներմուծվում է հասարակական կյանք մարդկանց միջոցով, որոնց նպատակները կարող են լինել տարբեր [2, c. 226-228]: Զարգացնելով Վեբերի միտքը՝ կարելի է ասել, որ, եթե տվյալ հասարակությունն ունի բարձր նպատակներ և նրանում գերակայում են բարոյաէթիկական պահանջմունքները, ապա համապատասխանաբար ձևավորվում են հասարակության վերարտադրությանը նպաստող և արդյունավետ գործառող հաստատություններ, եթե ոչ, ապա առաջանում են հաստատություններ, որոնք ապագործառական են:

Իսկ ինչպե՞ս են ձևավորվում հասարակության նպատակները: Այստեղ կարևոր դերակատարում ունի սոցիոմշակութային և բարոյաէթիկական գործոնների ազդեցությունը: Օրինակ, Վեբերը կապիտալիստական հարաբերությունների ձևավորման մեջ մեծ տեղ է հատկացնում ասկետիկ բողոքականությանը և պուրիտանիզմին: Նա գրում է. «Ամենուր, ուր հաստատվում էր պուրիտանական աշխարհայացքը, այն, տնտեսական առումով, միշտ նպաստում էր բուրժուական ռացիոնալ ապրելակերպի ամրապնդմանը, որն, իհարկե, կապիտալիզմի զարգացմանը խթանում էր ավելի, քան անգամ կապիտալի ներդրումը» [3, p. 117]: Նոր զարգացող կապիտալիստական պետություններում պուրիտանիզմը հանդիսանում էր ցովի ապրելակերպին և հարստություն կուտակելու ձգտումներին հակակշիռ ուժ: Զուգահեռ անցկացնելով Հայաստանի Հանրապետության հետ՝ տեսնում ենք, որ 1990-ական թվականների սկզբին մենք չունեինք սոցիալիզմից ազատ շուկայական հարաբերություններին կտրուկ անցում կատարելու հետևանքով հարստության անհավասար բաշխման և կուտակման գործընթացներին դիմակայելու որևէ հակակշիռ ուժ՝ ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյաէթիկական: Գաղափարական առումով ազատականությանը, թերևս, կարող էր հակակշռել ժողովրդավարությունը և ազգայնականությունը: Սակայն

ազգայնականությունը քաղաքական վերնախավի կողմից մերժվեց հիմնովին, իսկ ժողովրդավարությունը, չունենալով ոչ մի հենարան, ձեռք բերեց ձևական բնույթ:

Հաստատություններն, անշուշտ, թերի են այնպես, ինչպես անկատար է մարդը: Անտարակույս, դրանք ունեն կատարելագործման կարիք: Սակայն «փոփոխություն» դեռևս չի նշանակում «զարգացում» և «կատարելագործում»: Ազգերի ձևավորումը, որը տեղի է ունեցել հազարամյակների ընթացքում, ընդամենը կարելի է համարել մեկ քայլ մարդու կատարելագործման և մարդկայնացման ճանապարհին: Բայց հարկ է նկատել, որ թեկուզ այդ մեկ քայլը, որն է մշակութային ազգերի ձևավորումը, հնարավոր է դարձել և տեղի է ունեցել «պետություն» հաստատության գործառության շնորհիվ: Պետությունների հոգևոր և ֆիզիկական տարածության մեջ է, որ մյուս հաստատությունները՝ ընտանիք, եկեղեցի, դպրոց, ավանդույթներ, սովորույթներ, իրավական համակարգ և այլն, կարողացել են իրականացնել իրենց գործառությունը:

«Պետություն» հաստատության զարգացման պատմությունը համընթաց է մարդու հոգևոր կատարելագործմանը: Եթե առաջնորդվենք մարդկության զարգացման «ցեղ-էթնոս-ազգ-քաղաքական ազգ» փուլերով, ապա կտեսնենք, որ հոգևոր կատարելագործման առումով բարձրակետը դեռևս մնում է «ազգը»: Աշխարհի ներկայիս պատկերը՝ պատերազմներ, ահաբեկչություններ, աղքատության մեծ ծավալներ, խոսում է այն մասին, որ մարդու և հասարակության կատարելագործման մեջ քաղաքական-քաղաքացիական գործոնը գրեթե դեր չի կատարել: Այն չի բարձրացրել մարդու հոգևոր մակարդակը և չի նպաստել նրա մտավոր ու հոգևոր կատարելագործմանը: Եվ ուրեմն, կարելի է եզրակացնել, որ մարդը հոգեպես հղկվում է միայն ստեղծագործական աշխատանքի, ստեղծագործական ապրումի միջոցով, երբ կա հոգեկան աշխատանք, ոգեշնչում և կապ բարձրագույն ոգու կամ Աստծո հետ: Այդ ամենը զուգորդվում է գեղեցիկի զգացման և ընկալման հետ: Պատահական չէ, որ բարձր ճաշակի առկայությունն ազգի, մշակույթի և քաղաքակրթության կարևոր ցուցիչն է:

21-րդ դարի հարացույցում այդ ամենն այլևս տեղ չունի: Ժամանակակից աշխարհն ակնհայտորեն ընթանում է հակամշակութային

ճանապարհով: Այն, թվում է, դուրս է եկել հավասարակշռության ծիրից և փորձում է համակարգել անհամակարգելին՝ քառսը: Համաշխարհային հասարակությունը և իր օրակարգն աշխարհին թելադրող արևմտյան քաղաքակրթությունը, Պյոտր Շտոմպկայի բնութագրմամբ՝ գտնվում է հասարակական վնասվածքի (տրավմայի) վիճակում: Հասկանալի է, որ խոսքը հասարակության հոգեկան վնասվածքի մասին է: Փորձենք հասկանալ հասարակական այդ հիվանդության առաջացման պատճառները հաստատութենական փոփոխությունների և փոխակերպումների համատեքստում:

Մինչ հետարդիականության (հետմոդեռնի) դարաշրջանը մարդն ապրել է տարածության և ժամանակի մեջ: Եթե «տարածությունը» տունն է, ծննդավայրը, հայրենիքը, ապա «ժամանակը» գոյություն ունի անցյալի, ներկայի և ապագայի շարունակական կապի և միասնության շնորհիվ: Հենց «տարածություն» և «ժամանակ» երևույթների հիման վրա գոյություն ունի ազգություններից և էթնիկ հանրույթներից բաղկացած մարդկության պատմությունը: Հաստատությունները նույնպես կարող են գոյություն ունենալ միայն «տարածության» և «ժամանակի» մեջ: Սակայն արդիականության (մոդեռնի) դարաշրջանից սկսած, երբ հաստատութենական փոփոխությունները սկսեցին համարվել հասարակական զարգացման օրինաչափություն, մարդկությունը ոտք դրեց մի ճանապարհ, որի ավարտն արդեն գտնվում է ժամանակի և տարածության սահմանումներից դուրս: Այդ ավարտը համընկնում է ներկայիս հետարդիական, հետարդյունաբերական և համաշխարհայնացման դարաշրջանին: Դարաշրջան, որը շարունակում է ինքն իրեն լցնել ունայնությամբ՝ փորձելով մարդուն զրկել հիշողությունից (անցյալ) և երազելու ունակությունից (ապագա): Սակայն «ժամանակն» ունի իր բնականոն ճանապարհը, որը պետք է անցնի. այն չի կարող կուտակվել «ներկայում», և դա է պատճառը, որ այն երկու կողմից՝ անցյալից և ապագայից արգելափակված, կարծես դուրս է եկել ավերից և հունը կորցրած հոսում է:

Ներկայիս հետարդիականության դարաշրջանի երկրորդ մտայնությունը մարդուն կտրելն է տարածությունից: Դա դրսևորվում է զանգվածային բնույթ կրող միգրացիայի և «հայրենիք» գաղափարի ձևախեղման միջոցով: Հայրենիքն այլևս չունի միանշանակ իմաստ: Այսօր հա-

ճախ հայրենիք է համարվում ընդամենը ծննդավայրը կամ պարզապես բնակության վայրը: Պատմությունը, թերևս, տարիներ անց ներկայիս ժամանակաշրջանը կանվանի ևս մեկ «Մեծ միգրացիայի» դարաշրջան:

Բանն այն է, սակայն, որ տարածությունից և ժամանակից դուրս չի կարող ստեղծվել մշակույթ: Այն ստեղծվում է որոշակի աշխարհագրական տարածքում, և ինչպես նշանավոր նկարիչ Գեորգի Յակուլովն է նկատում, նաև՝ արևի ճառագայթների որոշակի անկյան ներքո: Հետևաբար, այն, որ հետարդիականության հարացույցի մեջ ժամանակի և տարածության գաղափարները տեղ չունեն, բացատրվում է մշակույթի և, ուրեմն, ազգերի գոյության ի սկզբանե մերժմամբ: Դրանով է բացատրվում նաև հետարդիական հասարակության կողմից հաստատությունների վերարտադրությունը մերժելու և հաստատութենական փոփոխությունները խրախուսելու մտայնությունը: Պետք է նշել, որ ներկան անցյալին կամ հին և նոր քաղաքակրթությունները միմյանց հակադրելու միտումը նկատելի է դեռևս «արդիականության» («մոդեռնի») դարաշրջանի աշխարհայեցողության և հատկապես նիհիլիզմի փիլիսոփայության մեջ: Ազատական գաղափարաբանությունը՝ որպես արդիականության ուղենիշ և գլխավոր առանձնահատկություն, իր բուն էությամբ նույնպես հիմնված է անցյալի բեռից ազատվելու հայեցողության վրա:

Պետք է նկատել, որ արևմտյան մեզ հայտնի քաղաքակրթության ողջ պատմության ընթացքում մարդկային հարաբերությունների և կեցության առանցքում եղել են ոչ թե համերաշխությունը և ներդաշնակությունը, այլ հակադրությունը և մրցակցությունը: Փիլիսոփայական միտքը հիմնականում զարգացել է նյութականի և հոգևորի միջև գերակայության և սկզբնաղբյուրի (սուբստանտի) որոնման ուղղությամբ: Բնականաբար, նյութի և գաղափարի միջև առաջնահերթության խնդիրը մինչ օրս լուծված չէ: Ինչպես նաև որոշված չէ մասի և ամբողջի միջև գերակայության հարցը: Սոցիալիստների համար, օրինակ, կարևորը համայնքն է, այսինքն՝ ամբողջությունը, իսկ ազատականների (լիբերալների) համար՝ անհատը, այսինքն՝ մասը: Անհատ և հասարակություն հարաբերությունները միշտ կառուցված են եղել ոչ թե անհատի և հասարակության ներդաշնակության, այլ դրանց հակադրության և կողմերից որևէ մեկի գերակայության սկզբունքով: Ավելին, «հոգևոր մարդը» մշտապես հակադրվել է «կենսաբանական մարդուն», «անհա-

տականությունը՝ «սոցիալական մարդուն», ինչպես նաև «մարդը» հակադրվել է Աստծուն և բնությանը: Եվ քանի որ հասարակության մեջ «գերակայության» հաստատման ընթացքն իր բնույթով մրցակցային է (միշտ մեկը պարտվում է՝ դիրքերը զիջելով մյուսին), ապա ակնհայտ է, որ, երբ հասարակության աշխարհայեցողության մեջ «գերակայության» փոփոխություն է տեղի ունենում, ապա նոր «գերակայության» հաստատման համար առաջանում է հաստատութենական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Փաստորեն, հաստատութենական փոփոխությունները պայմանավորված են տվյալ դարաշրջանում ընդունելի գաղափարի գերակայության հաստատման անհրաժեշտությամբ: Այդպես, տարբեր դարաշրջանների հարացույցերում մենք տեսնում ենք, որ կամ գերակայում է նյութականը, կամ՝ գաղափարականը, հոգևորը, կամ գերակա է համարվում հասարակական շահը, կամ անհատական շահը, կամ ազգայինը, կամ համաշխարհայինը և այլն: Այդ նույն՝ առաջնայնության սկզբունքով միջնադարի գաղափարաբանության առանցքում դրված էր մարդու նկատմամբ Աստծո գերակայության գաղափարը, իսկ Վերածննդի դարաշրջանից մինչև ներկա ժամանակաշրջանը՝ Աստծո նկատմամբ մարդու գերիշխանության գաղափարախոսությունը՝ հումանիզմը: Հաստատութենական փոփոխությունները, ինչպես արդեն նշել ենք, բխում են տվյալ գերակայությունը հաստատելու անհրաժեշտությունից:

Մինչդեռ, հոգեկանի և մարմնականի ներդաշնակությանը և, ընդհանրապես, ամբողջականությանը հասնելու «մարդու» ձգտումը, որը քրիստոնեական դավանանքի մեջ արտահայտվում է սուրբ երրորդության կամ եռամիասնության գաղափարի միջոցով, երբևիցե չի եղել որևէ հասարակության մեծամասնության աշխարհայացք և որևէ դարաշրջանի հարացույց: Այն անգամ քրիստոնեության պետական կրոն լինելու պարագային չի դարձել իշխող գաղափարախոսություն և հասարակական գիտակցության ձևավորման մեջ չի ունեցել ազդեցություն: Այն չի հաստատութենացվել: Քրիստոնեական դավանանքի երկրներում եռամիասնության գաղափարը գոյություն ունի ընդամենը որպես կրոնական տեսության դրույթ, որը, սակայն, որևէ գործառույթ չունի: Այն դեպքում, երբ Աստծո նկատմամբ մարդու գերակայության գաղափարը, արտահայտվելով Վերածննդի հումանիզմի գաղափարախոսու-

թյան մեջ, այնուհետև զարգանալով լուսավորականության փիլիսոփայության և ազատական գաղափարախոսության մեջ, մինչ այսօր շարունակում է որոշիչ դերակատարում ունենալ ազգային պետությունների հասարակական և քաղաքական կյանքի կարգավորման գործում: Մարդու՝ Աստծո նկատմամբ գերակայության գաղափարը կամ «հումանիզմի» գաղափարը անվարան կարելի է համարել Վերածննդի դարաշրջանի հարացույցը: Այդ դարաշրջանից եկող մարդակենտրոն աշխարհայեցողությունը, որն իր դրսևորման բարձրակետին հասնում է 18-րդ դարի լուսավորականության գաղափարների մեջ, առայսօր հանդիսանում է ժամանակակից ազգային պետությունների զարգացման ուղեցույցը: Իսկ դա հոգևորի և նյութականի, մարդու և Աստծո, անհատի և հասարակության, քաղաքացիականի և ազգայինի փոխհարաբերություններում առաջացնում է անհաղթահարելի հակասություններ:

Ազատականության միահեծան իշխանության պայմաններում «հաստատութենական փոփոխություններ» երևույթը վերածվել է հաստատութենական փոխակերպումների, և հաստատությունները, որոնք կոչված են եղել ապահովելու հասարակական առողջ հարաբերությունները և ստեղծելու համընդհանուր բարօրության միջավայր, փլուզվում են՝ առաջացնելով քաոսի և անարխիայի համար նպաստավոր պայմաններ: «Աշխարհն այլևս ամբողջական չէ, քանի որ կորցրել է հավասարակշռությունն իր առանցքի շուրջ», - գրում է Ժան Բոդրիարը [4]: Բոդրիարին, այդուհանդերձ, կարելի է հակադարձել հոետորական հարցով. իսկ ե՞րբ է աշխարհը եղել ամբողջական: Ցավոք, ամբողջականության գաղափարը, ինչպես արդեն նշել ենք, որևէ դարաշրջանի հարացույց չենք կարող համարել: Այն ոչ մի հասարակության մեջ չի եղել համընդհանուր ընդունված գաղափար և չի դարձել գաղափարախոսություն՝ ամրապնդվելով հաստատությունների մեջ:

Հաստատությունները հիմնված են կայունության և պահպանողականության վրա, և դա այն հենման կետն է և, միևնույն ժամանակ, շարժիչ ուժը, որը մղում է հաստատություններին առաջ, որպեսզի նրանց միջոցով անցյալը շարունակվի ներկայի մեջ և նախագծվի ապագայի ծրագրերում: Բայց որպեսզի այդ անցյալը հաստատությունների միջոցով շարունակվի, պետք է նախևառաջ պահպանվի սովյալ հաստատության ինքնությունը: Եվ դա, թերևս, հաստատութենա-

կան փոփոխությունների կարևոր առանձնահատկություններից մեկն է: Պետք է նշել, որ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հասարակական համակարգի ներսում և որոնց հետևանքով կարող են վերանալ հաստատություններ և ժամանակի ընթացքում ստեղծվել նորերը, արդեն ոչ թե հաստատութենական փոփոխություններ են, այլ հաստատութենական փոխակերպումներ և սոցիալական փոփոխություններ: Բացի այդ, հաստատությունն ինքը բաղկացած է շերտերից: Ամենախորքային շերտն այն բջիջն է, որը չպետք է ենթակա լինի փոփոխության և, բնականաբար, այն պետք է գոյություն ունենա այնքան, որքան գոյություն ունի տվյալ հաստատությունը: Հաստատությունը համակարգ է: Իսկ համակարգի գլխավոր առանձնահատկություններն են, ինչպես հայտնի է, գործառությունը և սահմանը, որով նա առանձնանում է դրսի միջավայրից: Ի տարբերություն բնության՝ հասարակական համակարգի մեջ դեռևս անհայտ է, թե որն է նրա ձգողականության առանցքը: Երբ հասարակական համակարգը համեմատում ենք արեգակնային համակարգի հետ, տեսնում ենք, որ Արեգակը՝ որպես առանցք, ապահովում է ամբողջ համակարգի հավասարակշռությունը և կայունությունը: Տարին, որի ընթացքում Երկիր մոլորակը մեկ պտույտ է կատարում Արեգակի շուրջը, անփոփոխ է, սակայն այդ ընթացքում փոխվում են եղանակները, օրերը և այլն: Գետի ջուրն անդադար հոսում և փոխվում է, սակայն գետի հունը մնում է անփոփոխ: Հենց այդպես, իհարկե, պետք է անփոփոխ մնա նաև հաստատության ինքնությունը: Մակայն հետարդիականության ներկա ժամանակաշրջանում ակնհայտ է, որ հաստատութենական փոփոխությունները հաճախ հատում են իրենց ինքնության սահմանագիծը: Ձևակերպված (ֆորմալ) հաստատությունների փոփոխության միջոցով՝ հիմնականում օրենսդրության, աստիճանաբար փոխվում են նաև չձևակերպված (ոչ ֆորմալ) հաստատությունները՝ ավանդույթները, սովորույթները, բարոյական նորմերը: «Ընտանիք» հաստատության փոխակերպմամբ քանդվում են նաև «պետություն» հաստատության հիմքերը: Ազգային մշակույթների համահարթեցմամբ վերանալու վտանգի առջև է կանգնում մշակույթը և, ուրեմն, նաև այն ստեղծող մարդը: Արվեստին գալիս է փոխարինելու հակաարվեստը: Ի դեպ, արվեստն այն միակ բնագավառն է, որտեղ իրականացել է մարդու կատարելության և ամբողջության հասնելու

ձգտումը: Արվեստների միջոցով ստեղծվել է բարձր մշակույթը և ձևավորվել են ազգերը: Այդ առումով, թերևս, հետարդիականության դարաշրջանը մարդու մարդկայնացման ճանապարհից կարելի է նահանջ համարել: Պետք է նկատել, որ անցումային հասարակությանը բնորոշ հասարակական (սոցիալական) փոփոխությունները հիմնականում իրագործվում են հենց հաստատութենական փոփոխությունների միջոցով: Պյոտր Շտոմպկան նշում է, որ դրանք «երբեմն ունենում են մասնավոր, սահմանափակ բնույթ և չեն ընդգրկում համակարգի մյուս օղակները, այդ դեպքում համակարգի ամբողջականությունը մնում է անխափան: Մյուս դեպքերում, երբ փոփոխությունները ներգրավում են համակարգի բոլոր կամ հիմնական բաղադրիչները, տեղի է ունենում արդեն համակարգի փոփոխություն, և ձևավորվում է սկզբունքորեն նոր համակարգ: Դրա վառ օրինակը սոցիալական հեղափոխություններն են: Մահմանն այդ երկու դեպքերի միջև հստակ չէ, քանի որ համակարգի ներսում տեղի ունեցած հաստատութենական փոփոխությունները կուտակվելով՝ ի վերջո վերաճում են հենց համակարգի փոփոխության: Շտոմպկայի համոզմամբ՝ այնպես, ինչպես շենքի կարկասը փոխելով, անխուսափելիորեն փոխվում է ամբողջ շենքը, այդպես էլ հասարակական կառուցվածքի փոփոխությունը հանգեցնում է ամբողջ համակարգի ձևափոխմանը: Ավելին, քանի որ համակարգային փոփոխությունը վերաբերում է հասարակության բոլոր մակարդակներին՝ միկրո-, մեզո-, մակրո- և մետա-, ապա գլխավոր հարցն այն է, թե ինչպես են տարբեր մակարդակներում տեղի ունեցող հաստատութենական փոփոխություններն ազդում մեկը մյուսին [5, շ. 17-19]: Շտոմպկայի բարձրացրած հարցն այսօր դարձել է ավելի արդիական: Զարգացնելով այն՝ կարելի է տալ հաջորդ, արդեն հոետորական հարցը. երբ ավանդական հաստատությունների թուլացման հետևանքով հասարակության մակրոմակարդակում (ազգային մակարդակ) խաթարվում է մշակութային ինքնությունների վերարտադրությունը, արդյո՞ք հասարակության մետամակարդակում (համամարդկային մակարդակ) հնարավոր է լինելու պահպանել մարդկային ինքնությունը:

Հունվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Бергер П., Лукман Т.*, Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., изд. Медиум, 1995.
2. *Вебер М.*, Избранные произведения, М., Прогресс, 1993.
3. *Weber M.*, The Protestant Ethic and the Spirit of Capitalism, Routledge, London, 2001.
4. *Бодрияр Ж.*, Симулакры и симуляция. О Нигилизме / Электронная библиотека Royallib. Ru
5. *Штомпка П.*, Социология социальных изменений, М., Аспект-Пресс, 1996.

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Կարինե Հակոբյան

Ամփոփոգիր

Հաստատութենական (ինստիտուցիոնալ) փոփոխությունները պայմանավորված են տվյալ դարաշրջանի գաղափարական գերակայության հաստատման անհրաժեշտությամբ: Ներկայիս հետարդիականության դարաշրջանը հերքում է արդիականության մարդակենտրոն գաղափարաբանությունը, և ուրեմն, գաղափարական նոր գերակայություն հաստատելու անհրաժեշտությունը կա: Այն, որ հետարդիականության հարացույցի մեջ ժամանակի և տարածության գաղափարները տեղ չունեն, բացատրվում է մշակույթի, ուրեմն նաև ազգերի գոյության ի սկզբանե մերժմամբ: Դրանով է բացատրվում նաև այն, որ հետարդիական հասարակության մտայնությունը ոչ թե հաստատությունների վերարտադրությունը և զարգացումն է, այլ հաստատութենական փոփոխություններն ու փոխակերպումները: Երբ հետարդիական նիհիլիզմի և համաշխարհայնացման գործընթացների հետևանքով հասարակության մակրոմակարդակում (ազգային մակարդակ) կազմալուծվում են ազգային պետությունները խաթարելով մշակութային ինքնությունների վերարտադրությունը, հասարակության մետամակարդակում (համամարդկային մակարդակ) առաջանում է մարդկային ինքնությունը պահպանելու խնդիրը:

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ТРАНСФОРМАЦИИ В ПЕРИОД ПОСТМОДЕРНА

Карине Акопян

Резюме

Институциональные изменения обусловлены необходимостью установления идеологической доминации данной эпохи. Нынешняя эпоха постмодернизма отвергает антропоцентрическую идеологию модернизма, следовательно, возникает необходимость установления новых идеологических приоритетов. То, что в постмодернистскую парадигму не включены идеи времени и пространства, объясняется изначальным неприятием существования культуры, а значит и наций. Этим же объясняется, что интенция постмодернистского общества направлена не на воспроизводство и развитие институций, а на институциональные изменения и трансформации. Когда вследствие постмодернистского нигилизма и глобализационных процессов на макроуровне социума (национальный уровень) распадаются национальные государства, препятствуя воспроизводству культурных идентичностей, то на метауровне социума (общечеловеческий уровень) возникает проблема сохранения человеческой идентичности.

INSTITUTIONAL TRANSFORMATIONS IN POST-MODERN ERA

Karine Hakobyan

Resume

Institutional transformations occur due to the need of establishing ideological dominance. The current Postmodern era denies the human-centered ideology of Modernity and hence needs to establish a new ideological dominance. The fact that in Postmodern paradigm there is no room for ideas of time and space, is explained by primary denial of culture and hence, existence of nations. This also explains that postmodern society's fallacy is not the reproduction and development institutions, but institutional changes and transformations. When due to postmodern nihilism and globalization processes the nation states disintegrate at societal level (national level) and reproduction of cultural identities is hindered, the issue of preserving human identity emerges at the society's meta-level (the panhuman level).

**ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄԸ
ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻՑ**

Աշոտ Մարկոսյան՝ Գրիգոր Կուրդինյան՝

Բանալի բառեր՝ օժանդակ կառավարչական ծառայություններ, մասնավոր հատված, հանրային բարիք, պետական կառավարման մարմիններ, այլընտրանքային ծառայություններ, ծառայությունների խոշորացում, կենտրոնացում, կառավարչական ծախսերի նվազեցում:

Տնտեսության ամբողջական պատկերը ստանալու համար ամբողջ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), գործունեությունը վերահսկելու հատկանիշից ելնելով, կարելի է ներկայացնել հետևյալ 3 մասերով՝ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող: «Պետական կառավարման մարմինների» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն դասվում է պետական մասին, «Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» և «Տնային տնտեսությունների» կառուցվածքային հատվածների ՀՆԱ-ն՝ ազգային մասնավոր մասին: «Ոչ ֆինանսական կազմակերպությունների» և «Ֆինանսական կազմակերպությունների» կառուցվածքային հատվածների ՀՆԱ-ն բաշխվում է դրանց ենթահատվածներին համապատասխան:

Հանրապետության ՀՆԱ (հիմնական գներով)՝ ըստ կառուցվածքային հատվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2000-2014թթ. միայն «Պետական կառավարման մարմինների» կառուցվածքային հատվածն է, որ ըստ վերահսկողության հատկանիշի բաշխվածության ոչ մի փոփոխություն չի կրել՝ շարունակաբար 100%-ով մնալով պետական, մինչդեռ մնացած կառուցվածքային հատվածներում նկատելիորեն նվազել է պետական բաժինը: Այսպես, եթե 2000թ. ոչ ֆինանսական կազմա-

¹ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

² ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ:

կերպությունների (կորպորացիաների) ՀՆԱ (այն կազմել է ՀՀ ՀՆԱ 66.5%-ը) 19.5%-ը բաժին է հասել պետական մասին, 64.0%-ը՝ ազգային մասնավորին, իսկ 16.5%-ն օտարերկրյա վերահսկողությանը¹, ապա այդ ցուցանիշները 2014թ. կազմել են համապատասխանաբար՝ 8.4%, 59.8%, 31.8%, իսկ ՀՆԱ աճը 2014թ. 2000թ. համեմատ կազմել է 346.9% (ամբողջ տնտեսության ՀՆԱ-ն այդ նույն ժամանակահատվածում ավելացել է 329.0%-ով), մինչդեռ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն 2014թ. 2000թ. համեմատ ավելացել է 581.5%-ով (2000թ. 71.5 մլրդ դրամից 2014թ. հասնելով 415.8 մլրդ դրամի), ընդհանուր ՀՆԱ կազմում 2000թ. 7.5%-ից 2014թ. հասնելով 9.5%-ի (2006թ.՝ 6.9%, 2010թ.՝ 9.2%, 2012թ.՝ 8.5%)²:

Այսպիսով, ՀՀ տնտեսության կառուցվածքային մյուս հատվածների համեմատությամբ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն տնտեսության ՀՆԱ-ի նկատմամբ 2000-2014թթ. ունեցել է 176.8% առաջանցիկ աճ (այսինքն՝ տնտեսության ՀՆԱ 1% աճին բաժին է ընկել 1.77%-ով աճ), իսկ «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի համեմատ այդ առաջանցիկ աճը կազմել է 167.7%, ինչն էլ հանգեցրել է կառուցվածքային այդ հատվածի տեսակարար կշռի ավելացմանը 2000-2014թթ. 2.0 տոկոսային կետով:

Տնտեսության կառուցվածքային հատվածների նման զարգացումներն անցանկալի են (առավել ևս այդ միտումների պահպանումն առաջիկայում), քանի որ, ինչպես հայտնի է, պետական կառավարման մարմիններում նյութական բարիքներ չեն ստեղծվում, այս ոլորտում մատուցվում են միայն հանրային նշանակություն ունեցող ծառայություններ, և, ըստ էության, ի տարբերություն, օրինակ «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի, դասական տնտեսագիտության տեսանկյունից, բարիքներ ստեղծելու փոխարեն այստեղ այդ բարիքները պարզապես սպառվում են:

Հետևաբար, առաջացել է անհրաժեշտություն «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածում իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք կապահովեն.

¹ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 87-89:

² Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 119-129:

ա) առաջիկայում տնտեսության և նրա մյուս կառուցվածքային հատվածների (և հատկապես «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի) համեմատությամբ աճի ավելի ցածր տեմպեր,

բ) վերը նշված նպատակին հասնելու համար «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ծախսերի նվազեցում, մրցակցային և այլընտրանքային աղբյուրներից դրանց իրականացում՝ ոլորտի ծառայությունների օպտիմալացման և մասնավոր հատվածի ներուժի լայն օգտագործմամբ, առանձնապես օժանդակ կառավարչական ծառայությունների ձեռքբերման գործում:

Ներկայում խիստ արդիական են դարձել ՀՀ-ում մասնավոր հատվածի ներուժի օգտագործումը և համագործակցությունը պետական հատվածի հետ, հատկապես պետական կառավարման ապարատի օպտիմալացման ուսումնասիրությունը, իրավիճակի վերլուծություն իրականացնելու և առաջարկությունների ներկայացումը: Առավել ևս, որ այդ նպատակով ՀՀ կառավարությունում ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի ղեկավարը ՀՀ փոխվարչապետն է: Այդ խմբի աշխատանքները համակարգված իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պետք է ներկայացնի միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ առաջարկություններ ՀՀ-ին համանման երկրներում¹ 1-2 տիպային նախարարությունների կողմից մասնավոր հատվածից կամ այլ աղբյուրներից գնվող ծառայությունների տեսակի և ծավալի վերաբերյալ (*outsourcing*),
- բոլոր պետական մարմինները, յուրաքանչյուրն՝ իր գործառույթների շրջանակներում, պետք է ներկայացնեն միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ առաջարկություններ համա-

¹ Վերլուծության՝ համանման (համեմատության համար համադրելի) երկրների շարքում հնարավոր է դիտարկել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խումբն ըստ Համաշխարհային բանկի տարածաշրջանային դասակարգման՝ հիմնվելով բնակչության ընդհանուր թվաքանակի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ (*PPP*, ընթացիկ միջազգային դոլար) ցուցանիշների վրա: Այդ երկրներն են Վրաստանը, Բոսնիա-Չերցեգովինան, Մակեդոնիան, Սերբիան, Ռումինիան, Լատվիան, Հունգարիան, Լեհաստանը, Հունաստանը, Լիտվան, Սլովակիան, Պորտուգալիան, Սլովենիան, Չեխիան:

նման երկրներում համադրելի գործընկեր նախարարության կողմից մասնավոր հատվածից կամ այլ աղբյուրներից գնվող ծառայությունների տեսակի և ծավալի վերաբերյալ,

- ՀՀ արդարադատության նախարարությունը՝ հաշվի առնելով նոր սահմանադրական լուծումները, պետք է ուսումնասիրի ՀՀ ներկա կառավարության որոշումների թվաքանակի կրճատման հնարավորությունն՝ ի հաշիվ գերատեսչական իրավական ակտերի ընդունման,
- բոլոր պետական մարմինները, յուրաքանչյուրն՝ իր մասով, պետք է 10 խոշորագույն ծախսային ծրագրերի մասով, հաշվի առնելով նոր սահմանադրական լուծումները, ուսումնասիրի ՀՀ կառավարության որոշումների թվաքանակի կրճատման հնարավորությունն՝ ի հաշիվ գերատեսչական իրավական ակտերի ընդունման:

Պետական կառավարման ոլորտում օժանդակ ծառայությունների մատուցման աուօսոբսինգի վերաբերյալ միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ աուօսոբսինգի մեխանիզմն ակտիվորեն օգտագործվում է հանրային հատվածում: Արտասահմանյան երկրներում, պետական կառավարչական համակարգի աուօսոբսինգի ակտիվ զարգացման գործընթացը սկսվել է դեռևս 1990-ական թթ.: Հիմնականում աուօսոբսինգի զարգացումը կապված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների, այսպես կոչված նոր հանրային կառավարման (*New Public Management*) հասկացության զարգացման հետ: Աուօսոբսինգի ակտիվ զարգացումը համահունչ է «նոր հանրային կառավարման» գրեթե բոլոր հիմնարար սկզբունքներին (հանրային կառավարման համակարգում շուկայական մեխանիզմների ներդրում, հանրային կառավարման գործունեության նկատմամբ կառավարման արդյունավետություն, թափանցիկության պահանջների ավելացում, կառավարման ապակենտրոնացում), այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ պետական գործառույթների որոշակի մասի փոխանցումը աուօսոբսինգի դարձել է հանրային կառավարման հատվածի բարեփոխումների առանցքային բաղադրիչներից, որոնք իրականացվել են երկրների մեծ մասում դեռևս 1990-2010թթ. և այժմ էլ շարունակվում են:

Հանրային բարիքը (*public good*) հանրային կամ պետական հատվածի այն ապրանքը կամ ծառայությունն է, որի տրամադրմամբ որևէ անհատի դրանք դառնում են մատչելի, իսկ մյուսին կամ մյուսներին այն տրվում է առանց լրացուցիչ ծախսերի, որն էլ դրանք տարբերում է մասնավոր բարիքից, որի համար սպառումը որևէ անհատի կողմից բացառում է այդ նույն միավոր բարիքի սպառումը մյուսի կամ մյուսների կողմից: Այդպիսով, կարելի է ասել, որ հանրային բարիքների համար բնորոշ է ոչ մրցակցային սպառումը (*nonrival consumption*), այսինքն՝ որևէ անհատի կողմից բարիքի սպառումը չի նվազեցնում դրա մատչելիությունը մյուսների համար: Ծայրահեղ կամ «բևեռային» դեպք է եղել «զուտ» հանրային բարիքի սահմանումը Փոլ Սամաելսոնի կողմից, որը սահմանել է, որ այդպիսի բարիքը պետք է.

1. սպառման տեսանկյունից լինի ոչ մրցակցային,
2. ունենա ոչ բացառիկության հատկանիշ (*non-excludability*), այսինքն, եթե բարիքն արտադրվել է, ապա արտադրողը չի կարող խոչընդոտել դրա սպառումը մեկ ուրիշի կողմից:

Վերջին պայմանը բացառում է շուկայի գործառնությունը, քանի որ վաճառողին չի երաշխավորվում, որ բարիքը կունենա միայն նա, ով վճարել է դրա համար: Քանի որ բարիքը կարելի է ստանալ չվճարելով դրա համար, ուստի ոչ ոք չի ցանկանա վճարել: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ եթե բացառումը հնարավոր է, ապա բարիքը կարող է մնալ հանրային նույնիսկ այն դեպքում, երբ այն առաջարկվում է շուկայում: Երբ հնարավոր է բարիքի բացառումը կամ սպառումը, այն բացարձակ ոչ մրցութային է և ունի խառը (կամ ոչ զուտ հանրային) բնույթ, ինչը այնպիսի երևույթ է, որ հանդիպում է ավելի հաճախ, քան զուտ հանրային բարիքը:

Երբ սպառումը մրցակցային չէ, Պարետոյի սկզբունքի տեսանկյունից ապրանքի կամ ծառայության գնի նշանակումն անարդյունավետ է, քանի որ սպառման լրացուցիչ միավորի ավելացումը սպառողին օգուտ է բերում առանց որևէ ծախս կատարելու, այն դեպքում, երբ գնի նշանակումը կրճատում է սպառումը՝ առաջ բերելով բավարարվածության կամ օգտակարության զուտ կորուստ: Ասվածից հետևում է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ հնարավոր է հանրային բարիքի առաջարկը շուկայի մի-

ջոցով, դա չի կարող հանգեցնել արտադրության լավագույն կամ օպտիմալ մակարդակի արտադրության ձեռքբերումների ապահովման: Ինչպես արդեն ասվեց, ոչ բացառիկության դեպքում շուկան ընդհանրապես չի կարող աշխատել:

Հանրային բարիքի առաջարկը կոլեկտիվ ընտրության առարկա է: Սովորաբար ենթադրվում է, որ հանրային բարիքները մատակարարվում են պետության կողմից և վճարվում են պարտադիր հարկագանձման հաշվին: Մեկ ուրիշ այլընտրանք է որոշակի համագործակցություն իրականացնող մարդկանց կամավոր համաձայնությունն ապրանքի մատակարարման և վճարման վերաբերյալ: Այդ տարբերակի դժվարությունն այն է, որ անհատները կարող են թաքցնել ապրանքի իրենց իրական գնահատականը՝ նպատակ ունենալով շեղվել վճարումից, այսինքն՝ նրանք կարող են ձգտել «երթնեկել առանց տոմսի»: Հանրային բարիքի ներկայացման հիմնախնդիրը կամավոր համաձայնության արդյունքում վերլուծվում է կամավոր փոխանակության մոդելում: Հանրային բարիքի նկատմամբ ընդհանուր պահանջարկը կարող է գնահատվել գումարելով հասարակության բոլոր անդամների անհատական պահանջարկները: Սակայն զուտ բարիքների շուկայի պահանջարկի կորը ստացվում է անհատական կորերի հորիզոնական գումարմամբ (այսինքն՝ յուրաքանչյուր գնի համար գումարվում են յուրաքանչյուր անհատի պահանջարկի ծավալները), ապա հանրային բարիքի համար ընդհանուր պահանջարկի կորը ստացվում է անհատական կորերի ուղղահայաց գումարման միջոցով¹:

ՏՀԶԿ անդամ երկրներից աութորսինգի զարգացման հիմնական առաջատարներն են անգլոսաքսոնական երկրները (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա), սկանդինավյան երկրները (Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա) և Հեռավոր Արևելքի երկրները (Սինգապուր, Հոնկոնգ, Հարավային Կորեա): ՏՀԶԿ-ն պարբերաբար իրականացնում է պետական հատվածի աութորսինգի ընդհանուր ծավալների գնահատում, ընդ որում՝ կիրառվում է աութորսինգի սահմանման ընդլայնված մեթոդիկան՝ որպես պետական հատվածի կողմից ծառայությունների և ապրանքների ընդհանուր ծավալի ձեռքբերում

¹Словарь современной экономической теории Макмиллана. Перевод с английского, М., ИНФРА-М., 2013, с 409-410.

(ներառյալ բյուջետային համակարգի բոլոր մակարդակները) ոչ պետական հատվածից: Համաձայն ՏՀԶԿ գնահատականի, նշված մեթոդաբանությամբ 2009թ. ՏՀԶԿ անդամ երկրների պետական հատվածում իրականացվող աութօրսինգի միջին մեծությունը կազմել է ՀՆԱ մոտ 10%-ը: Միաժամանակ, աութօրսինգի մասնաբաժինը տարբեր է ՏՀԶԿ անդամ երկրներում՝ Մեքսիկայում ՀՆԱ 2.7 %-ից մինչև Նիդերլանդներում 19.4%: 2000-2009թթ. ՀՆԱ-ում աութօրսինգի մասնաբաժինը ՏՀԶԿ անդամ երկրներում աճել է տարեկան միջին հաշվով 1.5%-ով: Առավելագույն աճը նկատվել է Նիդերլանդներում և Ֆրանսիայում: Փորձագետների կարծիքով՝ պետական մարմիններին տրամադրվող աութօրսինգի գործառույթները կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խումբն ընդգրկում է սպասարկման գործառույթները, օրինակ՝ տարածքի մաքրման աշխատանքներ, աղբահանություն, հասարակական սնունդ, պահպանության ծառայություններ: Այս խմբի գործառույթները չեն մտնում կառավարման մարմինների գործունեության խնդիրների և առաքելությունների մեջ: Նշված գործառույթների իրականացումը հեշտ է ստանդարտացվում և չի պահանջում կատարողների կրթական և որակական մակարդակի բարձր չափանիշներ: Որպես կանոն, այս խմբի գործառույթները կարելի է հեշտությամբ փոխանցել աութօրսինգին:

Երկրորդ խմբի գործառույթները ներառում են ապահովման գործառույթներ, որոնք պահանջում են կատարողների բավականաչափ բարձր մասնագիտական որակավորում: Այս խմբին են վերաբերում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսների և հաշվապահության, անձնակազմի կառավարման, իրավաբանական աջակցության, փաստաթղթաշրջանառության հետ կապված գործառնական գործառույթները: Վերջին 20 տարիներին պետական հատվածում աութօրսինգի կիրառումը կապված է առաջին հերթին հենց տվյալ խմբի գործառույթների հետ: Երրորդ խումբը ներառում է պետական կառավարման հատվածի առանցքային գործառույթների աութօրսինգի իրականացում: Տվյալ խմբի գործառույթների աութօրսինգի միջոցով կիրարկումը հազվադեպ է հանդիպում, անգամ առաջատար երկրներում տվյալ հարցը փորձագետների և քաղաքագետների ակտիվ քննարկումների վեճերի առարկա է հանդիսանում:

Այս կամ այն գործառույթների աութօուփինգի փոխանցման նպատակահարմարության գնահատման մեթոդները տարբեր են, այնուամենայնիվ, դրանք բոլորն էլ հիմնվում են փորձագիտական գնահատականների վրա: Բոլոր մեթոդների հիմնական դրույթները գնահատվում են հետևյալ գործոններով.

- արդյոք ք աութօուփինգը կրերի բյուջետային միջոցների խնայողություն,
- կնպաստի՞ արդյոք գործառույթների իրականացման որակի բարձրացմանը,
- առկա՞ է արդյոք շուկայում համապատասխան առաջարկ,
- հնարավո՞ր է արդյոք ձևակերպել հստակ պահանջներ գործառույթների իրականացման համար¹:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աութօուփինգը կարող է կիրառվել ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող երկրներում: Հիմնական վտանգը կապված է կոնկրետ գործընթացների և գործառույթների սահմանման, ճիշտ մեթոդաբանության ընտրության հետ:

Ներկայում աշխարհում գոյություն ունեն կորպորատիվ կառավարման բազմաթիվ մոդելներ: Ելնելով իրենց առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր երկիր ձևավորում է կորպորատիվ կառավարման իրեն բնորոշ մոդել: Սակայն կորպորատիվ կառավարման բոլոր ազգային համակարգերը հիմնված են չորս հիմնական մոդելների վրա, դրանք են՝ անգլո-ամերիկյանը, մայրցամաքայինը (եվրոպականը), ճապոնականը և ընտանեկանը: Կորպորատիվ կառավարման առաջին մոդելը բնորոշ է այնպիսի երկրներին, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, Նոր Զելանդիան և Ավստրալիան: Այդ երկրներում ընկերությունների կապիտալի սեփականատերերը հիմնականում ինստիտուցիոնալ և մասնավոր ներդրողներ են, որոնք նպատակ են հետապնդում փոխարժեքի տարբերությունների տատանումից կարճաժամկետ եկամուտներ ստանալ: Կորպորացիայի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կորպորատիվ կառավարման մոդելների համեմատական վերլուծությունը ներկայացված է *Աղյուսակ 1*-ում:

¹ <http://www.oecd-ilibrary.org> և <https://www.iaop.org/Content/19/165/1793/Default.aspx>

Աղյուսակ 1

Կորպորատիվ կառավարման մոդելների համեմատական վերլուծություն

Կորպորատիվ կառավարման մոդել	Առավելություններ	Թերություններ
Անգլո-ամերիկյան	Ֆոնդային շուկայի միջոցով բնակչության խնայողությունների մոբիլիզացման բարձր մակարդակ: Ներդրողների կողմնորոշում եկամուտների առավել բարձր մակարդակ ապահովող ոլորտների որոնման հարցում: Ընկերությունների նորարարական առումով բարձր մակարդակ: Բիզնեսի հիմնական նպատակ՝ ընկերության կապիտալացման աճ: Ընկերությունների տեղեկատվական թափանցիկության բարձր աստիճան:	Ներգրավված կապիտալի բարձր արժեք: Ֆոնդային շուկայում ակտիվների իրական արժեքի գգալի ինդեքսներում: Կառավարման և հսկողության գործառույթների հստակ տարանջատման բացակայություն:
Մայրցամաքային (եվրոպական)	Ներգրավվող կապիտալի ցածր արժեք: Ներդրողների երկարաժամկետ նպատակային կողմնորոշում: Ընկերությունների կայունության բարձր մակարդակ: Կառավարման և հսկողության գործառույթների հստակ տարանջատում: Աշխատողների մասնակցություն ընկերության կառավարման գործում:	Ֆոնդային շուկայի՝ որպես հսկողության արտաքին գործիքի, ոչ բավարար դերը: Կապիտալի համակենտրոնացման բարձր մակարդակը: «Փոքր» բաժնետերերի իրավունքների նկատմամբ պակաս ուշադրություն: Տեղեկատվական թափանցիկության ցածր մակարդակ: Ներդրումների իրականացման հետ կապված բարդություններ:

Կորպորատիվ կառավարման մոդել	Առավելություններ	Թերություններ
Ճապոնական	Ներգրավվող կապիտալի ցածր արժեք: Ներդրողների երկարաժամկետ նպատակային կողմնորոշում: Ընկերությունների կողմնորոշում դեպի բարձր մրցունակություն: Նորարարական ընկալումների առումով ընկերությունների բարձր մակարդակ: Ընկերությունների կայունության բարձր մակարդակ:	Ներդրումների իրականացման հետ կապված բարդություններ: Բանկային ֆինանսավորման բացարձակ գերիշխում և ներդրումների եկամտաբերության նկատմամբ անբավարար ուշադրություն: Տեղեկատվական թափանցիկության ցածր մակարդակ: «Փոքր» բաժնետերերի իրավունքների նկատմամբ պակաս ուշադրություն:
Ընտանեկան	Բիզնեսի նկատմամբ խիստ վերահսկողության իրականացում: Հիմնական սեփականատերերի ռիսկերի էական նվազեցում: Կապիտալի կուտակման հնարավորություն խոշոր նախագծերի իրականացման նպատակով: Ընկերության կայունության բարձր մակարդակ:	Գոյություն ունեցող սեփականության կառուցվածքի պահպանում: «Փոքր» բաժնետերերի իրավունքների նկատմամբ անբավարար ուշադրություն: Նորարարական ընկերությունների ցածր մակարդակ: Բիզնեսի տեղեկատվական թափանցիկության ցածր մակարդակ:

Աղբյուրը՝

*Дробышевская Л.Н., Саломатина Е.В., “Модели корпоративного управления: мировой опыт и российская практика”,
http://teoria-practica.ru/rus/files/arhiv_zhurnala/2011/5/ekonomika/drobyshevskaya-salomatina.pdf*

Աղյուսակ 2
 ՀՀ կառավարության համակարգում օժանդակ կառավարչական ծառայությունների խոշորացման, կենտրոնացման և արտաքին աղյուրից ձեռքբերման (outsourcing) հնարավորությունները

Օժանդակ կառավարչական ծառայությունների տեսակները	Առաջարկվում է				Հրահանգում
	(տվյալից հետո մասնաճյուղի կազմակերպում)	համապատասխանում է	համապատասխանում է	համապատասխանում է	
Ներքին առաջին	+	+	+	+	Ներքին առաջին գործառնությունների կենտրոնացումը մեկ պետական մարմնում կարող է նպաստել ծախսերի կրճատմանը և աշխատանքների որակի բարձրացմանը: Առաջարկվում է նաև հետագայում գործառնությունների իրավասացումն ապահովել մասնավոր հասկածի ներգրավմամբ:
Լրատվական ստորաբաժանում/ մատուցի քաղաքացիական	+	+			Այն նախարարությունները և գերատեսչությունները, որոնց լրատվական գործառնություններն իրականացվում են արտակարգ ստորաբաժանումներով (բաժին կամ վարչություն, մասնի ծառայություն և այլն) կազմից, պետք է կենտրոնացնել մեկ տեղում: Այն նախարարությունները և գերատեսչությունները, որոնց աշխատակազմերը լրատվական ստորաբաժանում չունեն և ունեն միայն մասնի քաղաքացիական, ով կազմակերպում և լրատվական գործառնություն այդ օրակն աշխատակազմի գործառնությունները և որանցից բխող գործընթացները, նույնպես պետք է կենտրոնացնել:
Հասարակական ենթակառուցվածքի կառավարում/ խորհրդարանի կառավարում/ արտաքին գործերի վարչարարում			+	+	Այն նախարարություններում և գերատեսչություններում, որտեղ գործում են պետական կառավարման մարմնի ղեկավարի խորհրդակցությունների վկայումքի ծառայությունները, պետք է փոխարինել հասարակական հիմունքներով մասնավոր հասկածից իրավիճակի մասնագետներով:
Սննդամթերքի կառավարման ստորաբաժանում			+	+	Այս ստորաբաժանումներն իրականացնում են այնպիսի աշխատանքներ, որոնց նախ խոշորացումը և ապա կենտրոնացումը (բոլորը մեկ տեղում) կարող է նվազեցնել կառավարչական աշխատանքների ծախսերը: Նման առաջարկության համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ անվտանգագրի կառավարման ստորաբաժանումներն իրականացնում են հասնունան (միօրինակ) աշխատանքներ:

Օճանդակ կառավարչական ծառայությունների տեսակները	Մտացարկվում է				Հիմնավորում
	Խոշորացնել (օրինակ՝ միավորել այլ ԵԼԵԽՍՏԵՆԿՆՈՒԹՅԱՆ համահման ծառայության հետ)	Կենտրոնացնել (բոլորը մեկ տեղում)	Ձեռք բերել մասնավոր հատվածից	Թողնել անփոփոխ	
Տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանում		+	+		Պետական կառավարման մարմիններում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններն օգտագործվում են 3-7%-ի չափով, որանց պահպանման և շահագործման ծախսերի տնտեսման համար անհրաժեշտ է այդ ծառայությունները կենտրոնացնել մեկ տեղում կամ դրանք ձեռք բերել մասնավորից:
Իրավաբանական ծառայություն	+	+			Այս ծառայությունների ստորաբաժանումները կազմակերպում են պետական կառավարման մարմինների գործառնությունների իրականացման հետ կապված, ինչպես նաև պետության շահերի պաշտպանության բնագավառի աշխատանքները: Որպես կանոն, պետական կառավարման մարմիններում իրավաբանական ծառայությունները մեծաթիվ են, և այդ կապում են երաժիշկներով, լեզուբանասերներով և այլ օգտագործվում, այդ պատճառով դրանք պետք է խոշորացվեն կամ էլ կենտրոնացվեն:
Հաշվապահություն/ ֆինանսական հաճախորդներ/ բյուջեի պլանավորում			+		Պետական կառավարման մարմիններում հաշվապահական գործառնություններն իրականացվում են աշխատակազմի ֆինանսատնտեսական ծառայությունների (բաժինների կամ ծառայությունների) կողմից: Աշխատակազմների ֆինանսատնտեսական բաժինը կամ վարչությունն իրականացնում է պետական կառավարման մարմինների հիմնական գործառնությունների բնորոշ մաս կազմող աշխատանքները: Մակայն նկատի ունենալով հաշվապահական և մյուս աշխատանքների ախտաբանական և համակարգչային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ ծառայությունների ոլորտում հաշվապահական և կորպորատիվական, ինչպես նաև առաջնությունների լայն ցանցի առկայությունը և դրանց մրցակցային բնույթը այդ ծառայությունները կարելի է ձեռք բերել մասնավորից:

Օճանալի կառավարչական ծառայությունների տեսակները	Առաջարկվում է		Հիմնավորում
	Վերականգնողական ծառայություններ	Նորարարական ծառայություններ	
Արտաքին կապեր	Վերականգնողական ծառայություններ	+	Պետական կառավարման մարմինների աշխատակազմերի արտաքին կապերի բաժինները կամ վարչությունները իրականացնում են միաժամանակ ինչպես օտարալեզու գրագրության, միջազգային փոքրի ոլորտային ուսումնասիրման, պետական կառավարման մարմինների և միջազգային կառույցների ներկայացուցչությունների միջև կապերի պայմանագրերի թարգմանության ապահովման աշխատանքներ, այնպես էլ ապահովում են պետական կառավարման մարմիններում շահագործվող տեղեկատվական համակարգերի, «Մալբերի» փաստաթղթաշրջանառության համակարգի, թվային աստղագրության ծրագրերի, ինտերնետային կապի և ներքին համակարգչային ցանցի անխախտ աշխատանքը: Ակտիվ ունենալով համացանցի լայն տարածվածությունը և պետական կառավարման յուրաքանչյուր մարմնում ցանկացած աշխատակցի՝ համացանցից օգտվելու հնարավորությունը, առաջարկվում է այդ աշխատանքները խոչընդոտել կամ կենտրոնացնել:
	Նորարարական ծառայություններ	+	
	Վերականգնողական ծառայություններ	+	
	Նորարարական ծառայություններ	+	
Տրանսպարտային ծառայություններ			
Մաքրության ապահովման ծառայություններ			

Աղյուսակ 2-ում բերված են ՀՀ կառավարության համակարգում օժանդակ կառավարչական ծառայությունների խոշորացման, կենտրոնացման և արտաքին աղբյուրից ձեռքբերման (*outsourcing*) հնարավորությունները: Պետական կառավարչական ծախսերի կրճատման հիմնական ճանապարհն այդ ծախսերի նվազեցումն է այն հաշվով, որ դրա հետևանքով չտուժեն այդ ծառայության օգտատերերը: Բացի այդ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կառավարման ծախսերի արդյունավետության բարձրացման կարելի է հասնել նաև, երբ մեծ թվով օժանդակ կառավարչական ծառայություններ կարող են խոշորացվել, կենտրոնացվել կամ էլ դրանք ձեռք բերել մասնավոր հատվածից: Մրանք, ըստ էության, պետական կառավարչական ծախսերի խնայման հիմնական ձևերն են: Այս դեպքում գործում է ինչպես մասշտաբի էֆեկտը (խոշորացման կամ կենտրոնացման դեպքերում), այնպես էլ այդ ծառայությունների մատուցման գործում մրցակցային միջավայրի ստեղծման հանգամանքը (երբ «պետական» ծառայությունը մատուցում է մասնավոր հատվածի տնտեսավարող սուբյեկտը կամ անհատը): Մա՛այն դեպքերում, երբ կառավարչական ծառայությունը մատուցում է մասնավորը:

Ինչպես երևում է *Աղյուսակ 2*-ի տվյալներից, շատ հաճախ դրանք կարող են լինել այլընտրանքներ պետական կառավարման մարմինների համար, ինչը լայն հնարավորություններ է բացում դրանք «էժանացնելու» և որակով ծառայություն մատուցելու կամ ստանալու գործում: Կարևոր է նկատել նաև, որ մասնավոր հատվածը հազեցած է բազմաթիվ բարձրորակ մասնագետներով և հնարավորություններով (տեխնիկական և համակարգչային տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և այլն), համապատասխան մասնագիտական փորձով և հմտություններով, որակական այլ բարձր հատկանիշներով, որոնք թույլ են տալիս մասնավոր հատվածի տնտեսավարող սուբյեկտների մեծ մասին ակտիվորեն մասնակցել օժանդակ կառավարչական ծառայությունների մատուցման գործին և հաջողությամբ մրցակցել պետական հատվածի ներկայացուցիչների հետ: Այսպիսով, ներկայում բոլոր հիմքերը կան պնդելու, որ ՀՀ-ում օժանդակ կառավարչական ծառայությունների մեծ մասը կարող է իրականացվել մասնավոր հատվածի կողմից, ինչը, մի կողմից, կակտիվացնի մասնավոր հատվածի գործողությունները, և

մյուս կողմից էլ ՀՀ կառավարությանը հնարավորություն կտա էժանացնել այդ ծառայությունները՝ օգտագործելով մասնավոր հատվածի մրցակցային հարուստ ներուժը: Պետք է նաև նկատել, որ կառավարության համակարգի օժանդակ ծառայությունների մեծ մասի անցումը մասնավոր հատվածին կարող է ուղեկցվել այդ ծառայությունների մատուցման միջանկյալ փուլերով (խոշորացում կամ կենտրոնացում), ինչն ի վերջո բերելու է դրանց փոխանցմանը մասնավորին: Այս անխուսափելի գործընթացը կառուցվում է այն ճշմարիտ պնդման վրա, որ մասնավոր հատվածին հատկացված յուրաքանչյուր դրամը պետությանը կապահովի ավելի մեծ արդյունք և դրամական հատուցում:

Այսպիսով, «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածում բարեփոխումների իրականացումը, ծախսերի օպտիմալացումը և հատկապես օժանդակ կառավարչական ծառայությունների ձեռքբերումը մասնավոր հատվածից այդ ոլորտում կստեղծի մրցակցային միջավայր՝ հասնելու իրական արդյունքների և պետական կառավարման մարմինների ծառայությունների արժեքի նվազեցման և դրանց մատուցման որակի բարձրացման:

Փետրվար, 2017թ.

**ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՁԵՆՔԲԵՐՈՒՄԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻՑ**

Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Կուրդինյան

Ամփոփագիր

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ձևավորված պետական ապարատը բնորոշվում է «թանկ» բառով: Բավական է նշել, որ ՀՀ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն 2014թ. 2000թ. համեմատ ավելացել է 581.5%-ով (2000թ. 71.5 մլրդ դրամից 2014թ. հասնելով 415.8 մլրդ դրամի) և ընդհանուր ՀՆԱ կազմում 2000թ. 7.5%-ից 2014թ. հասել է 9.5%-ի: Ըստ որում, այդ նույն ժամանակահատվածում, տնտեսության ՀՆԱ աճի նկատմամբ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ առաջանցիկ աճը կազմել է 176.8%, իսկ «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ի նկատմամբ՝ 167.7%:

Հեղինակների կարծիքով՝ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածում առաջացել է բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն, որի արդյունքում պետք է օպտիմալացվեն կառավարման գործառույթների իրականացմանն ուղղվող ծախսերը և հատկապես օժանդակ կառավարչական ծառայությունների ծախսերը: Նշված են ծառայությունների այդ տեսակների խոշորացման, մեկ մարմնի ձևերում կենտրոնացման, ինչպես նաև մասնավոր հատվածից դրանք ձեռք բերելու հնարավորությունները: Ոլորտում մրցակցային միջավայրի ստեղծումը կհանգեցնի օժանդակ կառավարչական ծառայությունների արժեքի նվազեցմանն ու դրանց մատուցման որակի բարձրացմանը:

ОПТИМИЗАЦИЯ ВСПОМОГАТЕЛЬНЫХ УПРАВЛЕНЧЕСКИХ УСЛУГ И ВОЗМОЖНОСТИ ИХ ПРЕДОСТАВЛЕНИЯ СО СТОРОНЫ ЧАСТНОГО СЕКТОРА

Ашот Маркосян, Григор Кургиян

Резюме

Исследования показывают, что сформировавшийся в настоящее время государственный аппарат можно охарактеризовать как «дорогой». Достаточно отметить, что структурная составляющая «Органы государственного управления» в ВВП в 2014г. по сравнению с 2000г. выросла на 581.5% (её величина в 2014г. составила 415.8 млрд. драмов по сравнению с 71.5 млрд. драмов 2000г.), и в общем объёме ВВП в 2014г. составила 9.5% по сравнению с 7.5% 2000г. При этом за тот же период времени прогрессивный рост структурной составляющей «Органы государственного управления» по сравнению с ростом ВВП составил 176.8%, а по сравнению с разделом «Нефинансовые организации (корпорации)» – 167.7%.

По мнению авторов, необходимо реформировать структурную составляющую «Органы государственного управления», в результате чего должны быть оптимизированы расходы, предназначенные для выполнения управленческих функций и, в частности, предоставления вспомогательных управленческих услуг. Авторами выявлены возможности укрупнения таких услуг, централизации в руках единого органа, а также приобретения услуг у частных лиц (организаций). Создание конкурентной среды в данной отрасли приведет к снижению стоимости вспомогательных управленческих услуг и повышению их качества.

OPTIMIZATION OF AUXILIARY MANAGERIAL SERVICES AND OF THEIR PROCUREMENT FROM THE PRIVATE SECTOR

Ashot Markosyan, Grigor Kurghinyan

Resume

Studies show that state apparatus in the Republic of Armenia at the moment can be described as “expensive”. It is sufficient to note that the structural component of the “Bodies of state administration” in GDP in 2014 compared to 2000 increased by 581.5% (its value in 2014 amounted to 415.8 billion drams as compared to 71.5 billion drams in 2000), and in total GDP in 2014 it amounted to 9.5% compared to 7.5% in 2000. At the same time, over the same time period, a progressive increase in the structural component of the “Bodies of state administration” in comparison with the GDP growth amounted to 176.8%, while compared with the section “Non-financial organizations (corporations)” it increased on 167.7%.

In the opinion of authors it is essential to reform the structural component “Bodies of state administration” as a result of which the costs should be optimized for performing administrative functions and, in particular, the provision of auxiliary managerial services. The authors identified the possibilities of consolidation of such services, and their centralization in the hands of a single body, as well as procurement of services from private entities (companies). Creating a competitive environment in the industry will lead to reduction in the costs of auxiliary management services and improvement of their quality.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1914-1918ԹԹ.

Դերենիկ Մելիքեան՝

Բանալի բառեր՝ իրանահայութիւն, Ատրպատականի հայոց թեմ, գաղթականութիւն, սրբազան Մելիք-Թանգեան, ժողովրդանւէր ծառայութիւն, ազգանւէր, անշահասէր եւ բազմարդիւն գործունէութիւն:

Իրանահայութեան ամենահինատուրց թեմի՝ Ատրպատականի հայոց թեմակալ 20-րդ առաջնորդն է եղել երջանկայիշատակ Տ.Ներսէս արք. Մելիք-Թանգեանը: Նա 36 տարի հովւել է Ատրպատականի թեմը, որի հետ էլ դիմագրաւել է համաշխարհային երկու պատերազմների արհաւրալից ժամանակաշրջանները:

1866 թւականին Չանգեզուր գաւառի Բոնակոթ գիւղում ծնւած Մելիք-Թանգեանը (աւագանի անունով՝ Նիկողայոս) 20 տարեկան հասակում յաջողութեամբ աւարտել է Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանի միջնակարգ եւ լսարանական բաժինները: Որպէս ուսուցիչ պաշտօնավարել է Բաքւի «Հայոց Մարդասիրական Ընկերութեան» դպրոցում (1894թ.), այնուհետեւ 1896 թւականին, երբ ցարական կառավարութիւնը փակում է հայոց դպրոցները, Մելիք-Թանգեանն անցնում է Պետերբուրգ եւ չորս տարի ուսանում համալսարանի իրաւաբանական բաժնում՝ ստանալով աւարտական վկայական 1900թ.:

Վերադառնալով Էջմիածին՝ կարգում է սարկաւազ, իսկ յաջորդ տարի (1901) ձեռնադրում է վարդապետ Ներսէս անունով: Առաջին անգամ վանահայր է լինում Տաթեւի վանքում, ապա նշանակում է Սիւնեաց թեմի առաջնորդական փոխանորդ: 1906 թւին նրան հրաւիրում են Էջմիածին ու նշանակում Հայրապետական դիւանապետ: 1912 թւին ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ 5-րդի կարգադրութեամբ

^{*} «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր:

հայրապետական յատուկ կոնդակով նշանակում է Ատրպատականի թեմի առաջնորդ, ուր մնում է մինչեւ իր մահը (1948թ.)¹:

Հարկ է նշել, որ նախքան Թաւրիզ մեկնելը Ներսէս վարդապետը վեհափառ հայրապետի հաւանութեամբ անցնում է Թիֆլիս, Բաքու եւ Ռոստով, կատարում է հանգանակութիւն, որով հնարաւոր է դառնում Ատրպատականի հայոց առաջնորդարանի ֆինանսական գործունէութիւնը դիւրացնել: Վերադառնալով Թաւրիզ եւ ստանձնելով պաշտօնը՝ նա յատուկ ուշադրութիւն է դարձնում դպրոցական գործերի վրայ: Գիւղերում նոր դպրոցներ բացելու հետ միաժամանակ կանոնաւորում է Թաւրիզի ազգային դպրոցների հասոյթները, ինչպէսեւ հասարակական ու մշակութային ամէն տեսակ ձեռնարկներին աջակից եւ հովանաւոր է հանդիսանում:

Առանձնայատուկ այցելութեամբ Մելիք-Թանգեան վարդապետը 1913թ. ամռանը ժամանում է Ատրպատականի հայոց թեմի երկու պատմական վանքերը՝ Ս. Թադէոս Առաքեալի հոչակաւոր վանքը (*Մակու*) եւ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը (*Դարաշամբ, Հին Ջուղայի դիմացը, Արաքսի պարսկական ափ*): Թեմական ու հասարակական կեանքում մեծագոյն եռանդ դրսեւորելով՝ իբրեւ «*շինարար հովիւ*» վերանորոգում է Թաւրիզի հայոց եկեղեցիների զանգակատները: Նրա օրով Թաւրիզում կառուցւում է 1914-15թթ. «*Արամեան*» թատրոնի գեղեցիկ շէնքը՝ յատուկ ծրագրով... «*Կարճ ժամանակի մէջ իր խոհեմ գործելակերպով նա ժողովրդական լայն համակրանքի եւ յարգանքի է արժանանում, որի արդիւնքը եղաւ այն, որ Ատրպատականի հայոց Թեմական-պատգամաւորական ժողովը դիմում է վեհափառ հայրապետին՝ խնդրելով, որ Ներսէս վարդապետին ձեռնադրէ եպիսկոպոս*»²:

Վեհափառ հայրապետի ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը ձեռնադրւում է եպիսկոպոս եւ 1914թ. սեպտեմբերին վերադառնում է Թաւրիզ՝ թեմի պատասխանատու պարտականութիւններին անցնելու համար:

Ներսէս արք. Մելիք-Թանգեանը եւ հայ գաղթականութիւնը. 1914-17թթ. Ատրպատականի հայութեան գաղթականների կացութեան մա-

¹ «Պատմութիւն Ատրպատականի Հայոց Թեմական դպրոցի», 1981թ., Թեհրան, տպ. «Ա.Ի.Բ», էջ 20:

² «Արտագ» տեղեկատու, Դ տարի, հեղ. Է. Յ., թիւ 5-6, սեպտ.-հոկտ. 2006, էջ 20:

սին հարուստ փաստեր են արձանագրւած «Նախիջեւան-Շարուր-Դարալագեազ-Սալմաստի Եղբայրական օգնութեան կոմիտէի» տեղեկագրում, որտեղ մասնաւորապէս ակնյայտ են դառնում Ատրպատականի Հայոց թեմակալ առաջնորդ տ. Ներսէս ս. եպսկ. Մելիք-Թանգեանի ամնացորդ ջանքերը գաղթականներին պատսպարել-օգնելու գործում: «1914թ. դեկտեմբերին,- նշւած է տեղեկագրում,- Կովկասեան ճակատի Սարիղամիշի դէպքերի պատճառով Ատրպատականի զօրամասին կարգադրուում է ընդհանուր նահանջ: Նահանջը տեղի է ունենում մի օրւայ ընթացքում եւ քրիստոնէայ ազգաբնակչութեան առաջարկւում է գաղթել զօրքի հետ միասին դէպի Ջուլֆա: Դարերից ի վեր խաղաղ եւ ճոխ ապրած այդտեղի քրիստոնէայ տարրը ստիպւած թողնում է իւր կայքն ու հարստութիւնը, սուկալի տանջանքներով, ճանապարհին մեծ քանակութեամբ՝ բուքին, ձիւնին, ցելխին ու սովին զոհեր տալով՝ 6-7 օրւայ ընթացքում հասնում է Ջուլֆա: Այդտեղ կուտակւում են մօտ 44000 գաղթականներ, որոնցից 24000-ը հայեր, Թաւրիզից՝ 3000, Խոյից՝ 2000, Սալմաստից՝ 15000, Ուրմիայից՝ 4000, իսկ մնացած 20000-ը ասորի եւ այլ քրիստոնէաներ, դարձեալ նոյն վայրերից»¹: Գաղթի հէնց սկզբի օրից թէ՛ ռուսական, թէ՛ կաթոլիկ, թէ՛ բողոքական եւ թէ՛ ասորիների հոգեւորականներն ու գործիչները, թողնելով իրենց ժողովուրդը դժխային տանջանքների մէջ անտէր, անցնում են Ռուսաստանի խորքերը: Մնում է միայն Ատրպատականի Հայոց թեմակալ առաջնորդ տ. Ներսէս եպսկ. Մելիք-Թանգեանը, որն իր վրայ է վերցնում, առանց դաւանանքի խտրութեան, գաղթականութեան բոլոր կարիքների հոգացողութիւնը: «...Մի քանի օր անց նրան օգնութեան է գալիս Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ա.Շարաֆեանը, քիչ յետոյ Բազւայ գաղթականական ներկայացուցիչ Գ Պապեանը, Թիֆլիսի Պարսկահայ

¹ «Ասորիների ջարդերն Իրանի թիրաքաբնակ վայրերում...» աշխատութեան մէջ Անահիտ Խոսրոեւան այդ մասին մատնանշել է. «1914թ. հոկտ.-ի 3-ին Ուրմիայում Ռուսաստանի փոխհիւպատոս Վեդինսկին տեղի նահանգապետի հետ այցելում է քրդերի, թուրքերի եւ պարսկական խուժանի կողմից աւերած ասորական Անգար, Ալւաչ եւ այլ գիւղեր»: «Ամենուրեք,- գրում է նա,- առկայ են ջիհադի արդիւնքները: Անգար գիւղում եւ տեսայ ասորիների հրկիզւած դիակներ, որոնց փորերը խոցւած էին մեծ, սրածայր ցցերով: Ասորիների շինութիւնները հրդեհւած եւ աւերած են: Հարեւան գիւղերի հրդեհը դեռ շարունակւում է: Ասորիների ընտանիքները հաւաքել էին քաղաքի մօտակայ դաշտերում»: 1914թ. հոկտ.-ի 24-ին Վեդինսկին հեռագրում էր հետեւեալը. «Փախստականների հոսքը շարունակւում է: Լուրեր են շրջում սպասող նոր սպանդի մասին»: Մէկ օր յետոյ նա նշում էր, որ Թուրքիայից Իրան է անցել աւելի քան 600 փախստական ասորի»:

կոմիտէի ներկայացուցիչ Ա. Յարութիւնեանը եւ յետոյ Բազույ Հայոց Կուլտուրական Միութեան բժշկական խումբը՝ բժ. Ա. Աւետիսեանի ղեկավարութեամբ: ... Գաղթականութեան մեծ մասը անցնում է Ռուսաստանի զանազան քաղաքները, իսկ 15000-ի չափ՝ Երեւանի եւ Նախիջեւանի ու Շարուր-Դարալագեազի գաւառները: Յունւարի 10-ի վերջին էտապի հետ տեղափոխուում է տ. Ներսէս սրբազանը իր օգնականներով՝ Նախիջեւան»¹:

1915թ. Թիֆլիսում գտնուելու օրերին Ներսէս Մելիք-Թանգեանը հանդիպումներ է ունեցել Սիմոն Վրացեանի հետ, որը հետեւեալ վկայութիւնն է թողել այդ հանդիպումների մասին. «... Ես նրան հանդիպեցի 1915-ին, Թիֆլիսում, այլեւս իբրեւ եպիսկոպոս եւ Ատրպատականի թեմի առաջնորդ: Եկել էր Թիֆլիս Ատրպատականի թեմի համար պաշտպանութիւն խնդրելու: Կարապետ եպսկ. տ. Մկրտչեանից յետոյ, որ գիտուն եւ գաղափարական հոգեւորական էր, Ատրպատականի թեմի առաջնորդութեան պատասխանատու պաշտօնը նրան էր յանձնուած: Եվ նա բացառիկ անձնւորութեամբ եւ վարչական հմտութեամբ ծառայում էր իր հօտին: Նրա օրօք, Ատրպատականի թեմը մեծ առաջադիմութեան մէջ էր, երբ վրայ հասան մեծ պատերազմը եւ 1914թ. Դեկտեմբերեան աղէտաւոր նահանջը: Ուրմիոյ եւ Սալմաստի հայութիւնը ամբողջապէս տեղահան եղան: Թաւրիզեցիներից էլ ով հնարուն էր՝ անցաւ Կովկաս: Ներսէս սրբազանը աղէտահար ժողովրդի մէջ էր՝ նրա հետ բաժանելով ամէն նեղութիւն: Նրա ջանքերով կազմուեցին նպաստամատոյց մարմիններ, նիւթական միջոցներ հայթայթեցին եւ թէ՛ գաղթի ճանապարհին, եւ թէ՛ գաղթավայրերում ուտելիք, հագուստ եւ հաց տրուեց կարիքաւորներին: Այժմ նա Թիֆլիսում աշխատում էր պետական նպաստ ապահովել եւ հասարակական կազմակերպութիւնների աջակցութիւնը կանոնաւորել... Ներսէս սրբազանը վերադարձաւ՝ իր հետ տանելով ոչ միայն խոստում, այլեւ շօշափելի օգնութիւն: Վերադարձաւ եւ իր հօտի հետ ճաշակեց թրքական արշաւանքի բոլոր դառնութիւնները: Իր աչքերով տեսաւ Ատրպատականի թեմի քայքայումը, ապա, դաշնակիցների յաղթանակից յետոյ, Հայաստանի Հանրապետութեան ծնունդը, որի հանդէպ անսահման սէր ու պաշտամունք ունէր»²:

¹ ՀԱՍ, ֆ. 50, ց. 1, գ. 127, թթ. 108-115:

² «Յուշամատեան տ. Ներսէս սրբ. Մելիք-Թանգեանի», Թեհրան, «Ալիք» տպ., էջ 42:

Գաղթականների անհրաժեշտ պետքերը հոգալու համար, բացի Թիֆլիսից ստացւած օգնութիւնը, տ. Ներսէս եպսկ. Մելիք-Թանգեանը ստիպւած է լինում նաև շրջել Ատրպատականի բոլոր գիւղերը եւ կոչ անել բոլոր տեղացիներին իրենց ունեցածը հնարաւորինս կիսելու գաղթականների հետ: Այդ նոյն նպատակով նա անցնում է նաեւ Սիսիանի շրջանի հայկական գիւղերը, որտեղից 1000 ռուբլու չափ փող եւ ալիւր է հանգանակում:

1915–ի «ապրիլի վերջերին Սալմաստի 2–րդ գրաւումից յետոյ, Ներսէս եպ.–ը Կոմիտէի անդամների հետ անցաւ Խոյ, Սալմաստ եւ Ուրմիա, դրութեան եւ պայմանների հետ ծանօթանալու, որպէսզի գաղթականութեան վերադարձը կազմակերպուի: Մոռացւեց յիշելու, որ Սալմաստի առաջին գրաւման ժամանակ Խոյի փոխհիւպատոս Վեդինսկին անցնում է Խոյից Սալմաստի շրջանը՝ համաձայն Ներսէս եպ.–ի ստացած հեռագրի, եւ այնտեղից հաղորդում է, որ ինքը եկել է Սալմաստ, արհաւիրքի ժամանակ մնացած քրիստոնէաներից սպանւածների դիակները թաղելու, որոնց դուրս է բերում ջրի հորերից եւ փլատակների տակից: Գրում է նաեւ, որ Կոմիտէա է կազմում իւր նախագահութեամբ եւ ամբարել է տալիս պարսիկների մօտ գտնւած քրիստոնէաներից կողոպտած իրերը եւ նկարագրում գիւղերի աւերածութեան եւ կարիքների մասին:

...Մայիսի կէսերին շրջող խումբը հասնում է Խոյ, ուր ժողովուրդը միւս շրջանների համեմատութեամբ այնքան էլ տուժած չի լինում, գտնւելով գաղթականական վերջին կէտում եւ սահմանագլխին մօտիկ վայրում, ժողովուրդը հնարաւորութիւն է ունեցած լինում քիչ գրկողութեամբ սահմանը անցնել, տանելով տնային իրերի մի մասը, նաեւ անասուններ, իսկ մնացածը հարեւան պարսիկներին պահ տալ: Այդտեղ կազմում են գիւղական խառը յանձնաժողովներ՝ Ռուսաց հիւպատոսի եւ պարսիկ դատաւորի հսկողութեամբ, որ պահ տրւած իրերը պարսիկներից համերաշխութեամբ յետ ստացւեն: ...Ատրպատականի գօրամասի հրամանատարի մօտ ժողով են կայացնում եւ ընտրում խառը Կոմիտէա, հրամանատարի եւ պարսիկ դատաւորի հսկողութեամբ, որոնք կոչ են անում պարսիկ ազգաբնակչութեան իրենց կամքով վերադարձնել կողոպտած իրերը...

...Ուրմիայի շրջանը գտնում են աւելի վատթար դրութեան մէջ: Այնտեղի ամերիկեան միսիան, տաճիկների տիրապետութեան օրօք,

պատասպարելիս է եղել 16.000 ասորիներ եւ 300 հայեր, որոնք կերակրուել են միսիայի միջոցներով: Չանագան վայրերում պարսիկ խաների մօտ թաքնուած են եղել 2000-ի չափ հայեր եւս: Տաճիկների բարբարոսութիւններից սպանուել են 1000-ի չափ ասորիներ եւ 25 հայեր, եւ տարափոխիկ հիւանդութիւններից եւ բժաւոր տիֆից մեռել են 4000 ասորի եւ 20 հայ: Այդ շրջանում էլ նոյնպիսի Կոմիսիա է կազմակերպուում՝ տնտեսութիւնը վերականգնեցնելու ծրագրով»¹:

Գաղթականներին վերադարձնելով՝ Կոմիտէն իր կազմով 1915-ի յուլիսի 1-ին տեղափոխուում է Սալմաստի շրջան՝ կենտրոն ընտրելով Հաֆթուան հայկական գիւղը:

1915թ. յուլիսի վերջերին սկսուում է Վանի գաղթը: Փախստականները երկու գծերով (Խօշաբի եւ Սարայի) գալիս են Սալմաստ եւ Խոյ, որոնցից մօտ 6500 հոգի Վանի, Շատախի, Մոկսի, Կարճկանի եւ Կառկարի շրջաններից, գալիս են Չուխա-գադուկից, Բաշկալէից մինչեւ Ադրակի Ս. Բարդուղիմէոս Առաքեալի վանքը, տեղաւորուում գետերի ափերին, իսկ 2500 հոգի Սարա-կոթուր գծով գալիս է դէպի Խոյ: Որոշուում է ունեցած գումարներով անմիջապէս օգնութեան հասնել թէ՛ Ադրակ եւ թէ՛ Խոյ²:

Այստեղ էլ տ. Ներսէս եպս. Մելիք-Թանգեանը Թաւրիզից իսկոյն Սալմաստ է գնում գաղթականութեանը պարենաւորելու եւ պատասպարելու համար: Եվ երեւի Վասպուրականի բովանդակ հայութեան մեծ եւ աղետալի գաղթը թեթեւացնելու անմնացորդ գոհողութիւնների արդիւնքում էր, որ հետագային (1917թ.) Գեորգ 5-րդ կաթողիկոսը տ. Ներսէս եպիսկոպոսին նշանակուում է *Առաջնորդ Հայոց Վասպուրականի*: Իսկ աւելի ուշ Ատրպատականի Հայոց Թեմական-պատգամաւորական ժողովի առաջարկով վեհ. կաթողիկոսը տ. Ներսէս եպիսկոպոսին շնորհում է արքութեան տիտղոս նրա ազգանէր, անշահասէր եւ բազմարդիւն գործունէութեան համար³:

Մելիք-Թանգեանի Սալմաստում ծավալած գործողութեան մասին Անդրէ տ. Օհանեանը (Ամուրեան) հետեւեալ վկայութիւնն է թողել. «... Ա. աշխարհամարտին, 1915-6թթ. սրբազանը մեծ մասամբ մնացել էր Սալ-

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

³ «Յեղափոխական Ալբոմ», Լիբանան, Գ շարք, թիւ 27, էջ 76-77:

մաստ, ուր կամաւորական բանակները հանդիպումներ էին ունեցել, եւ սրբազանը մտերիմ էր բոլոր խմբապետերի հետ, մասնաւորապէս՝ Անդրանիկի (որն հետագային, 1920-ին, սրբազանի դիմումի վրայ, Ամերիկայից 20000 դոլար ուղարկեց Ատրպատականի հայութեան կարիքների համար): Սրբազանը իսկական ժողովրդի մարդ էր, արտակարգ հայրենասիրութեամբ տոգորւած: ...Սրբազան Մելիք-Թանգեանը կարծես ստեղծուած էր գաղթականութեանը հոգ տանելու համար»¹:

Բնութագրելով Ներսէս արք. Մելիք-Թանգեանի՝ հայ փախստականներին օգնելուն ուղղուած գործունեութիւնը՝ Թեհրանում հրատարակող «Դաֆֆի» տարեգիրքը նշում է. «...Բաւական է յիշատակել 1915-1916-ին Արեւմտեան Հայաստանից Ատրպատական ապաստանած բազմահազար գաղթականների, 1918-ին տաճիկ բանակների ներխուժման հետեւանքով Ատրպատականի հայաշատ գաւառներից գաղթած զիւղացիների եւ 1921-ին Հայաստանից Թաւրիզ անցած աւելի քան տասն հազար տարագիրների պաշտպանութեան ու խնամատարութեան գործին բերած նրա հայրական գործվագութիւնը, Երկրորդ աշխարհամարտի ընթացքին Ատրպատականի հայ համայնքին սպառնացող վտանգայից փորձութիւններին դիմագրաւելու իր ճիգերն ու զոհողութիւններն, պատկերացնելու համար այն փոթորկալի կեանքը, որ ունեցաւ Մելիք-Թանգեան սրբազանը, առընթեր իր թեմի ազգային-եկեղեցական ու կրթական մարզերին վերաբերող ընթացիկ աշխատանքներին»²:

Հետագա տարիներին հայ գաղթականութեանը ցուցադրուած օգնութեան մասին խօսելով՝ պատմաբան Հայկ Աճեմեանը նկարագրում է 1918 թականին Ատրպատական ներխուժած թուրք բանակի հակահայկական յետին նպատակների մասին, որտեղ եւս ակնբախ է դառնում Ներսէս արք. Մելիք-Թանգեանի խոհեմ, զգոյշ եւ հեռատես քաղաքականութիւնը:

Եվ այսպէս, ըստ Հայկ Աճեմեանի, «Ներսէս արքեպիսկոպոսը այդ յուսահատ օրերին, իր դիրքի եւ ազդեցութեան շնորհիւ, կարողացաւ այնպիսի մի քաղաքականութիւն վարել թէ՛ տաճիկների եւ թէ՛ Պարսից կառավարութեան հետ, որ Թաւրիզի հայ գաղութը փրկուեց իսկական կոտորածից»³:

¹ «Դաֆֆի» տարեգիրք, 1969 թ., Ա տարի, Թեհրան, էջ 110 եւ 114:

² Նոյն տեղում, էջ 546:

³ «Ներսէս արք. Մելիք Թանգեան», նշլ. աշխ.:

Յիշատակութեան արժանի պատմական խոշոր փաստ է նաև այն, որ Պարսից պետական բարձրաստիճան պաշտօնեաները եւ ժողովրդական լայն խաւերը մեծ պաշտպանութիւն ցուցաբերեցին հայերին: Թէ՛ Պարսից պետութիւնը եւ թէ՛ ժողովուրդը այնքան ջերմ ու անկեղծ կերպով պաշտպան հանդիսացան հայերին, որ տաճիկները չյաջողեցին հասնել իրենց նպատակին¹:

Համաշխարհային Առաջին պատերազմի զինադադարից յետոյ, տաճիկները հեռանում են Թաւրիզից, սակայն Մակլի, Ս.Թաղէի գիւղում մնացած հայերը, իրենց հարեւան պարսիկների մօտ ապաստան գտած՝ սպասում են իրենց հայրենակիցների օգնութեանը: Այստեղ եւս առաջնորդարանը՝ Մելիք-Թանգեան սրբազանի գլխատրութեամբ, չի ուշանում օգնութեան հասնել Մակլի, Խոյի եւ Ս. Թաղէի վանքի խլեակներին փրկելու ստոյգ մահից: Իրանի պետական պատասխանատուների օգնութեամբ եւ Մելիք-Թանգեան սրբազանի հետապնդումների արդիւնքում, Թաւրիզ են փոխադրուում Խոյի կոտորածից ազատւած կանայք եւ երեխաները, բոլոր տղամարդիկ²:

Ներսէս արք. Մելիք-Թանգեանի ժողովրդանւեր ծառայութիւնների մեծագոյն արգասիքը կարող է լինել արդէն վատառողջ Գէորգ 5-րդ կաթողիկոսին փոխարինելը, որը սակայն սովետական քաղաքական ճղճիմ չարաշահումների բերումով իրականութիւն չդարձաւ, չնայած նրան, որ նրա ժողովրդականութիւնն ու հեղինակութիւնը բարձրակէտին էին գտնուում թէ՛ Հայաստանի հասարակայնութեան եւ թէ՛ յատկապէս հոգեւոր եկեղեցականութեան շրջանակներում: Ահա թէ ինչ ենք կարդում պրոֆ. Վ.Ն. Ղազարեցեանի «Փաստաթղթերի ժողովածու»-ում տւեալ իրողութեան մասին. *«Դաշնակցութեան թուլացմանը կարող էր օժանդակել նրան մեծապէս օգնող՝ Հայոց եկեղեցու Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս արք. Մելիք-Թանգեանի գահընկեցութիւնը: Խնդիրը կարելոր էր նաև այլ տեսակէտից: Բանն այն է, որ Մելիք-Թանգեանը մեծ հեղինակութիւն էր վայելում հաւատացեալների ու հոգեւորականութեան միջավայրում. դրա շնորհիւ նա նոր կաթողիկոսի հնարաւոր թեկնածուն կարող էր լինել արդէն տարեց Գէորգ 5-րդի մահուան դէպքում: Մելիք-Թանգեանի յաղթանակով Հայոց*

¹ «Արտագ» ամսագիր, Թաւրիզ, Դ. տարի, թիւ 5-6, սեպտ.-հոկտ., 2006 թ., էջ 22:

² Նոյն տեղում:

Առաքելական եկեղեցու նստավայրը կարող էր փոխադրուել արտասահման. դա դէմ էր խորհրդային իշխանութեան շահերին ու քաղաքականութեանը: Նկատենք, որ Էջմիածինը լաւագոյնս օգտագործուում էր յօգուտ խորհրդային երկրի՝ նրա արտաքին քաղաքականութեան բնագաւառում: Արք. Մելիք-Թանգեանի հարցը լուծելու փորձ էր Գիւտ եպիսկոպոսին՝ Թաւրիզ գործուղելը:

Միւս փորձի անձը դարձաւ Արսէն արք. Ղըլտճեանը: 1928 թին նա Ֆրանսիայից ժամանեց Մոսկւա եւ Պետքաղվարչութիւնում ընդունեց արտաքին բաժնի արեւելեան բաժանմունքի պետ Աղաբէկովի կողմից, որը նրան հաւաքագրեց որպէս գործակալ (Գ / 58 համարով)՝ ամսական 200 դոլար վճարով: Նա մեկնեց Սպահան՝ Հնդկա-պարսկական թեմի առաջնորդի պաշտօնը զբաղեցնելու համար, իսկ Սպահանի Մեսրոպ եպիսկոպոսը նշանակուելու էր Թաւրիզում: Սակայն Մելիք-Թանգեանի դիրքերը բաւական ամուր էին, եւ նրա գահընկեցութեանն ուղղւած ջանքերն առայժմ դրական արդիւնք չէին տալիս եւ հետագայում էլ չտուեցին»²:

Եւ այսպէս, իր մահից կարճ ժամանակ առաջ, Մելիք-Թանգեան սրբազանը շատ յուզիչ մի կտակ է թելադրել, որի ներքոյ ինքն էլ իր դողողոջ ձեռքերով աւելացրել է մի քանի բառ: Ըստ որոշ վկայութիւնների՝ կտակը գտնուում է Թեհրանում, եւ, իրազեկների պատմածով, սրբազանն իր այդ կտակում իմիջիայլոց ասել է. «Աշխարհ է եկել դատարկ ձեռքերով եւ այդպէս էլ մեկնում է. ոչ պարտք ունի, ոչ առնելիք»: Եվ իբրեւ վերջին ցանկութիւն խնդրել է իրեն չթաղել եկեղեցու բակում կամ զանգակատան ներքեւ, այլ իր մարմինը պէտք է հանգչի գերեզմանատնում, իր ժողովրդի քովն ի վեր...³:

¹ Գիւտ եպիսկոպոս տէր Ղազարեան, ձերբակալուել է այն բանից յետոյ, երբ Հայաստանի ղեկավարութիւնը կազմակերպել է Էջմիածնի կաթողիկոսութեան կողմից նրա գործուղումը Թաւրիզ՝ Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս Մելիք-Թանգեանին համոզելու հրաժարական տալ: Գիւտը, սակայն, մերժում է ստացել եւ իր անյաջողութեան համար յայտնուել է Չեկայի նկուղում: 1926թ. յուլիսի 18-ի զեկուցագրում, հասցեագրւած Գեորգ 5-րդ կաթողիկոսին, Խորեն արք. Մուրադբէկեանը յայտնում էր հանրապետութեան Պետքաղվարչութեան նախագահ Ս.Մելիք-Յովսէփեանի հետ ունեցած հանդիպման եւ դրա շնորհիւ Գիւտ եպիսկոպոսի ազատ արձակմանը հասնելու մասին (տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, 1921-1938, Եր., 1994, էջ 116):

² Վ.Ն. Ղազարեան, «23 Դաշնակցութիւնը ԽՍՀՄ արտակարգ յանձնաժողովի եւ պետական քաղաքական վարչութեան գաղտընթերցումներում (1920-ական թւականներ)», փաստաթղթերի ժողովածու, Երեւան, Պատմութեան ինստիտուտ, 2016թ., էջ 11-12:

³ Գեորգեան Կարօ, «Ամենուն տարեգիրքը», 1958թ., Ե. տարի, Բեյրութ, էջ 439:

Մեծութիւններ կան, որոնց թողած բացը հնարաւոր չէ լցնել: Այդպիսի մեծութիւն էր «Մեր սրբազանը», «Իրանահայոց Հայրիկը», Ատրպատականի Հայոց անվեհեր ու անձնուրաց առաջնորդը, որն իր բովանդակ կեանքը նւիրեց հայ ժողովրդին եւ ցանկացաւ իր յաւիտենական հանգիստը գտնել հասարակաց հանգստարանում:

Երախտագէտ ժողովուրդը կատարեց իր սիրելի առաջնորդի վերջին ցանկութիւնը եւ նրա շիրմի վրայ արձանագրեց՝ «*Աստ հանգչի Սիւնեցի տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան, արիւնտ օրերի ազգանւէր առաջնորդ եւ պաշտպան հայոց Ատրպատականի. 1866-1948*»¹:

Փետրվար, 2017թ.

**ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԵՐՍԷՍ
ԱՐՔ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ 1914-1918ԹԹ.**

Դերենիկ Մելիքեան

Ամփոփագիր

Թէ՛ 1914թ. Ա. աշխարհամարտի եւ թէ՛ դրան անմիջապէս յաջորդող Հայոց ցեղասպանութեան հետեւանքով բազմահազար հայ գաղթականներ Արեւմտեան Հայաստանից ապաստանեցին հարեւան Պարսկաստանի Ատրպատական նահանգում:

Յօդուածում փորձ է արւել կարեւորել գաղթականութեան անվտանգութեանն ու դրանում մեծ դեր վերապահւած՝ Ատրպատականի Հայոց թեմակալ առաջնորդ Ներսէս արք. Մելիք-Թանգեանի վիթխարի գործունէութիւնը ոչ միայն որպէս հոգեւոր հովիւ, այլեւ մանաւանդ որպէս հասարակական-քաղաքական առաջնորդի, որին յաջողեց դժնդակ ու բարդագոյն պայմանները փոխարինել հայ գաղթական զանգւածների համեմատական անվտանգութեամբ:

¹ «Ընթացիկ» տարեգիրք, Ա տարի, 1969թ., Թեհրան, էջ 546-47:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ ГЛАВЫ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ АТРОПАТЕНА
АРХИЕПИСКОПА НЕРСЕСА МЕЛИК-ТАНГЯНА В 1914-1918ГГ.**

Дереник Меликян

Резюме

Как вследствие Первой мировой войны 1914г., так и из-за последовавшего за ней Геноцида армян, многотысячные армянские беженцы спаслись из Западной Армении в сопредельной Персии, в области Атропатена.

В статье предпринята попытка выделить и отметить важность масштабной деятельности предводителя Армянской епархии Атропатены архиепископа Нерсеса Мелик-Тангяна по обеспечению безопасности беженцев. Он проявил себя не только как духовный пастырь, но и как незаурядный общественно-политический лидер, который смог обратить тяжелейшие и труднейшие условия беженства в относительно безопасные для армянских беженцев.

**THE ACTIVITIES OF THE ARMENIAN PRELATE OF AZERBAIJAN
ARCHBISHOP NERSES MELIK TANGIAN IN 1914-1918**

Derenik Melikian

Resume

During the World War I and in the aftermath of The Armenian Genocide, thousands of the Armenian refugees from Western Armenia took shelter in the neighboring country Iran, in Azerbaijan province.

In this paper the stress is put on the great efforts done by the Armenian prelate of Azerbaijan province, Archbishop Nerses Melik Tangian, who managed to turn the created horrible circumstances into a safe and secure condition for the Armenian refugees.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱԸ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱԸ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱԸ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Syllfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 23.03.2017թ.
Թիվ 2 (72), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տպարանում